Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ԱՌԿԱ ԲԱԺՆԻ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

(մասնագիր և առարկայական նկարագրեր)

ԳԱՎԱՌ-2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը.....5
Մասնագիտական կրթական ծրագրի նկարագիրը 6
ՄԱՍ I. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 17
ՄԱՍ II. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 40
1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ 40
1. 1. Պարտադիր դասընթացներ 40
1. 2. Կամընտրական դասընթացներ 57
2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ 61
2. 1. Պարտադիր դասընթացներ 61
2. 2. Կամընտրական դասընթացներ 64
3. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ 68
3. 1. Պարտադիր դասընթացներ 68
3. 2. Կամընտրական դաընթացներ 121
4. Կրթական այլ մոդուլներ 127
5. Դասընթացների քարտեզագրում 132

Սիրելի՛ ուսանողներ,

բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը ձեր կարևոր սահմանադրական իրավունքն է, որի արդյունավետ իրականացումը վճռորոշ նշանակություն ունի յուրաքանչյուրիդ համար:

Ձեր կյանքում անգնահատելի դերակատարություն ունի համալսարանը, որտեղ դուք ձեռք եք բերում անհրաժեշտ գիտելիքներ և կարողություններ, բացահայտում ձեր ներուժը, զինվում արժեքային ճիշտ կողմնորոշումներով, կայանում որպես մասնագետ: Ուստի, դուք պետք է գիտակցաբար ստանձնեք ձեր ուսման պատասխանատվությունը և անվարան քայլեք տեսական ու գործնական խորը գիտելիքներ, օգտակար սոցիալական փորձ, հմտություններ կուտակելու ճանապարհով:

Գավառի պետական համալսարանում գործում է երկաստիճան կրթական համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Ուսումնական գործընթացը թե՛ բակալավրիատում, թե՛ մագիստրատուրայում կազմակերպվում է կրեդիտային չափումներով, կիրառվում են ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ու բազմագործոն գնահատման կառուցակարգեր:

2007 թվականից Գավառի պետական համալսարանում ներդրված կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական (ECTS) համակարգի համաձայն՝ ‹‹Հայոց լեզու և գրականություն›› մասնագիտության գծով որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակի՝ 240 կրեդիտի կուտակման արդյունքում:

Մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների, մանկավարժության զարգացման արդի միտումների, առաջավոր մոտեցումների և Գավառի պետական համալսարանում իրականացվող՝ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի պահանջներին համապատասխան: Ուսումնառության տարիներին ուսանողների աշխարհայացքի ընդլայնումն ու ընդհանուր պատրաստվածությունն ապահովվում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և բնագիտական, ինչպես նաև մասնագիտական դասընթացների շնորհիվ:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում հիմնարար մասնագիտական գիտելիքներ, ընդհանուր լեզվաբանական և գրականագիտական հասկացությունների, այդ ոլորտների զարգացման ընթացքի և ուղղությունների վերաբերյալ անհրաժեշտ իմացություն, մանկավարժական և

հոգեբանական ոլորտներին վերաբերող գիտելիքներ, միաժամանակ խորացնում մայրենիի և օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն) իմացությունը, տիրապետում են համակարգչային տեխնիկային, ճիշտ հաղորդակցման հմտություններին:

Ուսուցումը կազմակերպվում է ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով ու մեթոդներով, կարևորվում են կրթության ելքային արդյունքների ձեռքբերումը, այդ նպատակով սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանքների իրականացումը, գործնական, սեմինար պարապմունքների ընթացքում ցուցաբերած ակտիվությունը: Լուրջ ուշադրություն է դարձվում ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը, ավարտական աշխատանքների պաշտպանությանը:

<<Հայոց լեզու և գրականություն>> մասնագիտությամբ բակալավրը, բուհն ավարտելուց հետո կարող է աշխատել մանկավարժական գիտակրթական կենտրոններում, իր մասնագիտության պահանջարկն ունեցող այլ հաստատություններում, զանգվածային լրատվամիջոցներում, գրահրատարակչության ոլորտում: Բացի դրանից, կարող է նաև ուսումը շարունակել հաջորդ կրթական աստիճանում՝ մագիստրատուրայում:

Գավառի պետական համալսարանում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները՝ մրցունակ մասնագետներ պատրաստելու համար: Ուստի, սիրելի՛ ուսանողներ, եղե՛ք նպատակասլաց ու աշխատասեր և միշտ հիշե՛ք, որ հաջողության երաշխիքը որակյալ կրթությունն է:

ԳՊՀ ռեկտոր՝ Ռուզաննա Հակոբյան

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագրի նպատակը

Մասնագիտական կրթական ծրագրի մասնագիրը ներառում է դասընթացների նկարագիր, որը նախատեսված է «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես մասնագիտության ուսումնական ծրագրի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված կրթական ելքային արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ամփոփիչ ատեստավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի, դասընթացի խնդիրները՝ արտահայտված կրթական ելքային արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

«Հայոց լեզու և գրականություն»

Մասնագիտական կրթական ծրագրի /այսուհետ Ծրագիր/ նկարագիրը

1. Ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Հայոց լեզու և գրականություն /011401.19.6
2. Բուհը	Գավառի պետական համալսարան
3. Ծրագիրը հավատարմագրված է	
4. Շնորհվող որակավորումը	մանկավարժության բակալավր
5. Կրթական աստիճանը	Բակալավր
6. Ուսումնառության լեզուն	հայերեն
7. Ուսուցման ձևը	Առկա

8. Ծրագրի ընդունելության չափանիշները

Ծրագրի դիմորդը պետք է ունենա.

- միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական կրթություն,
- ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով հայոց լեզու և գրականություն, օտար լեզու / հայոց պատմություն առարկաներից գրավոր քննությունների արդյունքների հիման վրա:

9. Ավարտելու պահանջները.

Ծրագրի շրջանավարտը պետք է ունենա.

- **240 կրեդիտ, ինչպես նաև հաջողությամբ պաշտպանի ավարտական աշխատանքը:**

10. Ծրագրի նպատակները և խնդիրները

Ծրագրի նպատակն է.

- պատրաստել համակարգված մասնագիտական գիտելիքների հարուստ պաշար ունեցող, հայոց լեզվի և գրականության զարգացման առանձնահատկություններին, գործող օրինաչափություններին, պատմականորեն ձևավորված լեզվաբանական և գրականագիտական ուղղություններին, հայերենի արդի հիմնախնդիրներին տիրապետող, վերլուծական ունակություններով օժտված հայոց լեզվի և գրականության, նրանց դասավանդման մասնագետներ,
- պատրաստել մանկավարժության, հոգեբանության, աշակերտակենտրոն ուսուցման հիմնական սկզբունքներին և տեխնոլոգիաներին տիրապետող հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ,
- ձևավորել կրթության ոլորտի օրենսդրությանը և իր մասնագիտությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերին, բնագիտական, սոցիալ-տնտեսական, մշակութային արդի զարգացումներին տիրապետող, որոշակի արժեհամակարգ ունեցող քաղաքացիներ, որոնք մրցունակ կլինեն կրթության տարբեր ոլորտներում աշխատելու համար:

Ելնելով բուհի առաքելությունից՝ Կրթական ծրագիրն իրականացնում է հետևյալ խնդիրները՝

Կրթություն

Ուսումնադաստիարակչական բնագավառում.

ա) Մասնագիտության առարկաների ուսուցման գործընթացի ապահովում:

բ) Գիտականորեն հիմնավորված ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների և միջոցների

(տեսալսողական, հաղորդակցական, տեղեկատվական և մուլտիմեդիական) օգտագործում:
գ) Ուսուցման արդյունքների պլանավորում, կանխատեսում, սովորողների դաստիարակում և զարգացում, նրանց ուսումնական ձեռքբերումների վերահսկում և հաշվառում՝ արդյունքների գնահատման ժամանակակից մեթոդների և միջոցների կիրառմամբ:
դ) Սովորողների ինքնուրույն ուսումնառության պլանավորում, կազմակերպում և ուղղորդում:
ե) Սովորողների արժեքային ուղղորդվածության, հանդուրժողականության, քաղաքացիական, մարդասիրական և հայրենասիրական համոզմունքների ձևավորում:
զ) Մասնագիտական - մանկավարժական գործունեության մեջ կրթական, դաստիարակչական և զարգացման նպատակների իրականացմանը նպաստող կրթական և հոգեբանական միջավայրի ստեղծում և պահպանում: Սովորողների՝ տարբեր տարիքային փուլերում անատոմիական–ֆիզիոլոգիական, ֆիզիկական և հոգեկան զարգացման պայմանների ապահովում և հիմնական օրինաչափությունների հաշվառում:
Մեթոդական գործունեության բնագավառում.
ա) Մասնագիտական գործունեության ոլորտի տեղեկատվության հավաքում, համակարգում, վերլուծում և օգտագործում:
բ) Կրթական ծրագրի, ուսումնամեթոդական ապահովման հիմնավորված ընտրություն և դրանց ուղղորդում ուսումնական կոնկրետ գործընթացին:
գ) Ուսումնական պլանին համապատասխան ուսումնական պարապմունքների պլանավորում՝ առարկայական ծրագրերի թեմաների և բաժինների առանձնահատկությունների հաշվառմամբ:
դ) Փորձարարական-հետազոտական գործունեության իրականացում՝ կապված սովորողների ուսուցման, դաստիարակության, զարգացման, անձի ձևավորման, դրանց առանձնահատկությունների ուսումնասիրության, սովորողների գործունեության խթանման, ինչպես նաև տեսական և գործնական մանկավարժական կազմակերպչական, շտկողական, դիագնոստիկ, մեթոդական, խորհրդատվական խնդիրների հետ:
ե) Հաշվետվություններ, մեթոդական զեկուցումներ, հոդվածներ գրելու կարողությունների և հմտությունների ձևավորում:
զ) Բուն մանկավարժական գործունեության պլանավորում, կազմակերպում, վերլուծություն և կատարելագործում :
Սոցիալական-մանկավարժական գործունեության բնագավառում.
ա) Սովորողների սոցիալականացման, մասնագիտական կողմնորոշման գործընթացների մանկավարժական և հոգեբանական ուղեկցության իրականացում, նրանց նախապատրաստում մասնագիտության գիտակցված ընտրության՝ ընդունակություններին և հակումներին համապատասխան:
բ) Միջկոլեկտիվային և սովորողների միջանձնային հարաբերությունների կազմակերպում, կանոնավորում ու զարգացում:
գ) Դաստիարակության գործընթացում սովորողների ծնողների, ինչպես նաև սոցիալական հաստատությունների հետ համագործակցում:
Մշակութային – լուսավորչական գործունեության բնագավառում.
ա) Սովորողների ընդհանուր մշակույթի ձևավորում:
բ) Ուսումնական հաստատությունների սոցիալական և մշակութային միջավայրի ձևավորում և կազմակերպում:
Կազմակերպչական գործունեության բնագավառում.
ա) Սովորողների ուսումնական և արտաուսումնական գործունեության կազմակերպում, ղեկավարում և դրանց արդյունքների ամփոփում և գնահատում:
բ) Ուսումնական գործընթացում սովորողների առողջության և անվտանգության ապահովում:
գ) Մասնագիտական խնդիրների լուծման համար հասարակական և կրթական կազմակերպությունների հետ սովորողների և ծնողների կոլեկտիվների փոխհամագործակցության կազմակերպում:
դ) Ուսումնական հաստատության թղթաբանության վարում, փաստաթղթաշրջանառության

իրականացում:
11. Կրթական ծրագրի մասնագիտական կոմպետենցիաների շրջանակը
Ա . Բուն մասնագիտական կարողություններ
Ա . Կրթական ծրագրի մասնագիտական գիտելիք և հմտություն Ա1. Կիմանա հայերենի տեղը լեզուների ծագումնաբանական, տիպաբանական և տարածքային դասակարգման մեջ, գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի և արևմտահայերենի կառուցվածքային հատկանիշները, հայերենի հնչյունական, բառային և քերականական և ոճաբանական համակարգերը, Կտիրապետի հայերենի և այլ լեզուների ծագումնաբանական, տիպաբանական ընդհանրություններն ու տարբերությունները ցույց տալու, գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի և արևմտահայերենի կառուցվածքային հատկանիշները, հայերենի հնչյունական, բառային, քերականական և ոճաբանական համակարգերը ներկայացնելու հմտությունների:
Ա2. Կիմանա հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքը, կհասկանա տեղի ունեցած փոփոխությունները, Կտիրապետի հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները ներկայացնելու հմտությունների:
Ա3. Կիմանա հայոց լեզվի բարբառային կազմը և բարբառների դասակարգման սկզբունքները, կհասկանա ընդհանուր լեզվաբանական հասկացությունները, Կտիրապետի հայոց լեզվի բարբառային կազմը բնութագրելու, բարբառների դասակարգման սկզբունքները բացատրելու հմտությունների:
Ա4. Կիմանա լեզվաբանական գիտության զարգացման ընթացքը և գիտական նորագույն ձեռքբերումները, կթվարկի լեզվաբանական ուսումնասիրության մեթոդներն ու ուղղությունները, Կտիրապետի լեզվաբանության՝ իբրև գիտության զարգացման ընթացքը, գիտական նորագույն ձեռքբերումները բնորոշելու, լեզվաբանական ուսումնասիրության մեթոդներն ու ուղղությունները ներկայացնելու հմտությունների:
Ա5.Կիմանա գրական երկերի, տարբեր ոճերի տեքստերի կառուցվածքային, գործառական գաղափարական, գրականագիտական, գրաքննադատական յուրահատկությունները, լեզվաոճական, լեզվաբանական և գրականագիտական հիմնական հասկացությունները, կծանոթանա գրական հայերենի նորմերին համապատասխան տեքստերի կազմման, վերլուծության, խմբագրման սկզբունքներին, Կիմանա ակադեմիական հետազոտական աշխատանք կատարելու պահանջներն ու սկզբունքները, Կտիրապետի գրական երկերի կառուցվածքային, գաղափարական, լեզվաոճական գրականագիտական յուրահատկությունները, լեզվաբանական և գրականագիտական հիմնական հասկացությունները գործնականում ցույց տալու, լեզվական կառույցներն անհրաժեշտ ձևով վերաձևակերպելու, տեքստի մշակմանն առնչվող տարբեր երևույթներ մեկնաբանելու, գրական հայերենի նորմերին համապատասխան տեքստեր կազմելու, վերլուծելու, խմբագրելու, ընդունված պահանջներին համապատասխան ակադեմիական հետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների:
Ա6.Կիմանա հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգության դասակարգումը և ուղղությունները, կհասկանա հին, նոր, 19-20-րդ դարերի, նորագույն և արդի շրջանների հայ գրականության զարգացման միտումները, կըմբռնի գրական ստեղծագործությունների գեղարվեստական ու գաղափարական առանձնահատկությունները, կիմանա հայ և համաշխարհային գրականությունների փոխադարձ կապն ու փոխազդեցությունները,

Կտիրապետի հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգությունը ըստ ուղղությունների դասակարգելու սկզբունքներին, ըստ շրջանների հայ գրականության զարգացման միտումները նշելու, գրական ստեղծագործությունների գեղարվեստական ու գաղափարական առանձնահատկությունները, հայ և համաշխարհային գրականությունների փոխադարձ կապն ու փոխազդեցությունները ցույց տալու հմտությունների:
Ա7.Կիմանա ռուս և արտասահմանյան գրականության զարգացման հիմնական փուլերը, նրանց ներկայացուցիչներին, կհասկանա գրականագիտության հիմունքները, գրականագիտական ուսումնասիրության մեթոդներն ու ուղղությունները, նրանց դերը բնագրերի ճիշտ ընկալման և գնահատման գործում: Կտիրապետի ռուս և արտասահմանյան գրականության զարգացման հիմնական փուլերը, նրանց ներկայացուցիչներին, գրականագիտության հիմունքները, գրականագիտական ուսումնասիրության մեթոդներն ու ուղղությունները ներկայացնելու, գրական երկերը վերլուծելու և գնահատելու գործում:
Ա8. Կիմանա հայ գրաքննադատական մտքի ձևավորման, զարգացման և փուլային առանձնահատկությունները, հայ գրաքննադատների սկզբունքային մոտեցումները, Կտիրապետի հայ գրաքննադատական մտքի ձևավորման, զարգացման և փուլային առանձնահատկությունները ներկայացնելու և հիմնավորելու, հայ գրաքննադատների ներդրումը ազգային գրականության զարգացման գործում գնահատելու, գրական-վերլուծական, քննադատական մոտեցում ցուցաբերելու, գրական երկերը վերլուծելիս նրանց սկզբունքները կիրառելու հմտությունների:
Ա9.Կըմբռնի մանկավարժության, հոգեբանության և ուսուցման տեսության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կպատկերացնի կրթության կազմակերպման հիմնական ձևերը, աստիճանները և մակարդակները, կիմանա ուսումնական գործընթացի տեխնոլոգիաները Կտիրապետի մանկավարժության, հոգեբանության և ուսուցման տեսության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթության կազմակերպման հիմնական ձևերը, աստիճանները և մակարդակները ներկայացնելու, ուսումնական գործընթացի տեխնոլոգիաները նշելու, ձեռք բերած գիտելիքները ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ընթացքում կիրառելու, մանկավարժական գործունեություն իրականացնելու հմտությունների, Կիմանա կրթության որակի չափորոշիչները, ժամանակակից լեզվաքաղաքականության և լեզվակրթության մոտեցումներն ու սկզբունքները, լեզուների ուսուցման և ուսումնառության գործող հայեցակարգերը, Կներկայացնի ՀՀ կրթության քաղաքականությունը, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը (կրթական չափորոշիչներ, ուսումնական պլաններ և ծրագրեր),
Բ. Գործնական կարողություններ **Բ Կրթական ծրագրի մասնագիտական գործնական կոմպետենցիաների շրջանակը**
Բ1. Կարող է ներկայացնել հայերենի տեղը լեզուների ծագումնաբանական, տիպաբանական և տարածքային դասակարգման մեջ, գործնականում ցույց տալ գրաբարի, միջին հայերենի, արևելահայերենի և արևմտահայերենի կառուցվածքային հատկանիշները, հայերենի հնչյունական, բառային և քերականական և ոճաբանական առանձնահատկությունները:
Բ2. Կարող է բացատրել հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքը, տեղի ունեցած փոփոխությունները, կարող է ներկայացնել հայոց լեզվի բարբառային կազմը, ընդհանուր լեզվաբանական հասկացությունները, լեզվաբանական գիտության զարգացման ընթացքը և գիտական նորագույն ձեռքբերումները, թվարկել լեզվաբանական ուսումնասիրության մեթոդներն ու

ուղղությունները, դասակարգել բարբառները:
Բ3.Կարող է բնորոշել և գործնականում ցույց տալ գրական երկերի, տարբեր ոճերի տեքստերի կառուցվածքային, գործառական գաղափարական, գրականագիտական, գրաքննադատական յուրահատկությունները, լեզվաոճական, լեզվաբանական և գրականագիտական հիմնական հասկացությունները, կազմել, վերլուծել, խմբագրել գրական հայերենի նորմերին համապատասխան տեքստեր, կատարել ընդունված պահանջներին համապատասխան ակադեմիական հետազոտական աշխատանքներ:
Բ4.Կարող է դասակարգել հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգությունը ըստ ուղղությունների, ներկայացնել հին, նոր, 19-20-րդ դարերի, նորագույն և արդի շրջանների հայ գրականության զարգացման միտումները, ներկայացնել և գործնականում ցույց տալ գրական ստեղծագործությունների գեղարվեստական ու գաղափարական առանձնահատկությունները, հայ և համաշխարհային գրականությունների փոխադարձ կապերն ու փոխազդեցությունները:
Բ5. Կարող է բնորոշել ռուս և արտասահմանյան գրականության զարգացման հիմնական փուլերը, նրանց ներկայացուցիչներին, բացատրել գրականագիտության հիմունքները, վերլուծել և գնահատել գրական երկերը՝ հիմնվելով գրականագիտական ուսումնասիրության մեթոդների ու ուղղությունների վրա, Կարող է ներկայացնել հայ գրաքննադատական մտքի զարգացման ընթացքը, վերլուծել գրական երկերը ՝ կիրառելով գրաքննադատների վերլուծության սկզբունքները:
Բ6. Կարող է ներկայացնել մանկավարժության, հոգեբանության և ուսուցման տեսության սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթության կազմակերպման հիմնական ձևերը, աստիճանները և մակարդակները, կիրառել դասավանդման տեխնոլոգիաներն ու մեթոդները ձեռք բերած գիտելիքները կիրառել ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ընթացքում:
Բ7.Կարող է բնորոշել և գործնականում ցույց տալ գրական երկերի, տարբեր ոճերի տեքստերի կառուցվածքային, գործառական գաղափարական, գրականագիտական, գրաքննադատական յուրահատկությունները, լեզվաոճական, լեզվաբանական և գրականագիտական հիմնական հասկացությունները, կազմել, վերլուծել, խմբագրել տեքստեր, կազմել գրական հայերենի նորմերին համապատասխան գրավոր և բանավոր խոսք, կատարել ընդունված պահանջներին համապատասխան ակադեմիական հետազոտական աշխատանքներ:
Գ . Ընդհանրական կարողություններ
Գ 1. Կարող է կառուցել գրական հայերենի նորմերին համապատասխան գրավոր և բանավոր խոսք հաղորդակցվել ռուսերեն և անգլերեն լեզուներով, լուծել լեզվական խնդիրներ, մտքերը սահուն արտահայտել, վերլուծել և մեկնաբանել փաստերը, բացատրել մտքի կառուցվածքի տրամաբանական կանոններն ու օրենքները, կատարել հիմնավորված եզրակացություններ, դրանք ներկայացնել բանավոր և գրավոր ձևերով:
Գ 2. Կարող է ներկայացնել հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հեռանկարները, ներկայացնել հիմնական փիլիսոփայական ուղղությունները, վերլուծել ժամանակակից կրոնների աշխարհայացքային, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները, բացատրել և լուսաբանել կրոնների ուսումնասիրության մեթոդները, սկզբունքները և մշակութային արժեքները:
Գ3. Կարող է ցուցաբերել արժեքային պատշաճ կողմնորոշիչների և քաղաքացիական դիրքորոշման, իրավական ինստիտուտների խոր ընկալման ապահովման ուղղվածություն, իմանալ տրամաբանական մի շարք հիմնախնդիրներ, կանոններ և օրենքներ, ներկայացնել ու պաշտպանել սեփական հետաքրքրություններն ու շահերը՝ հարգելով մյուսների իրավունքները և շահերը, ընկալել միջմշակութային տարբերությունները և բազմազանությունը:

Գ 4. Կարող է կիրառել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում գործելակերպի կանոնները, պահպանել առողջ ապրելակերպի նորմերը, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը:
Գ 5. Կարող է օգտագործել համակարգչային հմտություններն ու տեղեկատվական տեխնոլոգիաները՝ մասնագիտական գործունեության ընթացքում տարբեր աղբյուրներից անհրաժեշտ տեղեկատվությունը որոնելու, մշակելու և վերլուծելու նպատակով:
Գ 6. Կարող է մասնակցել գիտաժողովների, սեմինարների, քննարկումների, բանավեճերի, աշխատել տարբեր խմբերի հետ համագործակցային մեթոդով, իրականացնել տեղեկատվական փոխանակություն: ապահովել աշխատանքային, մանկավարժահոգեբանական բարենպաստ մթնոլորտ, միջանձ-նային նորմալ հարաբերություններ, լուծումներ տալ ծագած խնդիրներին, ըստ իրավիճակի որոշումներ կայացնել, թիմային աշխատանքներ կատարել:

12. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

- ✓ Դասախոսության նյութի յուրացում,
- ✓ գրականության ուսումնասիրում, որոնողական մեթոդ,
- ✓ խորհրդատվություններ, հեռավար ուսուցման մեթոդներ
- ✓ հետազոտական մեթոդ, դասախոսություն-զրույց , դասախոսություն-քննարկում
- ✓ ինտերակտիվ դաս
- ✓ քննադատական մտածողության մեթոդներ,
- ✓ Վենի դիագրամ,
- ✓ քարտեզագրման, քառաբաժան մեթոդ,
- ✓ Т-աձև մեթոդ, քառաբաժան մեթոդ,
- ✓ պրիզմայի մեթոդ,
- ✓ ձնագնդի մեթոդ,
- ✓ արթերապիայի մեթոդ,
- ✓ հիմնահարցային դասախոսություն,
- ✓ գործնական պարապմունքներ,
- ✓ բանավեճի մեթոդ,
- ✓ կոնկրետ իրավիճակի վերլուծությամբ դասախոսություն,
- ✓ դասախոսություն-խորհրդատվություն,
- ✓ զուգակցված դաս,
- ✓ գործնական աշխատանք, սեմինար

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

✓ սոցիալ-մասնագիտական իրադրությունների վերլուծություն,
✓ գիտելիքները գործնականորեն կիրառելու ինքնուրույն աշխատանքներ,
✓ գիտելիքների և կարողությունների վերարտադրողականությանը ուղղված ինքնուրույն աշխատանքներ,
✓ կուրսային և ավարտական աշխատանքների նախապատրաստում և պաշտպանություն,
✓ խմբային քննարկումներ,
✓ նախագծային մեթոդ,
✓ դերային խաղեր,
✓ խմբային ինքնուրույն աշխատանք,
✓ բառ-բանալի,
✓ հեղինակի աթոռ,
✓ խմբային հետազոտություն,
✓ վեբ-որոնում,

13. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մասնագիտական գիտելիքների և իմացության գնահատման մեթոդները

Ուսանողների գիտելիքները և իմացությունը գնահատվում են հետևյալ ձևերով.

- առաջադրանքների կատարման ստուգում,
- թեստային աշխատանք,
- միջանկյալ և ամփոփիչ քննություններ,
- ստուգարքներ,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

Գործնական մասնագիտական կարողությունների գնահատման մեթոդները

Ուսանողների գործնական կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- Ստուգարքներ,

- միջանկյալ և ամփոփիչ քննություններ,
- առաջադրանքների կատարման ստուգում,
- գործնական աշխատանք,
- դերային խաղ,
- գաղափարների և հասկացությունների քարտեզագրում:

Ընդհանրական (փոխանցելի) կարողությունների գնահատման մեթոդները.
Ուսանողների ընդհանրական /փոխանցելի/ կարողությունները գնահատվում են հետևյալ ձևերով.

- Բանավոր հարցում,
- գրավոր հարցում,
- թեստային գնահատում,
- գործնական պարապմունքներին մասնակցության գնահատում,
- էսսեների պատրաստում և զեկուցում,
- առաջադրանքների կատարման ստուգում,
- ռեֆերատների պատրաստում և զեկուցում,
- ինքնուրույն աշխատանքի հրապարակային պաշտպանություն,
- անհատական առաջադրանքների կատարման ստուգում,
- Ինքնաստուգում, փոխստուգում:

14. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատությունը պետք է ունենա համապատասխան նյութատեխնիկական բազա՝ սովորողների առարկայական և միջառարկայական պատրաստությունը, լաբորատոր, գործնական և հետազոտական աշխատանքներն ապահովելու համար:
Բակալավրական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովման ցանկն ընդգրկում է՝

- տեսալսողական կաբինետ,
- ուսումնական լսարաններ՝ կահավորված մուլտիմեդիական ցուցադրական համալիրներով,
- համակարգչային լսարան՝ գլոբալ որոնողական համակարգերից օգտվելու հնարավորությամբ,
- էլեկտրոնային հրատարակումներ օգտագործելու դեպքում՝ այդ բազայից օգտվելու հնարավորություն:

Ուսումնական գործընթացի տեղեկատվական և ուսումնամեթոդական ապահովմանը ներկայացվող պահանջներ

- ՄԿԾ-ով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացները, դրանց մոդուլները պետք է ապահովվեն ուսումնամեթոդական փաստաթղթերով և նյութերով:
- Սովորողների արտալսարանային ինքնուրույն աշխատանքի իրականացումը պետք է զուգորդվի մեթոդական ապահովմամբ և ծախսված ժամանակի հիմնավորմամբ:
- ՄԿԾ-ի իրականացումը յուրաքանչյուր սովորողի թույլատրում է մուտք գործել տվյալների բազա, գրադարանային ֆոնդեր, ստանալ տեղեկատվություն և խորհրդատվություն:
- Գրադարանային ֆոնդը պետք է համալրված լինի ոչ միայն մասնագիտական, այլ նաև հումանիտար, սոցիալական և տնտեսական դասընթացներին համապատասխան տպագիր և/ կամ էլեկտրոնային հրատարակություններով:

15. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

‹‹Հայոց լեզու և գրականություն›› մասնագիտական կրթական ծրագիրը պետք է իրականացնեն գիտամանկավաժական այն կադրերը, որոնք ունեն համապատասխան մասնագիտական բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում) և զբաղվում են գիտական կամ գիտամանկավարժական, գիտամեթոդական գործունեությամբ:

Մասնագիտական դասընթացները դասավանդողների առնվազն 30%-ը պետք է ունենան գիտական աստիճան և /կամ/ կոչում: Կրթական գործընթացում կարող են ներգրավվել նաև դասախոսներ՝ պրակտիկաների բազային մարմինների, մասնագիտական կազմակերպությունների, գիտահետազոտական հաստատությունների համակազմից:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտական կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմը պետք է ունենա անձնային, մանկավարժական, կազմակերպչական, հաղորդակցական որոշակի որակներ և հմտություններ, դրսևորի համակարգչային ծրագրերի իմացություն:

Ա. Անձնային որակներ

1. Մասնագետը պետք է ունենա ինքնադրսևորվելու, ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու, ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության և վարվեցողության նորմեր ձևավորելու, ուսումնառողների ներուժը օբյեկտիվ գնահատելու կարողություններ:

Բ. Մանկավարժական որակներ

1. Մասնագետը պետք է դրսևորի մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների իմացություն և կարողանա դրանք կիրառել, իմանա բարձրագույն կրթության ոլորտին վերաբերող ՀՀ գործող օրենսդրական փաստաթղթերը և կարողանա դրանք ներկայացնել, մեկնաբանել, վերլուծել, զարգացնել ուսանողների ստեղծագործական, վերլուծական, քննադատական մտածողության ունակությունները, համադրել մանկավարժական տարբեր մեթոդներն ու հնարները, կազմակերպել անհատական և խմբային աշխատանքները, ձևակերպել դասավանդման նպատակներն ու խնդիրները, կազմել և մշակել դասընթացի ծրագիրը:

Գ. Կազմակերպչական որակներ

1. Ուսուցման գործընթացում ճիշտ ձևերի ու մեթոդների ընտրության, սուբյեկտների միջև փոխգործակցային և համագործակցային հարաբերությունների ձևավորման կարողություն,
2. Վերահսկողության, գնահատման գործընթացների մոդելավորման կարողություն,
3. Բարենպաստ ուսումնական միջավայր ձևավորելու և ծրագրերը արդյունավետորեն իրականացնելու կարողություն,
4. Ժամանակի ճիշտ և արդյունավետ օգտագործման կարողություն:

Դ. Հաղորդակցական հմտություններ

1. Հայոց լեզվով գերազանց, օտար լեզուներով բավարար և լավ հաղորդակցվելու հմտություններ,
2. Մանկավարժահոգեբանական հաղորդակցման բարձր մշակույթի դրսևորում:

Ե. Համակարգչային ծրագրերի իմացություն

Մասնագետը պետք է տիրապետի SS հմտությունների, աշխատի հիմնական համակարգչային ծրագրերով MS Office (Access, Excel, Power Point, Word), ունեա PPT սահիկաշարեր պատրաստելու, կորպուսային լեզվաբանության տվյալների հետ աշխատելու, MLA ոճով գիտական հետազոտություններ իրականացնելու հմտություններին:

Զ. Դասախոսի մասնագիտական որակները

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտական կրթական ծրագիրն սպասարկող դասախոսը պետք է

իմանա

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտական կրթական ծրագիրն սպասարկող դասախոսը պետք է ունենա հայոց լեզվի համակարգի, հայ գրականության պատմության վերաբերյալ համապարփակ գիտելիքներ, իմանա հայ, ռուս և արտասահմանյան գրականությունների զարգացման փուլերն ու օրինաչափությունները, գրաքննադատական և գրականագիտական հիմնական տեսությունները, ժամանակակից հետազոտական մեթոդները, ճանաչի կրթական չափորոշիչները և ուսումնական ծրագրերի նախագծման սկզբունքները, արդյունավետ մանկավարժական, գնահատման և թվային կրթական տեխնոլոգիաները, ինչպես նաև պահպանի ակադեմիական գրագրության, մասնագիտական էթիկայի և մանկավարժական հաղորդակցության նորմերը՝ ապահովելով դասավանդման բարձր որակ՝ միտված կրթական ծրագրի նպատակների իրականացմանը:

կարողանա

մասնագիտական բարձր պատրաստվածությամբ ներկայացնել հայոց լեզուն և հայ գրականությունը, ցույց տալ հայերենի, հայ, ռուս և արտասահմանյան գրականությունների զարգացման փուլերն ու օրինաչափությունները, բացատրել նյութի ներքին պատճառաբանվածությունը, կատարել համեմատական և կերպարային վերլուծություններ, տարբեր հայեցակետերից մեկնաբանել լեզվական և գրականագիտական իրողությունները, կիրառել արդյունավետ մանկավարժական, գնահատման և թվային կրթական տեխնոլոգիաներ, մեթոդներ, ցուցաբերել գործնական մոտեցում լեզվական և գրական նյութերի և նրանց ուսուցման նկատմամբ:

տիրապետի

հայոց լեզուն և հայ գրականությունը մասնագիտական բարձր պատրաստվածությամբ ներկայացնելու, հայերենի, հայ, ռուս և արտասահմանյան գրականությունների զարգացման փուլերն ու օրինաչափությունները բացահայտելու, ուսումնասիրվող նյութի ներքին պատճառաբանվածությունը հիմնավորելու, համեմատական և կերպարային վերլուծություններ կատարելու, լեզվական և գրականագիտական իրողությունները տարբեր հայեցակետերից մեկնաբանելու, արդյունավետ մանկավարժական, գնահատման և թվային կրթական տեխնոլոգիաներ, մեթոդներ կիրառելու հմտությունների:

16. ՍՈՎՈՐՈՂԻ ՀԵՏԱԳԱ ՈՒՍՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության բակալավրի որակավորում ստացած շրջանավարտը հնարավորություն ունի կրթությունը շարունակելու՝

1. կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
2. մագիստրատուրայում՝ ստանալու «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության մագիստրոսի աստիճան,
3. ասպիրանտուրայում (մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո)՝ ստանալու հետազոտողի որակավորում (գիտությունների թեկնածուի գիտական աստիճան):

17. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել՝

1. հանրակրթական դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ
2. վարժարաններում, քոլեջներում, բուհերում՝ որպես հայոց լեզվի և գրականության, դրանց դասավանդման մեթոդիկայի ուսուցիչ, դասախոս
3. զանգվածային լրատվամիջոցներում, գրահրատարակչության ոլորտում՝ որպես խմբագրող, սրբագրող:

18. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Գավառի պետական համալսարանում իրականացվող «Հայոց լեզու և գրականություն»

մասնագիտական կրթական ծրագրի կայունությանը նպաստող գործոններն են դիմորդների շրջանում «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մանկավարժության բակալավրի պահանջարկը, հանրակրթական, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, զանգվածային լրատվամիջոցներում, գրահրատարակչության ոլորտում աշխատատելու հնարավորությունը,
Գավառի պետական համալսարանում իրականացվող «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտական կրթական ծրագրի ռիսկայնությունը պայմանավորված է աշխատատեղերի ոչ բավարար քանակով, ինչպես նաև դիմորդների մեծ մասի՝ միասնական քննությունների սահմանված շեմը չհաղթահարելու հանգամանքով:

ՄԱՍ Ի. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

1. Կրեդիտային համակարգի հիմնադրույթները

Կրեդիտային համակարգը ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման, արժևորման, կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

Կրեդիտների փոխանցման և կուտակման համակարգը (ECTS) միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը մեկ ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

ECTS համակարգի կարևոր հատկանիշներն են.

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ ենթակա բոլոր բաղկացուցիչներին. դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային, ավարտական և այլ աշխատանքներին,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են վաղօրոք (տպագրվում և/կամ տեղադրվում են ԳՊՀ կայքէջում):

ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:

ECTS կրեդիտի կարևոր հատկանիշներն են.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, ինքնուրույն հետազոտական աշխատանքը և այլն,
- կրեդիտը չափում է ուսանողի ուսումնական բեռնվածքը և նրա ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների ողջ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և բակալավրի կրթական ծրագրի աշխատածավալը

ԳՊՀ-ում բակալավրի կրթական աստիճանում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:

1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:

Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 30-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակով՝ աշնանային և գարնանային: Կիսամյակը բաղկացած է 20 շաբաթից, որից 15 շաբաթը հատկացվում է ուսումնական լսարանային պարապմունքներին, 1 շաբաթը՝ առաջին միջանկյալ քննությանը, 1 շաբաթը՝ ե

րկրորդ միջանկյալ քննությանը և ստուգարքներին, իսկ 3 շաբաթը նախատեսված է գիտելիքների ամփոփիչ ստուգման և վերջնական գնահատականի ձևավորման համար:

Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1.5 ակադեմիական կրեդիտի:

Բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 29-31ժամ:

Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:

Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է:

3.Դասընթացները և կրթական մոդուլները

Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների նշումով:

Մեծածավալ դասընթացները բաժանված են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:

Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց յուրացման բնույթով բաժանվում են 2 հիմնական խմբի՝

բ) պարտադիր դասընթացներ՝ ամրագրված որոշակի կիսամյակներում,

ա) կամընտրական դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ՝ ազատ:

4. Բակալավրի կրթական ծրագիրը և ավարտական պահանջները

4.1. Ուսումնական ծրագիրը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է երեք հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ:

Ծրագրի ընդհանուր կառուցվածքը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 1

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	42	18
պարտադիր	39	15
կամընտրական	3	3

Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական պարտադիր կամընտրական	9 6 3	4 2 2
Ընդհանուր մասնագիտական պարտադիր կուրսային աշխատանքներ կամընտրական	164 156 3 5	51 44 3 4
Կրթական այլ մոդուլներ	25	4
Ընդամենը	240	77

4.1.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

1.1.1. **Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս**

4.1.2. Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) կրթամասը ներառում է կրթական մոդուլների երկու բաղկացուցիչ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՀՍՏ պարտադիր դասընթացներ.

ՀՍՏ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ *2*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Ռուսաց լեզու -1	3	30(0/30)	1	ստուգարք
Ռուսաց լեզու -2	3	30(0/30)	2	ստուգարք
Ռուսաց լեզու-3	3	30(0/30)	3	քննություն

Օտար լեզու (անգլերեն) 1	3	30(0/30)	1	ստուգարք
Օտար լեզու (անգլերեն) 1	3	30(0/30)	2	ստուգարք
Օտար լեզու (անգլերեն) 1	3	30(0/30)	3	քննություն
Հայոց պատմության հիմնահարցեր 1	3	30(20/10)	1	ստուգարք
Հայոց պատմության հիմնահարցեր 2	3	30(20/10)	2	քննություն
Տրամաբանության հիմունքներ	3	30(20/10)	2	ստուգարք
Իրավագիտության հիմունքներ	3	30 (20/10)	3	ստուգարք
Փիլիսոփայության հիմունքներ	3	30 (20/10)	5	ստուգարք
Հետազոտության մեթոդաբանություն	3	30(20/10)	5	ստուգարք
Կրոնագիտության հիմունքներ	3	30(20/10)	3	ստուգարք
Ֆիզիկական դաստիարակություն	-	60 (0/60)	1,2	ստուգարք

2 Այսուհետ՝ դ - դասախոսություն, գ - գործնական կամ սեմինար պարապմունք, լ – լաբորատոր աշխատանք:

3 Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն:

ՀՍՏ կամընտրական դասընթացներ

ՀՍՏ կամընտրական դասընթացների ցանկը ներառում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

Աղյուսակ *3*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Քաղաքագիտության հիմունքներ	3	30 (20/10/0)	5	ստուգարք
Մշակութաբանության հիմունքներ				
Տնտեսագիտության հիմունքներ				

4.1.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸՄԲ) կրթամասը նույնպես ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական:

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Աղյուսակ *4*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանայի ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3	30 (20/10/0)	1	ստուգարք
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3	30 (20/10/0)	2	ստուգարք

ԸՄԲ կամընտրական դասընթացներ

ԸՄԲ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու մեկը.

Աղյուսակ *5*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	3	30(20/10/0)	2	ստուգարք
Սոցիոլոգիա				

4.1.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է ուսուցում «Պատմություն» մասնագիտության գծով:

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտությունների համար բերված են ստորև.

Աղյուսակ *6*

Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատ-ման ձևը
Ընդհանուր մանկավարժություն-1	3	30(20/10/0)	3	ստուգարք
Ընդհանուր մանկավարժություն-2	3	30(20/10/0)	4	քննություն
Կուրսային աշխատանք Մանկավարժություն/Հոգեբանություն	1	-	4	քննություն
Ներառական կրթության հիմունքներ	3	30(20/10/0)	5	ստուգարք
Ընդհանուր հոգեբանություն-1	3	30(20/10/0)	3	ստուգարք
Ընդհանուր հոգեբանություն -2	3	30(20/10/0)	4	քննություն
Ժամանակակից հայոց լեզու՝ հնչյունաբանություն 1	4	60(20/40/0)	1	ստուգարք
Ժամանակակից հայոց լեզու՝ բառագիտություն 2	4	60(20/40/0)	2	քննություն
Ժամանակակից հայոց լեզու՝ ձևաբանություն 3	4	60(40/20/0)	3	ստուգարք
Ժամանակակից հայոց լեզու՝ ձևաբանություն 4	4	60(40/20/0)	4	քննություն
Ժամանակակից հայոց լեզու՝ շարահյուսություն 5	4	60 (40/20/0)	5	ստուգարք
Ժամանակակից հայոց լեզու՝	5	60 (40/20/0)	6	քննություն

շարահյուսություն 6				
Ոճագիտություն	5	30(20/10/0)	7	քննություն
Լեզվաբանության հիմունքներ	3	40(30/10/0)	1	քննություն
Գրաբար 1	3	40(10/30/0)	1	ստուգարք
Գրաբար 2	3	40(10/30/0)	2	քննություն
Միջին հայերեն	3	30(20/10/0)	5	ստուգարք
Արևմտահայերեն	4	50(30/20/0)	5	քննություն
Բարբառագիտություն	4	40(30/10/0)	4	ստուգարք
Հայոց լեզվի պատմություն 1	4	40(30/10/0)	7	քննություն
Հայոց լեզվի պատմություն 2	4	40(30/10/0)	8	քննություն
Հայ ժողովրդական բանահյուսություն	3	60(40/20/0)	1	քննություն
Հայ գրականության պատմություն՝ հին և միջնադարյան շրջաններ 1	4	60(40/20/0)	2	քննություն
Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դար 2	4	60(40/20/0)	3	ստուգարք
Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դար 3	4	60(40/20/0)	4	քննություն
Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ 4	4	60(40/20/0)	5	ստուգարք
Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ 5	4	60(40/20/0)	6	քննություն
Հայ գրականության պատմություն՝ նորագույն շրջան 6	5	50(30/20/0)	7	ստուգարք
Հայ գրականության պատմություն՝ նորագույն շրջան 7	5	40(30/10/0)	8	քննություն
Հայ գրաքննադատության պատմություն	4	40(30/10/0)	8	քննություն

Արտասահմանյան գրականության պատմություն՝ անտիկ դարաշրջան 1	3	30(20/10/0)	1	քննություն
Արտասահմանյան գրականության պատմություն ՝ վերածննդի դարաշրջան 2	3	30(20/10/0)	2	ստուգարք
Արտասահմանյան գրականության պատմություն՝ 17-19-րդ դարեր 3	3	30(20/10/0)	3	քննություն
Արտասահմանյան գրականության պատմություն՝ 20-րդ դար 4	3	30(20/10/0)	4	քննություն
Ռուս գրականության պատմություն	4	40(30/10/0)	6	քննություն
Գրականության տեսություն	4	40(30/10/0)	3	քննություն
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա	5	50(30/20/0)	5	քննություն
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա՝ կուրսային աշխատանք	1	-	5	քննություն
Հայ գրականության դասավանդման մեթոդիկա	5	50(30/20/0)	6	քննություն
Հայ գրականության դասավանդման մեթոդիկա' կուրսային աշխատանք	1	-	6	քննություն
Հայ թատերագրությունը 20-21-րդ դարերում	4	40 (30/10/0)	7	ստուգարք
Լեզվական վերլուծության սկզբունքները	4	40 (10/30/0)	7	ստուգարք
Գեղարվեստական երկի վերլուծության սկզբունքները	4	40 (10/30/0)	7	ստուգարք
Տեքստագիտություն	4	40 (30/10/0)	7	ստուգարք
Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ				
Հայ էպոսագիտություն	3	40 (30/10/0)	7	ստուգարք
Օտարալեզու հայ գրողներ				

Կրառական մանկավարժություն	2	30 (20/10/0)	6	ստուգարք
Ընտանեկան կյանքի և սոցիալական հոգեբանություն				

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 3 կրեդիտ աշխատածավալով կուրսային աշխատանքների կատարում, որի արդյունքների ստուգումն իրականացվում է կրեդիտային եղանակով:

4.1.4. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները.

Աղյուսակ *7*

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Ուսումնական պրակտիկա	5	4	ստուգարք
Մանկավարժական պրակտիկա	6	6	ստուգարք
Մանկավարժական պրակտիկա	6	8	քննություն
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	8	8	քննություն

5.Ուսումնական խորհրդատուների ծառայությունը

5.1. Կրեդիտային համակարգով սովորող ուսանողներին ուսման գործընթացում օժանդակելու նպատակով ֆակուլտետը կազմակերպում է ուսումնական խորհրդատուների (կուրսղեկների) ծառայություն, որում ընդգրկում են մասնագիտության ուսումնական ծրագրին քաջատեղյակ մասնագետներ:

5.2. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում իրեն կցված ուսանողների ուսումնական առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:

5.3. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, կրթական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբակային և անհատական խորհրդատվություններ:

5.4. Անհրաժեշտության դեպքում, ելնելով ուսանողների պահանջներից, կազմակերպվում է լրացուցիչ խորհրդատվություն՝ ընդգրկելով տվյալ կամ հարակից մասնագիտությամբ և անհրաժեշտ որակներով խորհրդատուի (խորհրդատուների):

6. Ուսանողի գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը

ԳՊՀ՝ կրեդիտային համակարգով կազմակերպվող բակալավրիատի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման համար ընդունվում է ներքոհիշյալ աղուսակում տրված 100 միավորանոց գնահատման համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Աղյուսակ 8

Գնահատականը	Նշանակումը	Թվանշանը	Միավորը
Գերազանց	A +	4,0	95-100
	A	4,0	87-94
	A -	3,7	81-86
Լավ	B+	3,3	75-80
	B	3,0	67-74
	B-	2,7	61-66
Բավարար	C+	2,3	55-60
	C	2,0	46-54
	C-	1,7	40-45
Անբավարար	D	1,0	0
Չներկայացած	F	-	0
Ստուգված	S	-	≥40
Չստուգված	U	-	< 40

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում հանրագումարային միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ A (4,0)):

1. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 40-ից ցածր միավոր կամ գնահատվել է «չստուգված», կրեդիտներ չեն տրվում: «Ստուգված» գնահատման դեպքում

ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի միջին որակական գնահատականի վրա:

2. Միավորների բաշխումն ըստ գործոնների.

ա/ Քննությամբ ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 9

h/h	Գործոններ	Միավորներ
1	Հաճախումներ	10
2	1-ին միջանկյալ քննություն	20
3	2-րդ միջանկյալ քննություն	20
4	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	20
5	Վերջնական հանրագումարային քննություն	12-30
Ընդամենը		**100**

բ/ Ստուգարքով ավարտվող մոդուլների համար

Աղյուսակ 10

h/h	**Գործոններ**	Միավորներ
1	Հաճախումներ	10
2	Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք	40
3	Վերջնական հանրագումարային ստուգում	20-50
Ընդամենը		**100**

գ/ Կուրսային աշխատանք

Աղյուսակ 11

h/h	**Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները**	**Միավորներ**
1	Բովանդակության ամբողջականությունը (լիարժեքությունը)	30
2	Կատարման ինքնուրույնությունը	25
3	Համապատասխանությունը տեխնիկական պահանջներին	15

4	Ներկայացման և պաշտպանության որակը	30
Ընդամենը		**100**

դ/ Մանկավարժական պրակտիկա /քննություն/

Աղյուսակ 12

h/h	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորը	Ցուցում՝ գնահատման մասին
1	Հաճախում	20	գնահատման ժամանակ 20 միավորից հանվում է յուրաքանչյուր բացակայած օրվան համապատասխան միավորների թիվը, արդյունքը կլորացնելով՝ պակասորդով
2	Փորձնական կամ բաց դասեր	20	Գնահատումը իրականացվում է հավելվածներում բերված արձանագրություններին համա-պատասխան, յուրաքանչյուր հարցադրման հասանելիք միավորը հաշվարկելով ընդհանուր միավորի և հարցերի քանակի քանորդով
3	Արտադասարանական միջոցառումներ	20	
4	Հոգեբանամանկավարժական ուսումնասիրություններ և բնութագրերի կազմում	20	
5	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և ներկայացում	20	Գնահատումը իրականացվում է՝ կանոնակարգի և սույն աղյուսակի համաձայն

ե/ Ուսումնական պրակտիկա /ստուգարք/

Աղյուսակ 13

h/h	Ուսանողի կողմից իրականացվող աշխատանքների բաղադրիչները	Միավորներ
1	Հաճախումներ	30
2	Աշխատանքային պլանի կատարում	30
3	Պրակտիկայի հաշվետվության, օրագրի կազմում և ներկայացում	40

ե/ Ավարտական աշխատանքի պաշտպանություն

Աղյուսակ 13

h/h	Չափանիշներ	Միավորը
1	Արդյունարար գնահատականը	0-100

2	Տառային նշանակումը և թվային նշանակումը	C- - A+ /1,7 – 4,0/

h/h	Գործոններ	Միավոր
1	Աշխատանքի թեմայի արդիականությունը, նորույթը	10
2	Աշխատանքի ընդհանուր բնութագիրը (հետազոտության առարկան, նպատակը, խնդիրները, կառուցվածքը, մեթոդները, աղբյուրները, այլ), բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները և առաջարկությունները	50
3	Աշխատանքին ներկայացվող պահանջների պահպանումը (շարադրանքի որակը, մեջբերումները, հղումները, օգտագործված գրականության ցանկը, համառոտագրությունները, աղյուսակները, հավելվածները, տեխնիկական այլ պահանջներին համապատասխանությունը)	10
4	Ավարտական աշխատանքի ներկայացումը, պաշտպանությունը	30

6.1 Ուսանողների գիտելիքների որակի ստուգման ձևերը

Ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում, օգտագործելով ակադեմիական կրեդիտների կուտակման համակարգը, կիրառվում են ուսանողների գիտելիքների որակի ստուգման հետևյալ տեսակներն ու ձևերը.

- ընթացիկ ստուգում,
- միջանկյալ ստուգում,
- ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում,
- հանրագումարային ստուգում:

6.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգում

6.2.1. Կանոնակարգի համաձայն՝ ընթացիկ ստուգման ձևեր կարող են հանդիսանալ հարցումները, կարճատև ելույթները գործնական և սեմինար պարապմունքների ժամանակ, լսարանային աշխատանքները, իսկ ինքնուրույն հետազոտական աշխատանքը կարող է ստուգվել շնորհանդեսների, զեկուցումների, հետազոտությունների արդյունքների, թեստերի, կատարված հանձնարարությունների, լուծված առաջադրանքների, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքների ստուգման և գնահատման այլ ձևերի միջոցով:

6.2.2. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ու գնահատման ձևերը որոշվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացից ուսումնական պլանով նախատեսված պարապմունքի ձևերը, ինչպես նաև դասընթացի բնույթն ու առանձնահատկությունները:

6. 2. 3. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ժամանակ դասախոսը գնահատում է ուսանողի պատրաստվածությունը գործնական և սեմինար պարապմունքներին, գնահատում է նյութի յուրացման մակարդակը, լսարանային աշխատանքներին նրա մասնակցությունը, ինքնուրույն հետազոտական աշխատանքի արդյունքները և ի հայտ է բերում ուսանողների պատրաստվածության թերությունները՝ տվյալ դասընթացի բովանդակությունը հարստացնելու և արդիականացնելու, մեթոդները կատարելագործելու, պարապմունքների և ինքնուրույն աշխատանքի ընթացքում ուսանողների աշխատանքը ակտիվացնելու և իր կողմից ուսանողին անհատական օգնություն ցուցաբերելու նպատակով:

6.2.4. Ողջ ուսումնառության ընթացքում ուսանողների գիտելիքների ստուգման համար ընթացիկ ստուգումներն ու ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատումներն իրականացվում են այն դասախոսների կողմից, ովքեր անցկացնում են գործնական կամ սեմինար պարապմունքներ, հանձնարարում ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

6.2.5. Անկախ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տեսակից՝ դասախոսը պարտավոր է անցկացնել տվյալ խմբի բոլոր ուսանողների ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի գնահատում:

6.2.6. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման արդյունք են համարվում այն միավորներով արտահայտված գնահատականները, որոնք ուսանողը հավաքում է ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման համար տրված բոլոր աշխատանքներից և հաշվարկված ընթացիկ ստուգման գնահատականի մեջ դրանց համամասնությունից:

6. 2. 7. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականը հաշվարկվում է սույն կարգի աղյուսակ 2-ում և 3-ում «Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնին հատկացված միավորի (քննության դեպքում՝ 20 միավորի, ստուգարքի դեպքում՝ 40 միավորի) շրջանակներում բոլոր ձևերի ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների արդյունքներից:

6.2.8. Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգումների ձևերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռը ընդհանուր գնահատականի մեջ, և այդ տեսակարար կշիռների գումարը պետք է հավասար լինի 1-ի: ‹‹Ակտիվություն գործնական և սեմինար պարապմունքներին, ինքնուրույն հետազոտական աշխատանք» գործոնի գնահատականի հաշվարկը կարող է կատարվել Օրինակ 1-ում (ստուգարքով ավարտվող մոդուլի դեպքում) և Օրինակ 2-ում (քննությամբ ավարտվող մոդուլի դեպքում) ներկայացված ձևով (հաշվարկում 5-րդ սյան միավորները ստացվում են 3-րդ և 4-րդ սյուների միավորների բազմապատկման արդյունքում).

1) ստուգարքով ավարտվող մոդուլի պարագայում՝ **Օրինակ 1.**

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման ձևերը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչ յուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /30 միավորի շրջանակնե րում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը. = 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/

1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	27	10,8
3.	Սեմինար պարապմունք	0,4	28	11,2
4.	Թեստ			
5.	Հարցում	0,2	16	3,2
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				**25,2=26**

2) քննությամբ ավարտվող մոդուլի պարագայում՝

Օրինակ 2.

Հ/հ	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակները	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման գնահատականի մեջ յուրաքանչյուրի տեսակարար կշիռը	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման յուրաքանչյուր ձևին տրվող միավորը /15 միավորի շրջանակներում/	Ընթացիկ և ինքնուրույն հետազոտական աշխատանքի ստուգման տեսակին տրվող գնահատականը /5-րդ սյունակի միավորը. = 3-րդ սյունակ*4-րդ սյունակ/
1	2	3	4	5
1.	Ստուգողական աշխատանք			
2.	Գործնական պարապմունք	0,4	11	4,4
3.	Սեմինար պարապմունք			
4.	Թեստ	0,6	14	8,4
5.	Հարցում			
6.	Այլ /դասախոսի ընտրությամբ/			
Ընդամենը /Ընթացիկ ստուգման վերջնական գնահատականը կլորացվում է՝ ի օգուտ ուսանողի/				12,8=13

Այսպիսով, ՎԳընթ=Կx*Գx., որտեղ

ՎԳընթ-ն ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականն է,

Կx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի տեսակարար կշիռը,

Գx-ն՝ ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի տվյալ ձևի գնահատականը:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի օգտագործված ձևերի տեսակարար կշիռը հավասար է 1-ի /0,4+0,4+0,2=1/, /0,4+0,6=1/:

Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի վերջնական գնահատականը կարող է կլորացվել ի օգուտ ուսանողի, մինչև մոտակա ամբողջ թիվը: Ընթացիկ ստուգման և ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար դասախոսը կարող է

հատկացվող միավորների շրջանակներում կիրառել նաև այլ մոտեցում՝ նախապես այն սահմանելով դասընթացի առարկայական ծրագրում և տեղյակ պահել ուսանողներին:

6.3. Միջանկյալ ստուգում

6.3.1. Միջանկյալ ստուգումն անցկացվում է կիսամյակի կամ մոդուլի ընթացքում ուսանողի առաջադիմությունը գնահատելու և ուսանողների գիտելիքների վերջնական գնահատման ժամանակ ավելի մեծ օբյեկտիվություն ապահովելու նպատակով:

6.3.2. Միջանկյալ ստուգումը արտահայտում է հաստատված ուսումնական պլանում առկա դասընթացի առարկայական ծրագրում ընդգրկված թեմաների որոշ մասի յուրացումը ուսանողի կողմից և ամփոփում է այդ հատվածի /թեմաների/ գնահատականները:

6.3.3. Միջանկյալ ստուգումն անցկացվում է ստուգողական աշխատանքի, համակարգչային թեստավորման կամ այլ եղանակներով:

6.3.4. Միջանկյալ ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում միջանկյալ քննությանը հատկացված 20 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.3.5. Միջանկյալ ստուգման եղանակը և գնահատման սկզբունքները պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները: Դրանք պետք է նկարագրված լինեն տվյալ դասընթացի առարկայական ծրագրում և տեղեկացվեն ուսանողներին դասընթացի սկզբում:

6.4. Հանրագումարային ստուգում

6.4.1. Հանրագումարային ստուգման ձևերն են համարվում քննությունները և հանրագումարային ստուգարքները /այն մոդուլներից, որոնցից քննություն նախատեսված չէ/:

6.4.2. Հանրագումարային ստուգումը նպատակ ունի բացահայտել և գնահատել ուսանողների տեսական գիտելիքներն ու գործնական հմտությունները տվյալ դասընթացից:

6.4.3. Հանրագումարային ստուգման արդյունք է համարվում գնահատականը՝ վերը բերված աղյուսակում վերջնական քննությանը հատկացված 30 միավորի կամ վերջնական ստուգմանը հատկացված 50 միավորի շրջանակներում, որը դասախոսի կողմից նշանակվում է ընդհանուր ստուգման տեղեկագրի համապատասխան բաժնում:

6.4.4. Հանրագումարային ստուգումների ժամանակացույցը գնահատման գործոնների և սկզբունքների հետ միասին հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից և տեղեկացվում դասախոսներին ու ուսանողներին՝ անցկացման ժամկետից ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ:

6.4.5. Տվյալ դասընթացից հանրագումարային ստուգմանը մասնակցելու և գնահատվելու իրավունք ունեն միայն այն ուսանողները, ում հաճախելիության տոկոսը բարձր է առարկայական ծրագրում նշված նվազագույն ցուցանիշից, ինչը 40%-ից ցածր չպետք է լինի:

6.4.6. Հաճախելիությունը գնահատվում է հետևյալ կերպ.

հաճախելիության ցուցանիշը հավասար է մի մեծության, որը ստացվում է ուսանողի կողմից տվյալ դասընթացին ներկա գտնված ժամաքանակը բազմապատկած 10-ով և արդյունքը բաժանած դասընթացի ընդհանուր ժամաքանակի վրա:

6.4.7. Հանրագումարային ստուգման գնահատման ժամանակ այդ գնահատման բաղադրիչ տարրերը պետք է ունենան իրենց տեսակարար կշիռները, որոնք պետք է նախապես սահմանված լինեն դասախոսի կողմից՝ հաշվի առնելով տվյալ դասընթացի առանձնահատկությունները:

6.4.8. Ուսանողի վերջնական գնահատականը հաշվարկվում է վերոհիշյալ բոլոր գործոններից վաստակած միավորների գումարումով: Ստացված գումարային միավորը՝ ըստ գնահատման վերոնշյալ համակարգի, համապատասխանեցվում է տառային նշանակումներին: Ըստ այդմ՝ համապատասխան A-, A, A+, B-, B, B+, C-, C, C+, S գնահատականները դրվում են տեղեկագրի և ուսանողի ստուգման գրքույկի մեջ, իսկ D, F, U գնահատականները՝ միայն տեղեկագրի մեջ:

6.4.9. Այն ուսանողները, ովքեր ստանում են «անբավարար», «չստուգված» կամ «չներկայացած», համարվում են ակադեմիական պարտք ունեցողներ:

7. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

7.1 Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԳՊՀ ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն՝ ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

7.2 Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

7.3 Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ծրագրային կրեդիտների քանակը,
- որակավորման կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

7.4 Ծրագրային կրեդիտը (ԾԿ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

7.5 Որակավորման կրեդիտը (ՈԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով.

$$ՈԿ = \sum \text{Կրեդիտ}$$

7.6 Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$ՎՄ = \sum \text{Կրեդիտ} \quad \text{Գարդ.}$$

որտեղ Գարդ.-ը ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է (օրինակ, եթե 2 կրեդիտանոց դասընթացը գնահատվել է 3,0, ապա տվյալ դասընթացի վարկանիշային միավորը հավասար է 2 կրեդիտ 3,0 = 6՝ 8 հնարավորից):

7.7 Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

7.8 Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

8. Լուծարքի, առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

8.1 Լուծարք

8.1.1 Լուծարքը կազմակերպվում է հինգ գործոնների փաստացի արդյունքներով, ապա դեկանատում հաշվարկվում է վերջնական ամփոփիչ գնահատականը, որը նշվում է ձևաթերթում:

8.1.2 Լուծարք կազմակերպվում է ամփոփիչ քննության կամ ստուգարքի համար:

8.1.3 Լուծարք է կազմակերպվում, երբ վերջնական հաշվարկային գնահատականը համապատասխանում է «D»-ի քննության պարագայում /կամ «U»-ի ստուգարքի պարագայում/ և գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը ավել է կամ հավասար 25–ի և պակաս՝ 40–ից:

8.1.4 Ամփոփիչ ստուգումից հետո դեկանատը կազմում է լուծարքին թույլատրված ուսանողների ցուցակը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

8.1.5 Լուծարքին թույլատրված ուսանողը քննությունը կամ ստուգարքը կարող է հանձնել երկու անգամ՝ դեկանատի կողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան, իսկ առանձին դեպքերում՝ անհատական ժամանակացույցով:

8.2 Առարկայի կրեդիտը չստանալու և համալսարանից հեռացվելու պայմանները

Ուսանողը չի ստանում տվյալ առարկայի կրեդիտը, եթե՝

8.2.1 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, իսկ հանրագումարային գնահատականի արժեքը պակաս է 25-ից,

8.2.2 այդ առարկայից ստացել է «D» կամ «U» գնահատական, հանրագումարային գնահատականի արժեքը ավել կամ հավասար է 25–ի և պակաս 40-ից, թույլատրվել է ամփոփիչ քննության կամ ստուգարքի լուծարքին, և լուծարքի արդյունքում գումարային ամփոփիչ գնահատականի արժեքը չի բարձրացել 40-ից:

8.2.3 Կիսամյակի արդյունքներով ուսանողը համալսարանից հեռացվում է, եթե նա չի հավաքել 30 կրեդիտ, այսինքն՝ մեկ և ավելի առարկայից կրեդիտ չի ստացել:

9. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

9.1 Դրական գնահատված դասընթացի քննության/ստուգման կրկնում (վերահանձնում) չի թույլատրվում:

9.2 Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն 2 աշխատանքային օրվա ընթացքում դեկանատում գրանցված սահմանված կարգի բժշկական տեղեկանքի կամ դիմումի առկայության դեպքում:
9.3 Հարգելի պատճառով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողը դեկանատի թույլտվությամբ լուծարային շրջանի ընթացքում կարող է վերահանձնել այն:
9.4 Եզրափակիչ քննությունից «անբավարար» գնահատական ստացած կամ անհարգելի պատճառներով դրան չմասնակցած ուսանողը ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում կարող է վերահանձնել այն, եթե տվյալ դասընթացից նրա հանրագումարային գնահատականը փոքր է 40-ից, սակայն բարձր է 25-ից:
9.5 Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

Ծրագրի եզրափակիչ ատեստավորումը

10.1. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի կատարումով ու պաշտպանությամբ:
10.2. Ավարտական աշխատանքի թեման ընտրվում և հաստատվում է նախաավարտական ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում: Աշխատանքը կատարվում է ավարտական ուստարվա ընթացքում:
10.3. Ավարտական աշխատանքի պաշտպանության կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 4 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.
ա. աշխատանքի ներկայացումը մասնագիտական ամբիոնի քննարկմանը: Աշխատանքի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը պետք է ներառի կատարած աշխատանքի վերաբերյալ դրական եզրակացություն,
բ. ավարտական աշխատանքի նախնական քննարկում մասնագիտական ամբիոնում՝ աշխատանքի հեղինակի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում բակալավրի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում լրամշակել աշխատանքը և լրացուցիչ քննարկման ներկայացնել այն: Դրական եզրակացության դեպքում ամբիոնի կողմից աշխատանքը երաշխավորվում է պաշտպանության,
գ. մասնագիտական ամբիոնի կողմից աշխատանքը գրախոսության ուղարկելու գործընթացի կազմակերպում,
դ. ավարտական աշխատանքի պաշտպանություն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստում և բակալավրի աստիճանի շնորհում:
10.4. Ավարտական աշխատանքի գնահատման ընդհանուր որակական չափանիշների համար սահմանված են գնահատման միավորների չափաքանակներն՝ ըստ Աղյուսակ 8-ի և Աղյուսակ 13-ի:

Ծրագրի ավարտական պահանջները

11.1 Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:
11.2 Մինչև ամփոփիչ ատեստավորումն ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 1,7: Հակառակ պարագայում որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ: Բոլոր ուսանողները,

մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 39 կրեդիտ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 36 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), 9 կրեդիտ՝ ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ պարտադիր 6 կրեդիտ, իսկ 3 կրեդիտ՝ կամընտրական դասընթացների առաջարկվող ցանկից), և առնվազն 18 կրեդիտ՝ պրակտիկայից և ամփոփիչ ատեստավորման ձևերից /ըստ մասնագիտությունների կրթամասերին հատկացվող կրեդիտների քանակը կարող է ունենալ մինչև 20% շեղում/:

11.3 Մնացած 171 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է՝ ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և մասնագիտության համար տրվում է առանձին (մինչև 24 կրեդիտ կարող է հատկացվել մասնագիտության շրջանակներում որոշակի ուղղություններով մասնագիտացում իրականացնելու համար):

11.4 Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվում է և համապատասխան որակավորումներով դիպլոմները (սովորական, գերազանցության) շնորհվում են՝ համաձայն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի:

12. Կրեդիտների փոխանցումը

12.1 Այլ բուհերից ԳՊՀ բակալավրի կրթական ծրագիր կրեդիտները փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի փոխադարձ համաձայնությամբ՝ ECTS կրեդիտների փոխանցման կանոնների պահպանմամբ:

12.2 Այլ ուսումնական ծրագրից ԳՊՀ բակալավրի ուսումնական ծրագիր կրեդիտներ կարող են փոխանցվել, եթե՝

ա) դրանց բովանդակությունները միանման են,

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

12.3 Այլ բուհում ԳՊՀ ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի (կիսամյակ, ուստարի) անցկացման դեպքում այդ ժամանակահատվածի ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, ԳՊՀ-ի և ընդունող/հյուրընկալող բուհի միջև:

12.4 Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործընթացների կազմակերպման համար Համալսարանն ունի ECTS-ի բուհական համակարգմամբ զբաղվող կառույց:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1 Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար ԳՊՀ-ի կողմից առաջադրվող կամընտրական դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում ‹ներառյալ՝ օտարերկրյա›,

- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ՝ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը ԳՊՀ-ում, համաձայն գործող կարգի,
- հիմնավորված կերպով դիմելու և ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար,
- բակալավրի աստիճանը և համապատասխան որակավորումը հաստատող պաշտոնական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված (հայերեն և անգլերեն)՝ համաձայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման:

13.2. Ուսանողը պարտավոր է՝
- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն հետևել դրա պահանջներին,
- կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել իր ուսումնառության ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:

2025-2026 ուսումնական տարի

Աշնանային կիսամյակ

Աղյուսակ 15

03 սեպտեմբերի 2025թ. – 21 դեկտեմբերի 2025թ.	
Ուսուցման սկիզբ	03 սեպտեմբեր
1-ին միջանկյալ քննություն	29 հոկտեմբերի -02 նոյեմբերի
2-րդ միջանկյալ քննություն	24 դեկտեմբերի - 28 դեկտեմբերի
Ինքնուրույն հետազոտական աշխատանքների հանձնում, գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	17 դեկտեմբերի -21 դեկտեմբերի
Ստուգարքների հանձնում	24 դեկտեմբերի - 28 դեկտեմբերի
Ուսուցման ավարտ	21 դեկտեմբերի
Քննաշրջան	7 հունվարի - 25 հունվարի
Ձմեռային արձակուրդներ	29 դեկտեմբերի – 06 հունվարի

<u>Գարնանային կիսամյակ</u>

Աղյուսակ 16

04 փետրվարի 2026 թ. – 24 մայիսի 2026թ.	
Ուսուցման սկիզբ	04 փետրվարի
1-ին միջանկյալ քննություն	01 ապրիլի - 05 ապրիլի

2-րդ միջանկյալ քննություն	27 մայիսի - 31 մայիսի
Ինքնուրույն հետազոտական աշխատանքների հանձնում, գործնական պարապմունքներին ակտիվության ամփոփում	20 մայիսի -24 մայիսի
Ստուգարքների հանձնում	27 մայիսի - 31 մայիսի
Ուսուցման ավարտ	24 մայիսի
Քննաշրջան	03 հունիսի – 21 հունիսի
Ավարտական աշխատանքի պաշտպանություն	06 մայիսի- 31 մայիսի
Ամառային արձակուրդներ	28 հունիսի – 31 օգոստոսի

ՄԱՍ II. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԵՐ

1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ - տնտեսագիտական դասընթացներ
1.1 Պարտադիր դասընթացներ

24/Բ65- Ռուսաց լեզու – 1 (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է
ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները, ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը, զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:
Կրթական արդյունքները
Դասընթացի ավարտին ուսանողը
կիմանա ռուսաց լեզվի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները, հաղորդակցման պայմաններին համապատասխան ընտրվող խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները, մասնագիտական բնագրերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:
Կկարողանա ընկալել, համառոտագրել և ընդլայնել տեքստի տեղեկատվությունը, մեկնաբանել տեքստը, փոխակերպել տեքստի ոճը, տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, տեղեկություն ներկայացնել և մասնակցել բանավեճերի, լուծել իրավիճակային խնդիրներ, կառուցել բանավոր և գրավոր խոսք:
Կտիրապետի ռուսաց լեզվով հաղորդակցվելու կարողություններին, ռուսաց լեզվով դատողություններ անելու, լուծումների նոր տարբերակներ առաջարկելու և դրանք հիմնավորելու հմտություններին:
Բովանդակություն
Тема 1. Фонетика: звуки и буквы русского языка, ударение, слог, правила чтения. **Тема 2.** Фонетика: чередование звуков (гласных и согласных), редукция, интонация. **Тема 3.** Фонетика: фонетический разбор слова, интонационные конструкции (ИК-1–ИК-4). **Тема 4.** Лексика: базовые понятия. Активная и пассивная лексика. Тематические группы слов (знакомство, семья, дом) . **Тема 5.** Лексика: многозначность слов, прямое и переносное значение. **Тема 6.** Лексика: синонимы, антонимы, омонимы, паронимы . **Тема 7.** Лексика: жаргонизмы и сленг в повседневном общении (молодёжный жаргон, интернет-сленг) . **Тема 8.** Лексика: диалектизмы и просторечия (основные примеры, стилистическая окраска). **Тема 9.**

Лексика: профессионализмы и термины (в бытовых сферах: медицина, спорт, IT). **Тема 10.** Лексика: неологизмы (новые слова, заимствования, слова пандемийного и цифрового периода). **Тема 11.** Лексика: архаизмы и историзмы (устаревшая лексика, примеры из литературы и речи). **Тема 12.** Фразеология: устойчивые выражения приветствия, прощания, благодарности, извинения, этикет . **Тема 13.** Фразеология: простые фразеологизмы и идиомы повседневного общения (значение, употребление) . **Тема 14.** Словообразование: морфемный анализ слова (корень, приставка, суффикс, окончание, постфикс) . **Тема 15.** Словообразование и повторение семестра: основные способы словообразования (приставочный, суффиксальный, сложение, аббревиация и др.). Обобщение лексикологии и фонетики, итоговый контроль.

24/Բ66- Ռուսաց լեզու – 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է

ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները, ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը ,զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

կիմանա ռուսաց լեզվի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները, հաղորդակցման պայմաններին համապատասխան ընտրվող խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները, մասնագիտական բնագրերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:

Կկարողանա ընկալել, համառոտագրել և ընդլայնել տեքստի տեղեկատվությունը, մեկնաբանել տեքստը, փոխակերպել տեքստի ոճը, տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, տեղեկություն ներկայացնել և մասնակցել բանավեճերի, լուծել իրավիճակային խնդիրներ, կառուցել բանավոր և գրավոր խոսք:

Կտիրապետի ռուսաց լեզվով հաղորդակցվելու կարողություններին, ռուսաց լեզվով դատողություններ անելու, լուծումների նոր տարբերակներ առաջարկելու և դրանք հիմնավորելու հմտություններին:

Բովանդակություն

Тема 1. Имя существительное: род, число, именительный падеж. **Тема 2.** Имя существительное: винительный падеж (прямое дополнение). **Тема 3.** Имя существительное: родительный падеж (принадлежность, отрицание, количество) . **Тема 4.** Имя существительное: дательный падеж (кому? чему?). **Тема 5.** Имя существительное: творительный падеж (с кем? с чем?. **Тема 6.** Имя существительное:

предложный падеж (о ком? о чём?). **Тема 7.** Имя существительное: склонение существительных (1, 2, 3 склонение). **Тема 8.** Имя прилагательное: согласование, краткие и полные формы . **Тема 9.** Имя прилагательное: степени сравнения. **Тема 10.** Глагол: настоящее время, спряжение I и II. **Тема 11.** Глагол: прошедшее время, вид (совершенный/несовершенный). **Тема 12.** Глагол: будущее время (простое и составное). **Тема 13.** Глаголы движения (идти/ходить, ехать/ездить). **Тема 14.** Местоимения, числительные, наречия. **Тема 15.** Повторение морфологии и обобщение семестра.

24/Բ67- Ռուսաց լեզու – 3 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները, ձևավորել, ընդլայնել և համակարգել մասնագիտական բառապաշարը ,զարգացնել վերլուծելու, համադրելու, դատողություն անելու կարողությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

կիմանա ռուսաց լեզվի լեզվական համակարգը, քերականական առանձնահատկությունները, ոճական ռեսուրսները, հաղորդակցման պայմաններին համապատասխան ընտրվող խոսքային միավորների կիրառական առանձնահատկությունները, մասնագիտական բնագրերի գործնական թարգմանության առանձնահատկությունները:

Կկարողանա ընկալել, համառոտագրել և ընդլայնել տեքստի տեղեկատվությունը, մեկնաբանել տեքստը, փոխակերպել տեքստի ոճը, տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, ամփոփել և հակիրճ ներկայացնել, տեղեկություն ներկայացնել և մասնակցել բանավեճերի, լուծել իրավիճակային խնդիրներ, կառուցել բանավոր և գրավոր խոսք:

Կտիրապետի ռուսաց լեզվով հաղորդակցվելու կարողություններին, ռուսաց լեզվով դատողություններ անելու, լուծումների նոր տարբերակներ առաջարկելու և դրանք հիմնավորելու հմտություններին:

Բովանդակություն

Тема 1. Словосочетание: типы и способы связи слов. **Тема 2.** Простое предложение: главные члены (подлежащее и сказуемое). **Тема 3.** Простое предложение: второстепенные члены (определение, дополнение, обстоятельство). **Тема 4.** Однородные члены предложения и обобщающие слова. **Тема 5.** Обособленные второстепенные члены (определения, обстоятельства, дополнения). **Тема 6.** Вводные слова, обращения, вставные конструкции. **Тема 7.** Типы предложений по цели высказывания и интонации. **Тема 8.** Сложносочинённые предложения. **Тема 9.**

Сложноподчинённые предложения: придаточные определительные и изъяснительные. **Тема 10.** Сложноподчинённые предложения: придаточные обстоятельственные (времени, места, причины). **Тема 11.** Сложноподчинённые предложения: придаточные условия, цели, следствия, уступки . **Тема 12.** Бессоюзные сложные предложения. **Тема 13.** Прямая и косвенная речь, цитаты. **Тема 14.** Причастия и деепричастия в предложении (обороты). **Тема 15.** Итоговое повторение синтаксиса, сложные случаи пунктуации и обобщение семестра.

24/Բ30- Օտար լեզու – 1 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

1. ուսուցանել ուսանողների լեզվական գիտելիքներ անգլերեն լեզվից լեզվական բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել նրանց հաղորդակցական հմտությունները՝ մասնագիտական տերմինաբանությամբ հագեցած տեքստերի, աուդիոնյութերի ուսումնասիրության, քննարկումների, դերային խաղերի անցկացման և մասնագիտական ոլորտի վերաբերյալ բառապաշարի հարստացման միջոցով, ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները:
2. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. անգլերենի քերականական և ոճական առանձնահատկությունները,
2. մասնագիտական տեքստերի գործնական թարգմանության առանձնահատկությունները,
3. A1 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

Կկարողանա՝

1. ընկալել և վերարտադրել կարդացած և ունկնդրած տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը,
2. շարադրել խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան,
3. կատարել A1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն, փոխակերպել և մեկնաբանել տեքստը,
4. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, և հակիրճ ներկայացնել,
5. կիրառել մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:

Կտիրապետի՝

1. թարգմանություններ կատարելու հմտությունների,
2. կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները և գործնական հմտությունները ամենօրյա իրավիճակներում և մասնագիտական գործընթացում,
3. կիրառելու յուրացրած լեզվական բառապաշարը տարբեր իրավիճակներում,
4. ստեղծագործաբար կիրառելու և զարգացնելու ձեռք բերած գիտելիքները և կարողությունները:

Բովանդակություն

Unit 1. Where are you from. Grammar material includes: Statements with *be*; possessive adjectives; Wh-questions with *be*; and Yes/No questions with *be*. **Unit 2. What do you do?:** Grammar material includes: Simple present Wh-questions and statements; and Time expressions, such as *at, in, on, until, before*, and *after*. **Unit 3. How much are these?:** Grammar material includes: Demonstratives (*this, that, these, those*); the use of *one* and *ones*; Preferences; and Comparisons with adjectives, including comparative forms (e.g., adding *-er* or using *more stylish*). **Unit 4. Do you play the guitar?:** Grammar material includes: Simple present questions and short answers; and the structure Verb + *to* + verb (using verbs like *would, like, love, want* followed by the infinitive with *to*). **Unit 5. What an interesting family:** Grammar material includes: The Present continuous tense, used to talk about actions happening now ; and Quantifiers, specifically *a lot of, all, few, nearly all*, and *no one*. **Unit 6. How often do you run:** Grammar material includes: Adverbs of frequency (such as *always, usually*, and *never*); and Questions with *how*, including *how long, how often*, and *how well*. **Unit 7.We Went Dancing** Grammar material includes: The Simple past tense (statements, questions, and negatives)12; and the Past of *be* (*was/were*). **Unit 8. How's the Neighborhood:** Grammar material includes: The use of *There is/are, one, any, some*; Prepositions for location (e.g., *in, on, next to*); and Quantifiers, such as *how many, how much, a lot, a few, a little*, and *none*.

24/Բ31- Օտար լեզու – 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

1. ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել նրանց հաղորդակցական հմտությունները՝ մասնագիտական տերմինաբանությամբ հագեցած տեքստերի, աուդիոնյութերի ուսումնասիրության, քննարկումների, դերային խաղերի անցկացման և մասնագիտական ոլորտի վերաբերյալ բառապաշարի հարստացման միջոցով:
2. Ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները:

3. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. անգլերենի քերականական և ոճական առանձնահատկությունները,
2. մասնագիտական տեքստերի գործնական թարգմանության առանձնահատկությունները,
3. A2 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

Կկարողանա՝

1. ընկալել և վերարտադրել կարդացած և ունկնդրած տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը,
2. շարադրել խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան,
3. կատարել A2 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն, փոխակերպել և մեկնաբանել տեքստը,
4. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, և հակիրճ ներկայացնել,
5. կիրառել մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:

Կտիրապետի՝

1. թարգմանություններ կատարելու հմտությունների,
2. ձեռք բերված տեսական գիտելիքները և գործնական հմտությունները ամենօրյա իրավիճակներում և մասնագիտական գործընթացում կիրառելուն,
3. յուրացրած լեզվական բառապաշարը տարբեր իրավիճակներում կիրառելուն,
4. ձեռք բերված գիտելիքները և կարողությունները ստեղծագործաբար կիրառելուն և զարգացնելուն:

Բովանդակություն

Unit 9. What does she look like: Grammar material includes: Describing people16; and Modifiers with participles (e.g., *wearing*) and prepositions (e.g., *with*). **Unit 10. Have you ever been there?** Grammar material includes: The Present perfect with *already* and *yet*; distinguishing the Present perfect versus the simple past; and the use of *for* and *since* to indicate duration. **Unit 11. It's a really nice city:** Grammar material includes: Adverbs before adjectives (e.g., *really, too, very*); Conjunctions (*and, but, though, however*); and Modal verbs *can* and *should* for advice and possibilities. **Unit 12. It's important to get rest:** Grammar material includes: Adjective + infinitive or Noun + infinitive for advice (e.g., *It's important to*); and Modal verbs *can, could*, and *may* for requests and suggestions. **Unit 13. What would you like:** Grammar material includes: Expressions for agreement and disagreement (*So, too, neither, either*); and Modal verbs *would* and *will* for requests (e.g., *I'd like*). **Unit 14. It's the coldest city!:** Grammar material includes: Comparisons with adjectives (comparative and superlative forms); and Questions with *how*, such as *how cold,*

how far, how long, how high, and *how deep*. **Unit 15. What Are You Doing Later?:** Grammar material includes: The Future tense using the present continuous and *be going to*. **Unit 16. How have you Changed:** Grammar material includes: Describing changes, often using several tenses (present, past, and present perfect); and Verb + infinitive (for future plans/wishes, e.g., *I want to learn*).

24/Բ32- Օտար լեզու – 3 (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)
3-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է՝

4. ձևավորել ուսանողների լեզվական գիտելիքները անգլերեն լեզվից՝ լեզվի բոլոր մակարդակներում (կարդալ, գրել, ունկնդրել, խոսել), զարգացնել նրանց հաղորդակցական հմտությունները՝ մասնագիտական տերմինաբանությամբ հագեցած տեքստերի, աուդիոնյութերի ուսումնասիրության, քննարկումների, դերային խաղերի անցկացման և մասնագիտական ոլորտի վերաբերյալ բառապաշարի հարստացման միջոցով:
5. Ձևավորել և զարգացնել ուսանողի բանավոր և գրավոր հաղորդակցման, թարգմանչական կարողությունները:
6. Զարգացնել ձեռք բերված գիտելիքները համապատասխան խոսքային իրավիճակներում:

Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

4. անգլերենի քերականական և ոճական առանձնահատկությունները,
5. մասնագիտական տեքստերի գործնական թարգմանության առանձնահատկությունները,
6. B 1 մակարդակին համապատասխան բառապաշար և քերականական կառույցներ:

Կկարողանա՝

6. ընկալել և վերարտադրել կարդացած և ունկնդրած տեքստերի և երկխոսությունների հիմնական բովանդակությունը,
7. շարադրել խոսքային իրավիճակին համապատասխան գրավոր և բանավոր պատասխան,
8. կատարել B1 մակարդակի տեքստերի թարգմանություններ անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն, փոխակերպել և մեկնաբանել տեքստը,
9. մասնագիտական տեքստից դուրս բերել տերմինները, թարգմանել, վերլուծել, ընդհանրացնել, և հակիրճ ներկայացնել,
10. կիրառել մասնագիտական բառապաշարը և քերականական գիտելիքները՝ ճիշտ բանավոր և գրավոր խոսք կառուցելիս:

Կտիրապետի՝

5. թարգմանություններ կատարելու հմտությունների,
6. ձեռք բերված տեսական գիտելիքները և գործնական հմտությունները ամենօրյա իրավիճակներում և մասնագիտական գործընթացում կիրառելուն,
7. յուրացրած լեզվական բառապաշարը տարբեր իրավիճակներում կիրառելուն,
8. ձեռք բերված գիտելիքները և կարողությունները ստեղծագործաբար կիրառելուն և զարգացնելուն:

Բովանդակություն

Unit 1. A Time to Remember: Grammar material includes: Past tense, specifically **used to** for habitual actions. **Unit 2. Caught in the Rush:** Grammar material includes: Expressions of quantity (*too much, too many, less, fewer*); and Indirect questions derived from Wh-questions. **Unit 3. Time for a Change:** Grammar material includes: Evaluations and comparisons with adjectives and nouns (e.g., *enough, too, as... as*)...; and **Wish + past tense** to refer to present wishes.... **Unit 4. I've Never Heard of That:** Grammar material includes: **Simple past vs. present perfect**; and Sequence adverbs (*first, then, next, after that, finally*). **Unit 5. Going Places:** Grammar material includes: Future with *be going to* and *will*; and Modals for necessity and suggestion (*must, need to, should, ought to, 'd better, don't have to*). **Unit 6. OK. No Problem!** Grammar material includes: Two-part verbs (phrasal verbs)...; and Requests with modals and *Would you mind*....**Unit 7. What's This For?** Grammar material includes: **Infinitives and gerunds for uses and purposes**31...; and Imperatives and infinitives for giving suggestions. **Unit 8. Let's Celebrate!:** Grammar material includes: **Relative clauses of time** using *when*...; and **Adverbial clauses of time** using *when, after*, and *before*.

23/Բ19- Հայոց պատմության հիմնահարցեր - 1 (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է՝

Հիմնարար գիտելիքներ տալ հայոց պատմության հին և միջին շրջանի վերաբերյալ, ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, որպես ազգի հարատևման գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում, որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում, հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում և այլն, Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձևավորել այն գիտակցությունը, որ ազգի հարատեման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է, նաստել Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ ամբողջական պատկերացման

ձևավորմանը, նպաստել նորագույն շրջանի հայկական մշակույթի զարգացումը և առանձնահատկությունները պայմանավորող պատմական պայմանների իմացությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա համակողմանի ու խոր գիտելիքներ հայ ժողովրդի պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանի վերաբերյալ:

Կկարողանա քննական ու ինքնուրույն մոտեցումներ ձևավորել հին և միջնադարյան ժամանակաշրջանի պատմական երևույթները գնահատելու առումով,

Կտիրապետի հայոց պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանների երևույթները պատմականորեն գնահատելու, վերլուծելու հմտություններին, կհասկանա ու կարժևորի դրանց ազդեցությունն ու օրգանական կապը հետագա պատմական զարգացումների հետ:

Բովանդակություն

Թեմա 1. Հայոց հայրենիքը և հայ ժողովրդի կազմավորումը: **Թեմա 2.** Վանի թագավարություն: **Թեմա 3.** Երվանդունիների պետությունը: **Թեմա 4.** Արտաշեսյանների թագավորությունը: **Թեմա 5.** Արշակունիների թագավարությունը: **Թեմա 6.** Հայկական մշակույթը 4-9-րդ դդ.: **Թեմա 7.** V դարի ազգային ազատագրական շարժումները: **Թեմա 8.** Բագրատունիների թագավորությունը: **Թեմա 9**. Հայաստանը Զաքարյանների օրոք: **Թեմա 10.** Կիլիկիայի հայկական պետությունը:

23/Բ20- Հայոց պատմության հիմնահարցեր - 2 (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է՝

Հիմնարար գիտելիքներ տալ Հայոց պատմության նոր և նորագույն շրջանի վերաբերյալ, ամրապնդել հարգանք և հպարտություն հայրենիքի, սեփական պատմության, ավանդույթների և ազգային առանձնահատկությունների հանդեպ, դաստիարակել ազգային ու համամարդկային արժեքներ կրող սոցիալապես ակտիվ անձ և քաղաքացի, որպես ազգի հարատևման գրավականի՝ պետականության անհրաժեշտության գիտակցության ձևավորում ու ամրապնդում, որպես պետականության պահպանման և զարգացման նախադրյալի ազգային գաղափարախոսության անհրաժեշտության գիտակցության ձևավորում, հայկական մշակույթի ձևավորումը և զարգացումը պայմանավորող պատմական պայմանների իմացության ամրապնդում և այլն, Հայաստանի երեք հանրապետությունների պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ ձևավորել այն գիտակցությունը, որ ազգի հարատևման հիմնական պայմանը պետականության անհրաժեշտությունն է, նպաստել Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման հեռանկարների վերաբերյալ ամբաղջական պատկերացման

ձևավորմանը, նպաստել նորագույն շրջանի հայկական մշակույթի զարգացումը և առանձնահատկությունները պայմանավորող պատմական պայմանների իմացությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանի առանցքային հիմնահարցերը:

Կկարողանա ներկայացնել հայոց պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանի ազատագրական պայքարի կարևորագույն դրվագները, Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության և Սփյուռքի առանցքային հիմնախնդիրները, 20-րդ դարում հայոց նորագույն պետականության ձևավորման գործընթացները:

Կտիրապետի հայոց պատմության նոր և նորագույն ժամանակաշրջանների օրինաչափություններին և առանձնահատկություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Հայ ազգային ազատագրական շարժումները 16-18-րդ դարերում: **Թեմա 2.** Հայկական հարցի առաջացումը: **Թեմա 3.** Հայ ազգային-քաղաքական կուսակցություններ: **Թեմա 4.** Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին. հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում: **Թեմա 5.** Հայոց ցեղասպանությունը: **Թեմա 6**. Հայաստանի առաջին Հանրապետությունը (1918-1920թթ.): **Թեմա 7.** Խորհրդային Հայաստան: **Թեմա 8.** Հայաստանի անկախության գործընթացը. ՀՀ հռչակումը: **Թեմա 19.** Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

23/Բ53- Տրամաբանության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին մի շարք տրամաբանական հիմնախնդիրների, կանոնների և օրենքների, որը կօգնի նրանց իրենց մասնագիտության ոլորտում կիրառելու և առավել շոշափելի արդյունքների հասնելու: Տրամաբանական գիտելիքը կնպաստի ուսանողի կանոնավոր մտածողության զարգացմանը, սեփական մտքերի կոնկրետ ներկայացմանը և հիմնավորմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը

կիմանա տրամաբանության օրենքները և սահմանման ու բաժանման կանոնները, հասկացության կազմավորման ձևերը, մտահանգման տարատեսակները:

Կկարողանա վերլուծել և մեկնաբանել փաստերը, բացատրել մտքի կառուցվածքի տրամաբանական կանոններն ու օրենքները, ճշմարիտ եզրակացություններ ստանալ և հիմնավորել գիտական գիտելիքները:

Կտիրապետի բանավեճերի, ապացուցման, հերքման, քննադատության գործընթացներին, գիտատեսական և գործնական ուսումնասիրությունների ժամանակ տրամաբանության ճանաչողական և մեթոդաբանական գործառույթների կիրառմանը, կանոնավոր մտածողության հմտությունների, տրամաբանության օրենքների պահանջների կապակցմանը մասնագիտական առարկայի պահանջների հետ:

Բովանդակություն

Թեմա 1. Տրամաբանության առարկան: **Թեմա 2.** Հասկացության ընդհանուր բնութագիրը: **Թեմա 3.** Սահմանում և բաժանում: **Թեմա 4.** Դատողություն: **Թեմա 5.** Մտահանգում: **Թեմա 6.** Դեդուկտիվ մտահանգումներ: **Թեմա 7.** Ինդուկտիվ մտահանգում: **Թեմա 8.** Ապացուցում և հերքում: **Թեմա 9.** Վարկած: Գիտական տեսության տրամաբանական հիմքերը: **Թեմա 10.** Տրամաբանության օրենքները:

21/Բ10- Իրավագիտության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ապահովել իրավագիտության հիմնարար դրույթների, պետության և իրավունքի ծագման ու գործառույթների, պատմական տիպերի և ձևերի, իրավունքի հիմնական ճյուղերի հիմունքների իմացություն, գիտելիքներ հաղորդել հասարակության պետաիրավական վերնաշենքի, սոցիալական կյանքի կազմակերպման պետաիրավական ձևերի ու կառուցակարգերի, հասարակության, պետության և իրավունքի բազմաթիվ ու բազմաբնույթ առնչությունների վերաբերյալ:

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել մարդու իրավունքների և ազատությունների հասարակության պետաիրավական վերնաշենքի կառուցվածքի և գործառույթների իմացություն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. իրավունքի և պետության ծագումն ու հիմնական հատկանիշները,
2. իրավունքի և պետության գործառույթները,
3. իրավունքի և պետության պատմական տիպերը,
4. իրավունքի հիմնական ձևերը (աղբյուրները),
5. պետության ձևերը,
6. մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները,
7. հասարակության քաղաքական համակարգի կառուցվածքը և պետության դերը քաղաքական համակարգում,
8. իրավունքի համակարգը կազմող ճյուղերի հիմունքները:

Կկարողանա՝

1. սահմանել «իրավունք», «պետություն», «պետության պատմական տիպ», «պետության ձև», «իրավունքի համակարգ», «իրավանորմ», «իրավահարաբերություն» հասկացությունները,
2. ներկայացնել իրավունքի և պետության ծագման նախադրյալները,
3. բնութագրել իրավունքի և պետության հիմնական հատկանիշները,
4. դասակարգել իրավունքի և պետության պատմական տիպերը,
5. տարբերակել իրավունքի աղբյուրները,
6. ներկայացնել պետության հիմնական ձևերը,
7. դասակարգել իրավունքի և պետության գործառույթները,
8. վերլուծել իրավունքի հիմնական ճյուղերը:

Կտիրապետի՝

1. սահմանադրական իրավունքի հիմնական ինստիտուտներին,
2. վարչական իրավունքի հիմունքներին,
3. քաղաքացիական իրավունքի հիմունքներին,
4. աշխատանքային իրավունքի հիմունքներին,
5. բնապահպանական իրավունքի հիմունքներին,
6.ընտանեկան իրավունքի հիմունքներին,
7.ֆինանսական իրավունքի հիմունքներին,
8.քրեական իրավունքի հիմունքներին,
9. միջազգային իրավունքի հիմունքներին:

Բովանդակություն

Թեմա 1. Իրավագիտության ուսումնասիրման առարկան և մեթոդները: **Թեմա 2.** Պետության և իրավունքի ծագումը: **Թեմա 3.** Պետության ծագման մասին հիմնական ուսմունքները: **Թեմա 4.** Պետության հիմնական տարբերիչ հատկանիշները: **Թեմա 5.** Պետության և իրավունքի պատմական տիպերը: **Թեմա 6.** Պետության և իրավունքի ձևերը: **Թեմա 7.** Պետության գործառույթները: **Թեմա 8.** Պետական ապարատի հասկացությունը և կառուցվածքը: **Թեմա 9.** Սահմանադրական իրավունքի հիմունքներ: **Թեմա 10** Քաղաքացիական իրավունքի հիմունքներ: **Թեմա 11** Քրեական իրավունքի հիմունքներ: **Թեմա 12.** Աշխատանքային իրավունքի հիմունքներ: **Թեմա 13** Ընտանեկան իրավունքի հիմունքներ: **Թեմա 14** Վարչական իրավունքի հիմունքներ: **Թեմա 15** Ֆինանսական իրավունքի հիմունքներ: **Թեմա 16** Բնապահպանական իրավունքի հիմունքներ: **Թեմա 17** Ազգային եվ միջազգային իրավունք:

23/Բ54- Փիլիսոփայության հիմունքներ- (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողին ներկայացնել փիլիսոփայության հիմնարար հարցադրումները, դրանց տեսական և գործնական նշանակությունները, տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում և աշխարհայացքի ձևավորման գործում: Փիլիսոփայական գիտելիքը հնարավորություն է ընձեռում խորությամբ ընկալելու և վերլուծելու շրջակա միջավայրն ու հասարակական հարաբերությունները, հստակ պատկերացում կազմել հասարակական կարծիքի, զարգացման առաջընթացի, հասարակական շահերի, պահանջմունքների վերաբերյալ և կանխատեսում անել զարգացման ուղղությամբ: Սովորողը, ծանոթանալով փիլիսոփայական ուսմունքներին, հստակ պատկերացում է կազմելու մարդու էության և գոյության հիմնախնդիրների վերաբերյալ: Հստակ կողմնորոշում կունենա ժամանակի և տարածության առարկայական պատկերացումների և գիտական ըմբռնման հարցում, ինչպես նաև մարդկային փոխհարաբերությունների, ճշմարիտի, արդարի, ստի և մոլորության խնդրի վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

կիմանա փիլիսոփայության գիտական-մեթոդաբանական, աշխարհայացքային, արժեբանական գործառույթները, ճշմարտության և մոլորության, գիտելիքի և հավատի, ռացիոնալի և իռացիոնալի սահմանազատման, տարբերակման սկզբունքները, քաղաքակրթական զարգացումների օրինաչափությունները և միտումները:

Կկարողանա պարզաբանել բնական և հասարակական գիտությունների գործառույթները, տարբերակել քաղաքակրթական հայեցակարգերն ու դրանց հարացույցերը, գնահատել փակ և բաց համակարգերի զարգացման առանձնահատկությունները, վերլուծել հասարակության պատմական զարգացման ուղիները:

Կտիրապետի փիլիսոփայության հիմնարար եզրույթներին, սկզբունքներին և նրանց տեսական ու գործնական նշանակությանը, կեցության, մարդկային գոյության իմաստի հիմնախնդիրներին:

Բովանդակություն

Թեմա 1. Փիլիսոփայության առարկայական տիրույթը և գործառույթները: **Թեմա 2.** Փիլիսոփայական մտքի զարգացման տրամաբանությունը: **Թեմա 3.** Գոյաբանություն: **Թեմա 4.** Փիլիսոփայական մարդաբանություն /անթրոպոլոգիա/: **Թեմա 5.** Հոգեկանի ծագման հիմնահարցը տեսական-գաղափարական տարասեռ համակարգերում: **Թեմա 6.** Իմացաբանություն: **Թեմա 7.** Սոցիալական փիլիսոփայություն:

23/Բ29-Հետազոտության մեթոդաբանություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել հետազոտություն կատարելու սկզբունքներին, ընդունված կանոններին, պահանջներին, զարգացնել մասնագիտական ոլորտում խնդրո առարկայի ուսումնասիրման կարողությունները: Ապահովել ինչպես ուսումնական, այնպես էլ ակադեմիական հետազոտական աշխատանք (ռեֆերատ, կուրսային աշխատանք, բակալավրի ավարտական աշխատանք կատարելու, հոդված գրելու) հիմնական սկզբունքները, հետազոտական աշխատանքի պլանավորման կանոնները, աշխատանքին առաջադրվող կառուցվածքային և բովանդակային պահանջները, գիտական աշխատանքի էթիկայի նորմերը, տեղեկատվություն հավաքելու, ուսումնասիրելու, վերլուծելու, համեմատելու, ընդհանրացնելու, մեջբերումներ ու հղումներ կատարելու, եզրակացություններ ու առաջարկություններ ձևակերպելու, այնուհետև դրանք ամփոփ ու գրագետ ներկայացնելու եղանակները: Դասընթացը կօգնի ուսանողներին արդյունավետ պլանավորել իրենց հետազոտությունները, պատրաստել գիտականության սկզբունքներին և գիտական էթիկայի կանոններին համապատասխանող աշխատանքներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

Կիմանա՝ ինչ է գիտական ճանաչողության հասկացությունը, հետազոտական աշխատանքի առանձնահատկությունները, ուսումնասիրության մեթոդները, տեղեկատվական աղբյուրների, մասնագիտական գրականության, վիճակագրական նյութի հետ աշխատելու կանոնները, հետազոտական աշխատանք կատարելու եղանակները, աշխատանքում հղումների կատարման կարգը:

Կկարողանա հիմնավորել թեմայի արդիականությունը, ներկայացնել ուսումնասիրության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրը, առանձնացնել հետազոտության հիմնական դրույթները, ձևակերպել եզրակացություններ և առաջարկություններ:

Կտիրապետի հետազոտական աշխատանքի մեթոդներին, արդի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մասնագիտական հիմնախնդրի ուսումնասիրության ձևերին, եզրակացությունների ներկայացման գիտական ոճին:

Բովանդակություն

Թեմա 1. Գիտական ճանաչողությունը, գիտահետազոտական աշխատանքների դասակարգումը: **Թեմա 2.** Գիտահետազոտական աշխատանքի ընդհանուր մեթոդաբանությունը: **Թեմա 3.** Գիտահետազոտական աշխատանքների տարատեսակները: **Թեմա 4.** Գիտահետազոտական աշխատանք գրելու ընդհանուր սկզբունքները: Մասնագիտական աղբյուրների բացահայտման եղանակները: **Թեմա 5.** Փաստարկման ընդհանուր մեթոդաբանությունը և ակադեմիական ազնվությունը /Մ. Զաքարյանի «Ազգային ինքնության պահպանման հիմնախնդիրները Հ. Մաթևոսյանի «Մեծամոր» էսսեում» հոդվածի օրինակով/ **Թեմա 6.** Հղումները գիտական հրապարակումներում: Հետազոտական աշխատանք կատարելիս առավել հաճախ

հանդիպող հասկացություններ: **Թեմա 7.** Ռեֆերատը որպես տեքստի հիմնական տեղեկատվության սեղմ փոխադրություն:Կուրսային և ավարտական աշխատանքների տիտղոսաթերթի օրինակելի նմուշներ **Թեմա 8.** Գրավոր խոսք: Ծանոթագրություններ: Ներածություն: Հիմնական մաս: Եզրակացություն: Օգտագործված գրականության ցանկ:

24/Բ12- Կրոնագիտության հիմունքներ (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
3-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը
Ուսանողներին տալ ընդհանուր համակարգված գիտելիքներ կրոնի, դրա պատմական դրսևորումների առաջացման, ձևավորման և զարգացման, հասարակակական և հոգևոր կյանքում դերակատարության մասին, տալ ընդհանուր գիտելիքներ աշխարհում գոյություն ունեցող կրոնների, դրանց, դասակարգման սկզբունքների, օրինաչափությունների, առանձնահատկությունների, Հայոց եկեղեցու հիմնական առանձնահատկությունների վերաբերյալ, ծանոթացնել ժամանակակից ավանդական և ոչ ավանդական կրոնների աշխարհայացքային և դավանաբանական հիմնարար սկզբունքներին և պաշտամունքային առանձնահատկություններին:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.
Կիմանա կրոնի սահմանումը և կառուցվածքը, նրա տեղն ու դերը հասարակության մեջ, ժամանակակից կրոնների և կրոնների պատմական ձևերի ձևավորման ու զարգացման պատմությունը, ազգային և համաշխարհային կրոնների բնութագիրը, գլխավոր առանձնահատկություններն ու հիմնական գծերը, ոչ ավանդական կրոնների առանձնահատկությունները և դասակարգումը, Հայոց եկեղեցու պատմությունը, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկությունները, ՀՀ արդի կրոնական իրավիճակը:
Կկարողանա հասկանալ և վերլուծել կրոնական ու կրոնագիտական գրականությունը, սահմանել կրոն հասկացությունը և կրոնական տարբեր երևույթները, դասակարգել կրոնի բազմազան և տարատեսակ դրսևորումները, խմբավորել տարբեր կրոններ, բացահայտել և համակարգել ժամանակակից կրոնների աշխարհայացքային, ծիսապաշտամունքային, դավանաբանական առանձնահատկությունները, իրականացնել կրոնների համեմատական վերլուծություն և քննական արժևորում, դիտարկել և համեմատել տարբեր կրոններ:
Կտիրապետի ժամանակակից կրոնների աշխարհայացքային, դավանաբանական և ծիսապաշտամունքային առանձնահատկություններին, կրոնների ուսումնասիրության մեթոդներն ու սկզբունքերը բացատրելու և լուսաբանելու հնարներին, կրոնագիտության արդի հիմնախնդիրներին:

Բովանդակություն

Թեմա 1. «Կրոնագիտության հիմունքներ» դասընթացի առարկան: **Թեմա 2.** Կրոնի պատմական ձևերը: **Թեմա 3.** Բուդդայականություն: **Թեմա 4.** Քրիստոնեություն: **Թեմա 5.** Իսլամ: **Թեմա 6.** Արդի կրոնական դենոմինացիաներն ու ներփակ հոսանքները: **Թեմա 7.** Արդի կրոնական իր վիճակը ՀՀ-ում:

12/Բ56- Ֆիզիկական դաստիարակություն – 1 (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը

Դասընթացը նպատակաուղղված է ուսանողներին սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի պահանջները և խնդիրները, օժանդակել աճող սերնդի ֆիզիկական պատրաստվածությանը, օգնել ուսանողներին՝ սովորելու առողջ ապրելակերպի վարման միջոցները, վարժությունների կատարման տեխնիկատակտիկական միջոցները և ունենալ հատուկ ֆիզիկական պատրաստվածություն:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝ ֆիզիկական կուլտուրայի դերը մատաղ սերնդի դաստիարակման գործում, թեթև ատլետիկայի դերը ֆիզիկական դաստիարակման համակարգում, մարմնամարզության տարբեր վարժությունները, կարճ տարածության վազքերի և եռացատկի տեխնիկան, կատարել վազք 2000-3000 մ, մարմնամարզության տարբեր վարժություններին:

Կկարողանա՝ կատարել վազք 60 մ «Ցածր մեկնարկից», կատարել հեռացատկ տեղից:

Կտիրապետի՝ վազքի տեխնիկային, կատարել շարային և ընդհանուր վարժություններ, սովորած վարժությունները կատարել մրցակցային պայմաններում, վոլեյբոլ խաղի տեխնիկային, մարմնամարզության վարժությունների տեխնիկաներին:

Բովանդակություն

Թեմա 1. Տեսական տեղեկություններ: **Թեմա 2.** Կարճ տարածության վազքեր: **Թեմա 3.** Վազք 60մ, 100մ, ստարտը և եզրագծի հատումը: **Թեմա** 4. Հեռացատկ տեղից, սպորտային թափավազք: **Թեմա** 5. Միջին տարածության վազք: **Թեմա** 6. Երկար տարածության վազք: **Թեմա** 7. Ակրոբատիկա, եռացատկ տեղից: **Թեմա** 8. Հենացատկ այծի վրայից, ձգումներ կախ դրությունից: **Թեմա** 9. Հեռացատկ տեղից, հեռացատկ այծի վրայից: **Թեմա** 10: Վոլեյբոլիստի կեցվածքով տեղաշարժեր, ցատկեր ցանցի մոտ: **Թեմա** 11. Սկզբնահարված, դաշտի տարբեր մասերը: **Թեմա** 12. Սկզբնահարվածի ընդունում, հարձակողական հարված: **Թեմա** 13

. Սկզբնահարվածի ընդունում, հարձակողական հարված: **Թեմա** 14. Հարձակողական հարվածի շրջափակում: **Թեմա** 15. Երկկողմանի խաղ:

12/Բ57- Ֆիզիկական դաստիարակություն – 2 (0 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (30 ժամ գործնական)
2-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը
Դասընթացը նպատակաուղղված է ուսանողներին սովորեցնել ֆիզիկական կուլտուրայի պահանջները և խնդիրները, օժանդակել աճող սերնդի ֆիզիկական պատրաստվածությանը, օգնել ուսանողներին սովորելու առողջ ապրելակերպի վարման միջոցները, վարժություններ կատարման տեխնիկատակտիկական միջոցները և ունենալու հատուկ ֆիզիկական պատրաստվածություն:
Կրթական արդյունքները
Դասընթացի ավարտին ուսանողը
Կիմանա՝ ֆիզիկական կուլտուրայի դերը մատաղ սերնդի դաստիարակման գործում, թեթև ատլետիկայի դերը ֆիզիկական դաստիարակման համակարգում, մարմնամարզության տարբեր վարժությունները, կարճ տարածության վազքերի և եռացատկի տեխնիկան, կատարել վազք 2000-3000մ, մարմնամարզության տարբեր վարժություններին:
Կկարողանա՝ կատարել վազք 60 մ «Ցածր մեկնարկից», կատարել հեռացատկ տեղից:
Կտիրապետի՝ վազքի տեխնիկային, կատարել շարային և ընդհանուր վարժություններ, սովորած վարժությունները կատարել մրցակցային պայմաններում, վոլեյբոլ խաղի տեխնիկային, մարմնամարզության վարժությունների տեխնիկաներին:
Բովանդակություն
Թեմա 1. Գնդակի վերգցումով սկզբնահարվածի տեխնիկայի ուսուցումը և ամրապնդումը: **Թեմա 2**. Կտրված հարված աջից և ձախից: **Թեմա** 3. Հարված աջից և ձախից գլորումով: **Թեմա 4**. Հաշվով խաղ: **Թեմա** 5. Գնդակի փոխանցում վերևից, ներքևից, 2 ձեռքով ցանցի վրայից: **Թեմա** 6. Ցանցի մոտ գնդակի ետ մղում բռունցքով: **Թեմա** 7. Վերին ուղիղ սկզբնահարված: **Թեմա** 8. Հանդիպակաց փոխանցումից ուղիղ հարձակողական հարված: **Թեմա** 9. Երկկողմանի խաղ: **Թեմա** 10. Փոքր գնդակի նետում հորիզոնական և ուղղահայաց նպատակին: **Թեմա** 11. Փոքր գնդակի նետում աջով և ձախով կամավոր թափավազքից: **Թեմա** 12. Վազք 1500-2000մ: **Թեմա** 13. Վազք 800-1000մ: **Թեմա** 14. Կարճ տարածության վազքեր, արագացումներ: **Թեմա** 15. Նռնակի նետում:

1.2. Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

23/Բ55- Քաղաքագիտության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է՝

1. ուսանողներին ծանոթացնել քաղաքագիտության ձևավորման տեսական և գաղափարական ակունքներին, հիմնական հասկացություններին, քաղաքագիտության ուսումնասիրության առարկայական տիրույթին,
2. սովորեցնել կողմնորոշվել բարդ և հակասական քաղաքական աշխարհում, ներկայացնել ու պաշտպանել սեփական հետաքրքրություններն ու շահերը, հարգելով մյուսների իրավունքները և շահերը,
3. նպաստել ուսանողների մոտ քաղաքական իրականության, քաղաքական գործընթացների վերաբերյալ վերլուծական մտքի ձևավորմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. քաղաքական գիտության ձևավորումն ու զարգացումը,
2. քաղաքական գիտության առաջացման և զարգացման հիմնական փուլերը,
3. քաղաքական իշխանության էությունն ու բովանդակությունը, կառուցվածքը, լեգիտիմությունն ու լեգալությունը,
4. քաղաքական համակարգի էությունը և կառուցվածքը,
5. ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմների էությունն ու բնորոշ գծերը,
6. իրավական պետության էությունն ու հիմնական սկզբունքները,
7. քաղաքական կուսակցության էությունը, գործառույթները: Կուսակցական համակարգերի տիպաբանությունը,
8. քաղաքական գաղափարախոսության հասկացությունը, գործառույթները, հիմնական գաղափարախոսական հոսանքները,
9. քաղաքական կոնֆլիկտի էությունը, տիպերը, հաղթահարման ուղիները:

Կկարողանա՝

1. կատարել քաղաքագիտական վերլուծություններ,
2. կողմնորոշվել գործնական քաղաքականության հիմնահարցերի մեկնաբանման հարցերում,
3. պատկերացում կազմել քաղաքագիտության առարկայական տիրույթի ու մեթոդաբանության մասին
4. արտահայտել սեփական քաղաքական կարծիքը, անհրաժեշտության դեպքում միավորվել որևէ քաղաքական գաղափարի շուրջ:

Կտիրապետի՝

1. քաղաքագիտության առարկայի կարևորագույն խնդիրներին, առարկայի նպատակներին, նրա տեղին ու դերին
2. քաղաքագիտության տեսության և պատմության հիմնական հասկացություններին, սկզբունքներին,
3. հասարակական, քաղաքական ոլորտներում առկա տարբեր հիմնախնդիրներին, դրանք ներկայացնելու, բացահայտելու, վերլուծելու, քննարկելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Քաղաքագիտության առարկան և օբյեկտը: **Թեմա 2.** Քաղաքագիտության տեսական-գաղափարական ակունքները: **Թեմա 3.** Քաղաքական իշխանություն: **Թեմա 4.** Հասարակության քաղաքական համակարգը: **Թեմա 5.** Պետությունը որպես քաղաքական համակարգի գլխավոր ինստիտուտ: **Թեմա 6.** Քաղաքական ռեժիմներ **Թեմա 7.** Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: **Թեմա 8.** Քաղաքական կոնֆլիկտներ**: Թեմա 9.** Քաղաքական գաղափարախոսություն: **Թեմա 10.** Քաղաքական լիդերություն:

23/Բ38- Մշակութաբանության հիմունքներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին հաղորդել կայուն գիտելիքներ մշակույթ հասկացության վերաբերյալ: Արմատավորվում է համակարգված պատկերացում մշակույթ հասկացության բաղադրիչների, գործընթացների և մեխանիզմների մասին: Դասընթացը բացահայտում է մշակութաբանության՝ որպես գիտության էությունը և տեղն ու դերը մարդու հոգևոր աշխարհում: Օգնում է ուսանողին հստակ պատկերացում կազմելու, թե ինչպես է առաջացել մշակույթը նախ որպես երևույթ, հոգևոր պահանջմունքի տարատեսակ, այնուհետև նպաստել մարդկային հասարակության առաջընթացին: Ծանոթանալով նախնադարից մինչ օրս տարբեր դարաշրջաններում տարբեր ժողովուրդների ու ազգերի կողմից ստեղծած մշակութային արժեքներին, հնարավորություն կունենա այն համադրելու հայ ժողովրդի կողմից ստեղծած մշակութային արժեքներին: Մշակութաբանության, որպես գիտության մեջ հայազգի մշակութաբանության Էդուարդ Մարգարյանի ներդրումը, մշակույթը որպես մարդկային գործունեության հատուկ կամ առանձնահատուկ գործունեություն դիտարկելը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

կիմանա «Մշակույթ» հասկացության սահմանումները, մշակույթի առանձին բաղադրիչներն ու դրսևորումները:

Կկարողանա բացատրել մշակույթի կառուցվածքը, մշակույթի ծագման և զարգացման հիմնական օրինաչափությունները, ներկայացնել համաշխարհային և հայ

մշակույթների պատմական զարգացումների օրինաչափությունները, լուսաբանել մերօրյա մշակութային երևույթները և գործընթացները, զանազանել համաշխարհային մշակութային գործընթացի պատմական և լոկալ դրսևորումները:
Կտիրապետի արդի դարաշրջանում մշակութային գործոնի դերի աճի կարևորման հմտություններին:
Բովանդակություն
Թեմա 1. Մշակութաբանությունը որպես գիտություն: Մշակույթի ըմբռնումը: Մշակույթ հասկացության ծագումը և բովանդակության պատմական զարգացումը: Մշակույթի սահմանումը և գործառույթները: Մշակույթի կառուցվածքը, հոգևոր և նյութական մշակույթ: **Թեմա 2.** Մշակույթի մակարդակները: Հոգևոր գործունեության մշակութային ձևերը, մշակույթի ազգային և համամարդկային բնույթը, զանգվածային և էլիտար մշակույթ, կրոնի, գիտության, արվեստի ու մշակույթի փոխկապակցվածությունը: **Թեմա 3.** Մշակույթ-բնություն-հասարակություն: Հասարակություն և մշակույթ, բնություն և մշակույթ, մշակույթ-արժեք-քաղաքակրթություն, քաղաքակրթության մասին արդի տեսությունները: **Թեմա 4.** Նախնադարյան հասարակության և Հին արևելքի մշակույթը: Նախնադարյան հասարակության պարբերացման հարցը: Օյկումեն: Հին Միջագետքի, Եգիպտոսի և Հնդկաստանի մշակույթները: **Թեմա 5.** Հին Հունաստանի և Հռոմի մշակույթը: Հին Հունաստանի մշակույթի զարգացման փուլերը, դասական շրջան: Հելլենիզմի մշակույթը և Հին Հռոմի մշակույթը: **Թեմա 6.** Միջնադարյան մշակույթը: Վերածննդի դարաշրջանի մշակույթը: Բյուզանդիայի մշակույթը: Եվրոպայի միջնադարյան մշակույթը: Կրթության համակարգի փոփոխությունը, համալսարանների հիմնումը /Բոլոնյան և Փարիզյան մոդելները/: Վերածնությունը Իտալիայում: Հյուսիսային վերածնունդ: Վերածնունդը Արևելքում: Արևելյան վերածննդի հարցը: **Թեմա 7**. Նոր դարաշրջանի մշակույթը /17-19-րդ դար/: 17-րդ դարի Եվրոպական մշակույթը: 18-րդ դ.մշակույթը, 19-րդ դարի մշակույթը: Ռուսական մշակույթի առանձնահատկությունները: **Թեմա 8**. Մշակույթը 20-րդ դարում: Մշակույթը որպես 20-րդ դարի պատմական իրադարձության անդրադարձ: Գեղագիտական նոր ըմբռնումների ու գեղարվեստական ուղղությունների ձևավորումը:
Թեմա 9. Հայկական մշակույթը պատմական զարգացման ընթացքում, ձևավորման նախադրյալները, համահայկական պետական համակարգի ձևավորումը և մշակույթը: Մշակույթը Արարատի թագավորությունում: Հայկական մշակույթը հելլենիզմի դարաշրջանում: Հայկական միջնադարյան մշակույթը: Նոր շրջանի հայկական մշակույթը:

12/Բ28- Տնտեսագիտության հիմունքներ (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ տնտեսության զարգացման պատմական շրջաններում ձևավորված տնտեսական հարաբերությունների, տնտեսական կատեգորիաների և տնտեսական և իրավական օրենքների համակարգերի, շուկայական տնտեսության գործառնության միկրոտնտեսական և մակրոտնտեսական օրինաչափությունների մասին: Զարգացնել գիտելիքներ տնտեսագիտական հասկացությունների, դրանց վերլուծության կարևորության և պրակտիկայում դրանք կիրառելու արդյունքում ֆինանսների ձևավորման և դրանց վերաբաշխման ուղղությամբ: Ուսումնասիրել և զուգակցել տնտեսական և իրավական օրենքները:

Դրանք անհրաժեշտ են տնտեսավարող սուբյեկտների գործունեության գնահատման, համապատասխան իրավական դաշտի ապահովման և ձեռնարկատիրական գործունեությունը վերահսկելու, ինչպես նաև ազատ մրցակցային պայմաններ ապահովելու համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

կիմանա տնտեսական հարաբերությունների ժամանակակից տեսությունները, շուկայական տնտեսության զարգացման օրինաչափությունները, շուկայի հիմնական տարրերի գործողության մեխանիզմը, ձեռնարկատիրական գործունեության սկզբունքները և բիզնեսի կազմակերպման խնդիրները, պետության տնտեսական գործառութները, տնտեսության կարգավորման շուկայական և պետական մեխանիզմները, եկամուտների բաշխման, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության հիմնահարցերը:

Կկարողանա կողմնորոշվել, արտահայտվել տնտեսական հարաբերությունների ժամանակակից պրակտիկ քննարկումներում, վերլուծել, պատկերացնել շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունների գործունեության նպատակներին և արդյունքներին հասնելու և շահույթ ստանալու առանձնահատկությունները,մեկնաբանել, բնութագրել տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը, մեկնաբանել, լուսաբանել տնտեսագիտական հասկացությունների, մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը բնակչության կենսամակարդակի բարձրացման և այդ գործում մարդկային կապիտալի դերի կարևորությունը, ներկայացնել, տարբերակել ազգային տնտեսության զարգացման համեմատական ցուցանիշներ և կիրառել այլ երկրների առաջավոր փորձը,տնտեսական կոնկրետ խնդիրների հետ կապված՝ բացահայտել, առանձնացնել թերությունները և գտնել ժամանակակից պայմաններում դրանց լուծման ուղիները:

Կտիրապետի փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական հաջողությունների հասնելու համար ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելու և խմբային աշխատանքում իրեն դրսևորելու հմտություններին, պրակտիկ աշխատանքում տնտեսական պրոբլեմներ լուծելիս մասնակից դառնալուն, քննադատական մտածողություն ցուցաբերելուն,տնտեսական և իրավական օրենքների զուգակցմանը,նորմատիվային տնտեսագիտական մոտեցումների պրակտիկ կիրառմանը, տնտեսական վերլուծություններ և հաշվարկներ կատարելու մեթոդների գործնական կիրառությանը, ֆինանսական, բյուջետային գիտելիքները առօրյա կյանքում օգտագործելու, հանրային կյանքին տեղեկացված և ակտիվ մասնակցելու, առաջացած խնդիրները լուծելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Տնտեսագիտության հիմունքներ առարկան և ուսումնասիրության մեթոդները: **Թեմա 2.** Տնտեսագիտության ելակետային հասկացությունները: **Թեմա 3.** Շուկայական տնտեսություն: Շուկայի հիմնական տարրերը: **Թեմա 4.** Աշխատանքի և կապիտալի շուկաներ: **Թեմա 5.** Ձեռնարկատիրական գործունեություն և շահույթ: **Թեմա 6.** Ազգային տնտեսության գնահատման հիմնական ցուցանիշները: **Թեմա 7.** Շուկայական տնտեսության ցիկլային զարգացումը: Գործազրկությունը և ինֆլյացիան: Եկամուտների բաշխման տեսությունը: **Թեմա 8.** Սպառում, խնայողություն, ներդրում: **Թեմա 9.** Դրամավարկային քաղաքականությունը և բանկային համակարգը: **Թեմա 10.** Ֆինանսական համակարգը և պետության ֆինանսական քաղաքականությունը:

2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ

2.1 Պարտադիր դասընթացներ

11/Բ51- Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ (3կրեդիտ)
Շաբաթական 2ժամ (10 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)
1-ին կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը
Ծանոթացնել ուսանողներին համակարգիչների, ծրագրավորման, ինֆորմացիոն տեխնոլոգիաների հիմնական հասկացություններին, համակարգիչների մինիմալ կառուցվածքին և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքին, Windows օպերացիոն համակարգին և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:
Սովորեցնել Microsoft Office ծրագրային փաթեթի հիմնական կիրառական տեխնոլոգիաներով գործնական աշխատանքներ կատարելու հմտությունները՝MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը և աշխատանքը նրա հետ, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչը, օգտագործել MS Office փաթեթի Power Point ծրագրը շնորհանդեսներ պատրաստելու համար: Ծանոթացնել համացանցին և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա ինֆորմատիկայի տեսական հիմունքները, համակարգիչների տեխնիկական ապահովումը և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի հիմունքները, համակարգիչների ծրագրային ապահովման տեսակները, նշանակությունը և աշխատանքի սկզբունքները, MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչի և նրա աշխատանքի հիմունքները, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչի օգտագործման հիմունքները, Համացանցի կիրառության, համացանցում մատուցվող ծառայություններից օգտվելու սկզբունքները:

Կկարողանա աշխատել «Windows»-ի միջավայրում, օգտագործել MS Office փաթեթի Word տեքստային խմբագրիչը՝ փաստաթղթերի ստեղծման և ձևավորման համար, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրիչը, MS Office փաթեթի Power Point խմբագրիչը՝ ներկայացումներ պատրաստելու համար, օգտվել համացանցից:

Կտրրապետի համակարգիչների կառուցվածքի և նրա հիմնական բաղկացուցիչ մասերի աշխատանքի վերաբերյալ գիտելիքների, Windows օպերացիոն համակարգի և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին, MS Office փաթեթի Word տեքստային խմբագրի օգնությամբ փաստաթղթերի ստեղծման և ձևավորման հմտություններին, MS Office փաթեթի Excel էլեկտրոնային աղյուսակների խմբագրի օգտագործման հմտություններին, համացանցից օգտվելու և նրա հետ աշխատանքի հիմնական սկզբունքներին:

Բովանդակություն

Թեմա 1. Ինֆորմատիկայի տեսական հիմունքները: **Թեմա 2.** Համակարգիչներ, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքները: **Թեմա 3.** Ալգորիթմներ, բլոկ-սխեմաներ, ծրագրեր, ծրագրային ապահովում: **Թեմա 4.** Windows օպերացիոն համակարգ, ընդհանուր տեղեկություններ: **Թեմա 5.** Microsoft Office ծրագրային փաթեթի հիմնական տեխնոլոգիաները: **Թեմա 6**. Համացանց:

13/Բ52 – Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ‹‹Մարդ - բնական միջավայր›› համակարգում բնակչության անվտանգ կենսագործունեության ապահովումը: Տնտեսական գործունեության ընթացքում մարդը միշտ ենթարկվում է շրջակա միջավայրի բացասական երևույթների ազդեցություններին, ենթարկվում է արտադրական վնասվածքների, պետք է պատկերացնի և կարողանա ցանկացած իրավիճակում ճիշտ միջոցառումներ իրականացնել դրանց հետևանքները վնասազերծելու և նորմալ կենսագործունեության համար բավարար պայմաններ ստեղծելու համար: Դասընթացում մեծ տեղ է հատկացվում նաև աշխատանքային նորմալ պայմաններ ստեղծելու և իր հանգիստը կազմակերպելու գործընթացների գործընթացներին:

Դասընթացի նպատակն է ծանոթացնել առաջին օգնության հիմունքներին: Ստացված գիտելիքները հնարավարություն են տալիս բնութագրել արտակարգ պատահարը (իրավիճակը), որի դեպքում որոշակի տարածքում (աղետի գոտի, դեպքի վայր) խաթարվում է կարգավորված կենսագործունեությունը և արդյունքում առաջանում է առաջին օգնություն ցուցաբերելու անհրաժեշտություն; հասկանալ թե ով է տվյալ իրավիճակում տուժած: Դասընթացը հնարավարություն է ընձեռում արտակարգ իրավիճակներում կողմնորոշվել, ճիշտ որոշում կայացնել և իրադրությանը

համապատասխանաբար օգնության քայլեր ձեռնարկել՝ ցուցաբերել առաջին օգնություն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա ճանաչել մարդու օրգանիզմի կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները, հիմնավորել անվտանգ կենսագործունեության համար անհրաժեշտ ընդհանուր սանիտարատեխնիկական պահանջները, նկարագրել բնական միջավայրը և նրա աղտոտումը, լուսաբանել մարդու տեղը և դերը բիոսֆերայում,մթնոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները, ջրոլորտ, նրա աղտոտումն ու հետևանքները, բնահող, նրա աղտոտումն ու հետևանքները, ներկայացնել բնական, տեխնածին, էկոլոգիական, անտրոպոգեն ծագման արտակարգ իրավիճակների էությունները և առանձնահատկությունները, նկարագրել արտակարգ իրավիճակները, վերլուծելու արտակարգ իրավիճակները և կազմակերպել իրադրությանը համապատասխան առաջին բուժօգնություն, արժևորելու առաջին բուժօգնության գիտելիքները և հմտությունները:

Կկարողանա կիրառել ստացած գիտելիքները ճիշտ կողմնորոշվել ցանկացած արտակարգ իրավիճակների պայմաններում զերծ մնալ սպասվելիք վտանգներից և օգնություն ցուցաբերել մյուսներին, իրականացնել պաշտպանություն անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից, հակահրդեհային պաշտպանություն, պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից, ներկայացնել իոնացնող ճառագայթների ազդեցությունից, էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից պաշտպանվելու ուղիները, լուսաբանել պաշտպանությունը աղմուկից, ինֆրա- և ուլտրաձայներից, թրթռոցներից (տատանումներից), վնասակար նյութերի ազդեցությունից, կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում, իրադրությանը համապատասխան օգնության քայլեր ձեռնարկել,

ցուցաբերել առաջին բժշկական օգնություն արտակարգ իրավիճակին համապատասխան:

Կտիրապետի կայուն զարգացման ռազմավարությանը անվտանգության կառավարման համակարգերին, արտակարգ իրավիճակների ընթացքում ձեռնարկվող քայլերին, անբավարար բնակլիմայական պայմաններից և բնական աղետներից պաշտպանվելու հմտություններին, քիմիական և ռադիոակտիվ վարակվածության գոտիներում մարդկանց անհատական պաշտպանական միջոցներին, վտանգված տեղանքում փրկարարական աշխատանքների ռեժիմների, կատարել արհեստական շնչառություն, կատարել սրտի անուղղակի մերսում, կատարել վերքերի և վնասվածքների վիրակապում:

Բովանդակություն

Ներածություն: Թեմա 1. Մարդու օրգանիզմի բաղադրությունը, կառուցվածքը և ֆունկցիոնալ առանձնահատկությունները: **Թեմա 2.** Բնական միջավայրը և նրա աղտոտումը: **Թեմա 3.** Պաշտպանություն անբավարար բնակլիմայական

պայմաններից և բնական աղետներից: **Թեմա 4.** Հակահրդեհային պաշտպանություն: **Թեմա 5.** Պաշտպանություն ստատիկ և մթնոլորտային էլկտրական պարպումներից: **Թեմա 6.**Պաշտպանություն էլեկտրական հոսանքի ազդեցությունից: **Թեմա 7.** Իոնացնող ճառագայթների ազդեցությունից: **Թեմա 8.** Պաշտպանություն էլեկտրամագնիսական դաշտի և լազերային ճառագայթման ազդեցությունից: **Թեմա 9.** Պաշտպանություն աղմուկից, ինֆրա և ուլտրա ձայներից: **Թեմա 10.** Պաշտպանություն ճնշման տակ գտնվող համակարգերում առաջացող վտանգներից: **Թեմա 11.** Պաշտպանություն թրթռոցներից (տատանումներից): **Թեմա 12.** Պաշտպանություն վնասակար նյութերի ազդեցությունից: **Թեմա 13.** Հրատապ գործողությունների փուլերը: **Թեմա 14.** Սրտի աշխատանքի խանգարումներ**: Թեմա 15.** Արյունահոսություններ: Վիրակապական նյութեր և վիրակապեր: Փափուկ հյուսվածքների վնասվածքներ: **Թեմա 16.** Այրվածքներ: Ջերմային խանգարումներ: **Թեմա 17.** Թունավորումներ:

2.2 Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

13/Բ5 – Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
2-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակը
Ուսանողներին պատկերացում տալ բնագիտության հայեցակարգերի վերաբերյալ ժամանակակից մոտեցումների մասին: Դասընթացը միտված է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության արդի ձեռքբերումների լուսաբանմանը: Դասընթացը բացատրում է կենդանի և անկենդան նյութի տարբերությունը, հնարավոր զարգացումները՝ կապված ինֆորմացիայի և ինֆորմացիոն փոխներգործության հետ: Տրված է կենսոլորտի կառուցվածքային առանձնահատկությունները, դրա առանձին բաղադրիչների միջև եղած կապերը:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա բնագիտության ժամանակակից հայեցակարգերը, դրանց վերաբերյալ ժամանակակից մոտեցումները, բնագիտության զարգացման հիմնական փուլերը, բնագիտության սկզբունքները, բնության համակարգերի կառուցվածքը, առաջացման և զարգացման հայեցակարգերը, բնագիտության դերը աշխարհաընկալման գործընթացներում, հիմնավորել բնագիտության դերը արտադրության զարգացման և նորագույն տեխնոլոգիաների ներդրման գործում, տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները, արեգակնային համակարգի առանձնահատկությունները, երկիր մոլորակը, կենսոլորտը, որպես գլոբալ էկոհամակարգ:

Կկարողանա վերլուծել բնության համակարգերի կառուցվածքի և զարգացման ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները, կատարել համապատասխան եզրակացություններ բնության առավել ընդհանուր համակարգերի վերաբերյալ, նկարագրել կենսոլորտի բաղադրիչների՝ /ջրոլորտ, քարոլորտ, մթնոլորտ/ փոխադարձ կապը և փոխպայմանավորվածությունը, հիմնավորել մատերիայի կենսաբանական կազմակերպվածության բնութագրերը, բացատրել երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները:

Կտիրապետի բնագիտական գիտությունների մեթոդաբանությանը և գործնական կիրառության հմտություններին, բնություն-կենսոլորտ-մարդ համակարգի փոխներգործության առանձնահատկություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Ժամանակակից բնագիտության կառուցվածքը, գործառույթները, հայեցակարգերը, իմացության մեթոդաբանությունը: **Թեմա 2.** Բնափիլիսոփայության պատկերացումները և գիտական գիտելիքները Անտիկ աշխարհում և միջին դարերում: Վերածննդի դարաշրջանի և Նոր ժամանակի գիտական հեղափոխությունը: **Թեմա 3.**XX դարի բնագիտական և գիտատեխնիկական հեղափոխությունը և աշխարհընկալման տիպերի հերթագայումը: **Թեմա 4.** Տիեզերքի մասին ժամանակակից պատկերացումները: **Թեմա 5.** Արեգակնային համակարգի առանձնահատկությունները, երկիր մոլորակ, օդային թաղանթը, կազմությունը, բաղադրամասերը, երկրագնդի և մթնոլերտի ջերմային հատկությունները և ջերմային ռեժիմը: **Թեմա 6.** Մատերիայի կենսաբանական կազմակերպվածության մակարդակի բնութագրությունը **Թեմա 7.** Երկրի վրա օրգանական նյութերի առաջացման նախադրյալները թաղանթը, կազմությունը, բաղադրամասերը, երկրագնդի և մթնոլորտի ջերմային հատկությունները և ջերմային ռեժիմը:

12/Բ25 – Սոցիոլոգիա (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել սոցիոլոգիայի՝ որպես գիտության առանձնահատկություններին, գիտությունների համակարգում սոցիոլոգիայի տեղին ու դերին, սոցիոլոգիայի աշխարհայացքային և էթիկական առանձնահատկություններին, ուսումնասիրության առարկային՝ հասարակությանը և դրա կառուցվածքին, սոցիոլոգիայի հիմնարար տեսություններին, մշակույթին և դրա տարրերին, ինչպես նաև հասարակության մեջ տեղի ունեցող մի շարք սոցիալական գործընթացներին ու առկա հիմնախնդիրներին: Դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին սոցիոլոգիական գիտության ձևավորմանն ու զարգացմանը, առանցքային հասկացություններին և պարզաբանել սոցիալական աշ-խատանքի տարբեր բնագավառներում դրանց կիրառման առանձնահատկությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա սոցիոլոգիական գիտելիքների ազատ կիրառության հիմնարար սկզբունքի, հասարակության սոցիալական կառուցվածքի, սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդների, դրանց առանձնահատկությունների և կիրառության, սոցիոլոգիական հետազոտությունների կատարման մեթոդների մասին:

Կկարողանա բնորոշել առօրյա կյանքի երևույթների և գործընթացների սոցիալական էությունը, կիրառել սոցիոլոգիայի տեսական մոտեցումները՝ հասարակության տարբեր գործընթացների, հիմնախնդիրների մեկնաբանման նպատակով, իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն:

Կտիրապետի սոցիոլոգիական աշխարհայացքի առանձնահատկություններին, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, սոցիոլոգիական հետազոտություններ կատարելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Սոցիոլոգիան որպես գիտություն.

Սոցիոլոգիան որպես գիտություն. կայացման պատմությունն ու զարգացման առանձնահատկությունները: Սոցիոլոգիայի առաջացման նախադրյալները: Սոցիոլոգիայի ուսումնասիրման օբյեկտը և առարկան: Սոցիոլոգիայի մեթոդը: Սոցիոլոգիայի կառուցվածքը: Մակրո և միկրոսոցիոլոգիա: Սոցիոլոգիան և այլ գիտությունները: Սոցիոլոգիայի գործառույթները:

Թեմա2. Ամերիկյան և ժամանակակից արևմտյան սոցիոլոգիան.

1920-1940 թթ. էմպիրիկ սոցիոլոգիան: Թ. Փարսոնսի սոցիալական գործողության տեսությունը, սոցիալական համակարգերի հայեցակարգը: Ռ. Մերթոնի միջին մակարդակի տեսությունը և գործառական վերլուծությունը: Բախման տեսությունը: Դյուրգհեյմյան ավանդույթը ֆրանսիական սոցիոլոգիայում: Վեբերական և մարքսիստական ավանդույթները գերմանական սոցիոլոգիայում: Ժամանակակից արևմտյան սոցիոլոգիա:

Թեմա3. Հասարակությունը որպես սոցիոլոգիական վերլուծության օբյեկտ. Հասարակության մասին պատկերացումների ծագումը: «Հասարակություն» հասկացությունը հիմնական սոցիոլոգիական տեսություններում: Հասարակությունը որպես սոցիալական համակարգ: Հասարակության հիմնական հայտանիշները: Հասարակությունների տիպավորումը: «Սոցիալական կառուցվածք» հասկացությունը: Մակրո և միկրոկառուցվածք Սոցիալական խմբեր: **Թեմա4. Սոցիալական հաստատություններ և սոցիալական կազմակերպություններ.** «Սոցիալական հաստատություն» հասկացությունը: Սոցիալական հաստատությունների հիմնական հայտանիշները: Սոցիալական հաստատությունների տիպաբանությունը: Սոցիալական հաստատությունների գործառույթները: «Կազմակերպություն» հասկացությունը: Սոցիալական կազմակերպությունների ձևավորման մեխանիզմները: Սոցիալական կազմակերպության հիմնական հայտանիշները: Սոցիալական կազմակերպությունների տիպաբանությունը: **Թեմա 5. Սոցիալական շերտավորվածություն և սոցիալական շարժունություն.** Սոցիալական անհավասարության

հիմնախնդիրը սոցիոլոգիայում: «Սոցիալական շերտավորվածություն» հասկացությունը: Շերտավորված համակարգերի տիպերը: Խորհրդային հասարակության սոցիալական շերտավորվածությունը: «Սոցիալական շարժունություն» հասկացությունը: Սոցիալական շարժունության հիմնական տեսակները: Սոցիալական շարժունության հիմնական ուղիներն ու մեխանիզմները: Սոցիալական շարժունության հիմնական չափանիշները: Սոցիալական շարժունությունը ԽՍՀՄ-ում և ժամանակակից հասարակության մեջ: **Թեմա 6. Անձի սոցիոլոգիական հիմնախնդիրները և սոցիալականացումը.** «Անձ հասկացությունը» և անձի տեսությունները: Անձի կառուցվածքը: Անձի տիպերը: Անձի գործառույթները, սոցիալական կարգավիճակը և սոցիալական դերերը: Հասարակության և անձի փոխազդեցությունը: Սոցիալականացման հասկացությունները և տեսությունները: Սոցիալականացման փուլերը: Սոցիալականացման գործակալները և ինստիտուտները: **Թեմա 7. Շեղված վարք**. «Սոցիալական նորմեր» հասկացությունը: Սոցիալական նորմերի տեսակները: Վարքի շեղման բացատրության հիմնական գիտական մոտեցումները: Շեղված վարք: Շեղված վարքի պատճառները: Վարքի շեղման հիմնական ձևերը: Սոցիալական հսկողության հիմնախնդիրները, հիմնական մեխանիզմներն ու մեթոդները: **Թեմա 8. Սոցիոլոգիական հետազոտություններ. կառուցվածքը, մեթոդիկան և տեխնիկան.** Սոցիոլոգիական հետազոտության փուլերն ու տեսակները: Սոցիոլոգիական հետազոտությունների ծրագիրը: Սոցիոլոգիական տեղեկատվության հավաքման մեթոդները: Դիտարկման մեթոդը: Փաստաթղթերի վերլուծության մեթոդը: Փորձի մեթոդ: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների կիրառումը և վերլուծությունը:

3. Ընդհանուր մասնագիտական դասընթացներ

3.1 Պարտադիր դասընթացներ

23/Բ5- Ընդհանուր մանկավարժություն – 1 (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
3-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է ուսանողներին գաղափար տալ մանկավարժության հիմնական հասկացությունների /դաստիարակություն, ուսուցում, կրթություն, զարգացում, ձևավորում և այլն/ մասին, բացահայտել ուսուցման և դաստիարակության հիմնահարցերը:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
կիմանա մանկավարժության օբյեկտը, առարկան, խնդիրները, մանկավարժության հիմնական հասկացությունները՝ դաստիարակություն, կրթություն, ուսուցում, ուսուցման և դաստիարակության օրինաչափությունները, սկզբունքները, մեթոդները, միջոցները, կազմակերպման ձևերը և այլն, մանկավարժության դերը անձի ձևավորման գործում:
Կկարողանա ուսումնասիրել տարբեր առարկաների դասավանդման մեթոդիկաները, նախապատրաստվել դպրոցում անցկացվելիք մանկավարժական պրակտիկայի համար, կազմել դասի օրվա պլան, լսել, քննարկել և վարել դասեր, օգնել ուսուցիչներին կրթադաստիարակչական տարբեր հարցերում:
Կտիրապետի ուսուցչի մասնագիտության առանձնահատկություններին, մանկավարժական վարպետության հիմնական բաղադրիչներին՝ մանկավարժական տեխնիկա, կազմակերպիչ, դաստիարակ և այլն:
Բովանդակություն
Թեմա 1. Մանկավարժության առարկան, հիմնական հասկացություններն ու խնդիրները: **Թեմա 2.** Անձնավորության դաստիարակությունը, զարգացումը և ձևավորումը: **Թեմա 3.** Դպրոցականի անձի զարգացման և ձևավորման տարիքային փուլերը, դրանց համառոտ բնութագիրը: **Թեմա 4.** Մանկավարժական գործընթաց: **Թեմա 5.** Դիդակտիկան որպես գիտություն և ուսումնական առարկա: **Թեմա 6.** Կրթության բովանդակություն: Հայ ազգային կրթության տիպերը: **Թեմա 7.** Ուսումնական աշխատաքների կազմակերպման ձևերը, նրանց պատմական զարգացումը:

23/Բ6- Ընդհանուր մանկավարժություն – 2 (3 կրեդիտ)
Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել դաստիարակության էությանը, նպատակին, խնդիրներին, շարժիչ ուժերին, կազմակերպման օրինաչափություններին, սկզբունքներին ու մեթոդներին: Ապագա մանկավարժին տեղեկացնել դպրոցի բարեփոխումների ներկա ռազմավարության մասին, նրանց նախապատրաստել առարկայական մեթոդիկաների ուսումնասիրման համար:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. դաստիարակության էությունը,
2. դաստիարակության նպատակը, խնդիրները,
3. շարժիչ ուժերը, կազմակերպման օրինաչափությունները, ձևերը, սկզբունքները, մեթոդները,
4. ինքնադաստիարակության և վերադաստիարակության էությունը,
5. կոլեկտիվը որպես դաստիարակության օբյեկտ և սուբյեկտ՝ կարևորելով դաստիարակության վերջնական արդյունքը:

Կկարողանա՝

1. ըմբռնել դաստիարակության նպատակը,
2. պատմական բնույթը,
3. հայ ազգային դաստիարակության բնորոշ կողմերը,
4. աշակերտական կոլեկտիվի օբյեկտ և սուբյեկտ լինելը, անձի զարգացման փուլերը, գնահատել ինքնադաստիարակության և վերադաստիարակության դերը մեր կյանքում:

Կտիրապետի՝

1. դաստիարակության օրինաչափություններին, սկզբունքներին,
2. մեթոդներին /գիտակցության ձևավորման, գործունեության կազմակերպման և խթանման/, հնարներին,
3. աշակերտական կոլեկտիվի զարգացման առանձնահատկություններին:
4. Սովորողների ինքնադաստիարակության և վերադաստիարակության հարցերում գործնական մոտեցում դրսևորելուն՝ կարևորելով ընտանեկան դաստիարակության դերը: /Ելնելով ժամանակակից հասարակական դրսևորումներից/:
5. Ուսանողը պետք է կարողանա որոշումներ ընդունել դաստիարակչական բնույթի տարբեր իրավիճակներում՝ ելնելով անձի տարիքային և անհատական առանձնահատկություններից:

Բովանդակություն

Թեմա 1. Դաստիարակության գործընթացի բովանդակությունը: **Թեմա 2.** Դաստիարակության տեխնոլոգիաներ և միջոցներ: **Թեմա 3.** Դաստիարակության մեթոդներ: **Թեմա 4**. Կոլեկտիվի ձևավորումն ու բնորոշ գծերը: **Թեմա 5.** Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը: ԹԵՄԱ 6. Դաստիարակության

բաղադրատարրերը: **Թեմա 7**. Դաստիարակության հիմնահարցերը նորմատիվային փաստաթղթերում:

23/Բ40– Ներառական կրթության հիմունքներ -(3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)
5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակը մասնագիտական կրթության գործընթացում, ներառական կրթության ներդրման հետ կապված մանկավարժական հիմնախնդիրների, սկզբունքների, մեթոդների յուրացումն է:

Դասընթացի առաջին բաժնի նպատակն է ուսանողներին ծանոթացնել ներառական կրթության գաղափարական և օրենսդրական հիմքերին, հասկացություններին, պատմական զարգացման փուլերին ու առանձնահատկություններին:

Երկրորդ բաժնի նպատակն է զինել ներառականության միջավայրում անհրաժեշտ և հոգեբանամանկավարժական գիտելիքներով, կարողություններով, հմտություններով, նպաստել ներառական կրթության կազմակերպման մշակույթի ձևավորմանը, մասնագիտական և անձնային որակների ու կոմպետենտությունները զարգացմանը:

Երրորդ բաժինը նախատեսված է ներառական կրթության պայմաններում կոնկրետ մասնագիտական խնդիրների լուծման կարողությունների զարգացմանը՝ տարբեր գիտական մոտեցումների ու մեթոդների կիրառմամբ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. մեկնաբանել ներառական կրթության էությունը, գաղափարախոսական հիմնադրությները, օրենսդրական հիմքերն ու զարգացման հեռանկարները, հաշմանդամության բժշկական և սոցիալական մոդելները,
2. հիմնավորել ՀՈւԱ շահերից բխող գործընթացների կազմակերպման մատահրավերներ,
3. վերլուծել ներառական կրթության կազմակերպման մանկավարժական մեթոդները,
4. ճանաչել մասնագիտական կոնսիլիումի անդամների միջև փոխհամագործակցության ու թիմային աշխատանքի կազմակերպման սկզբունքները,
5. վերլուծել ներառական գործընթացի մասնակիցների միջև հաղորդակցման առանձնահատկությունները:

Կկարողանա՝

1. կազմակերպել օրենսդրության ու ներառական կրթության գաղափարախոսությանը համապատասխան հաղորդակցման, ուսուցման, դաստիարարակության ու զարգացման միջավայր,

2. ձևավորել (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքների անհատական ուսումնական պլաններ (ԱՈՒՊ)՝ ըստ սովորողների կարիքների,
3. վերլուծել և կազմակերպել դրանց իրականացման ուղիները:

Կտիրապետի՝

ԱՈՒՊ –ներով աշխատանքի մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմանը, անհատական մոտեցման սկզբունքներին: Բոլոր աշակերտներին ուսումնական գործընթացում լիարժեք ներառելու մանկավարժական և հոգեբանական միջոցների ու հնարների ընտրության հիմնավորմանն ու դրանց համապատասխան գործընթացների կազմակերպմանը:

Բովանդակություն

Թեմա 1. Ներառական կրթության էությունն ու գաղափարախոսական հիմքերը: **Թեմա 2.** Հատուկ և ներառական կրթության կազմակերպման ձևերը: **Թեմա 3**. Ներառականության գաղափարի պատմական զարգացման ակունքները: **Թեմա 4**. Ներառական մանկավարժության էությունը: **Թեմա 5.** Ներառական կրթության կազմակերպման գիտատեսական հայեցակարգ Ներառական կրթության կազմակերպման գիտատեսական հայեցակարգեր: **Թեմա 6**. Հոգեֆիզիկական զարգացման խանգարումների դասակարգումները: **Թեմա 7.** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ ներառական մանկավարժական գործընթացի կազմակերպումը: **Թեմա 8**. Սովորողների կարիքների գնահատման մեթոդաբանությունը: Բնական ռեսուրսներ: Մարդկային ռեսուրսներ: Ալբերտ Մասլոուի պահանջմունքերի տեսությունը և բուրգը: **Թեմա 9**. Հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցման առանձնահատկությունները: Հոգեբանական զարգացման և բարոյական ինքնակատարելագործման պահանջմունքներ: **Թեմա 10.** Սովորողների դիտարկում և ուսումնական ունակությունների բացահայտում: Անհատական ուսումնական պլանի կազմում: SMART մեթոդը որպես ԱՈՒՊ-ի ձևավորման և նպատակադրման հիմք: Սովորողների դիտարկում և ուսումնական ունակությունների բացահայտում: Անահտական ուսումնական պլանի կազմում: SMART մեթոդը որպես ԱՈՒՊ-ի ձևավորման և նպատակադրման հիմք: **Թեմա 11**. ԿԱՊԿՈՒ երեխա ունեցող ընտանիքների առանձնահատկությունները, նրանց աջակցության հոգեբանամանկավարժական ուղիներն ու մեթոդները: **Թեմա 12**. Հոգեբանամանկավարժական դիագնոստիկ աշխատանքների կազմակերպման տրամաբանությունը, մեթոդներն ու գործիքները: **Թեմա 13**. ԿԱՊԿՈՒ երեխաների ուշադրության և հիշողության դիագնոստիկան և զարգացումը՝ որպես ուսումնական ունակությունների զարգացման հիմք: **Թեմա 14**. ԿԱՊԿՈՒ երեխաների մտածողության և երևակայության դիագնոստիկան և զարգացումը՝ որպես ուսումնական ունակությունների զարգացման հիմք: **Թեմա 15**. ԿԱՊԿՈՒ երեխաների բանավոր և գրավոր խոսքի զարգացման մակարդակի հետազոտություններ,

հաղորդակցական կարողությունների զարգացման մեթոդները: **Թեմա 16**. ԿԱՊԿՈՒ երեխաների անձնային առանձնահատկությունների և հուզական ոլորտի խնդիրների դիագնոստիկա և կարգավորման մեթոդներ:

23/Բ3- Ընդհանուր հոգեբանություն (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
3-րդ կիսամյակ,ստուգարք
Դասընթացի նպատակն է նպաստել, որ ուսանողներն իմանան հոգեկանի կառուցվածքը. մանրամասն ուսումնասիրելով հոգեկանի գործընթացները, վիճակները, հուզակամային ոլորտը:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. սահմանել հոգեբանություն գիտության զարգացման առարկան, խնդիրները, սկզբունքները, հետազոտման մեթոդները, հոգեբանության հիմնական հասկացությունները,
2. ճանաչել կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիական ինտեգրատիվ մակարդակները և ուղեղի գործունեության ֆունկցիոնալ համակարգը, հոգեկան երևույթների, գործընթացների ռեֆլեկտոր բնույթը, հոգեկանի կառուցվածքը:

Կկարողանա՝

1. բնորոշել մարդու հոգեկան երևույթների առանձնահատկությունները,
2. օգտագործել համապատասխան մեթոդներ, մեթոդիկաներ,
3. նախագծել մասնագիտական գիտելիքների, հմտությունների զարգացում:

Կտիրապետի՝ հոգեբանություն գիտության ժամանակակից տեսական հայեցակարգերին, մոտեցումներին, հոգեբանական հետազոտման մեթոդների կիրառմանը:
Բովանդակություն
Թեմա 1. Ընդհանուր հոգեբանության առարկան, խնդիրները: **Թեմա 2**. Հոգեբանության զարգացման փուլերը: **Թեմա 3**. Հոգեբանության ուսումնասիրման մեթոդները: **Թեմա 4**. Հոգեկանի կառուցվածքը: **Թեմա 5**. Հոգեկանի գործընթացները: **Թեմա 6**. Հուզակամային ոլորտ: **Թեմա 7**. Պահանջմունքներ և նպատակներ: **Թեմա 8**. Հոգեկանի վիճակները. Տրամադրություն, աֆֆեկտ, կիրք, սթրես: **Թեմա 9**. Սթրեսի առանձնահատկությունները, տեսակները, փուլերը: **Թեմա 10**. Հետտրավմատիկ սթրես, Դեպրեսիա:

23/Բ4- Ընդհանուր հոգեբանություն (3 կրեդիտ)
Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ներկայացնել տարիքային շրջափուլերը, տարիքային առանձնահատկությունները: Հասնել այն բանին, որ սովորողները զանազանեն և ուսումնասիրեն անհատական տարբերությունները: Կարողանան ստացված գիտելիքները կիրառել իրենց մասնագիտական գործունեության ոլորտներում:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա անձի ձևավորման տարաբաժանման առանձնահատկությունները:

Կկարողանա ներկայացնել և միմյանցից զանազանել տարիքային շրջափուլերը և յուրաքանչյուր տարիքին բնորոշ ճգնաժամերը:

Կտիրապետի անհատական տարբերությունների և տարիքային առանձնահատկությունների մասին առկա գիտելիքների կիրառման մեթոդներին իրենց մասնագիտական ոլորտներում:

Բովանդակություն

Թեմա 1. Տարիք հասկացության մեկնաբանումը: **Թեմա 2.** Տարիային շրջափուլեր: Ճգնաժամեր: **Թեմա 3.** Հոգեսեքսուալ զարգացման փուլերը: **Թեմա 4.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 0-3 տարեկան**: Թեմա 5.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 3-7 տարեկան: **Թեման 6.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. 7-11 տարեկան: **Թեմա 7.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. դեռահասություն**: Թեմա 8.** Տարիքային զարգացման առանձնահատկությունները. ծերություն**: Թեմա 9.** Անհատական տարբերություններ. խառնվածք, բնավորություն, անձնային որակներ, գծեր: **Թեմա 10.** Մտավոր ունակություններ**: Թեմա 11.** Ընդունակություններ. օժտվածություն, տաղանդ, հանճար:

22/Բ13- Ժամանակակից հայոց լեզու՝ հնչյունաբանություն - 1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 40 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է

1. ներկայացնել հայոց լեզվի ծագումը, ուսումնասիրության մեթոդները և հայեցակետերը,
2. ներկայացնել հայոց լեզվի զարգացման փուլերը՝ նախագրային և գրային, արևելահայերեն և արևմտահայերեն, հայերենի բարբառային տարբերակվածությունը, գործառույթները,
3. Գաղափար տալ հայերենի կառուցվածքի, կառուցվածքային մակարդակների՝ հնչյունաբանության, բառագիտության և քերականության, լեզվական հիմնական միավորների վերաբերյալ,
4. ներկայացնել հայերենի հնչյունական համակարգը, հնչյունների դասակարգումը, հնչյունափոխական երևույթները, հայոց այբուբենը և նրա առանձնահատկությունները,
5. գիտելիքներ տալ հայերենի բառապաշարի, նրա շերտերի, հարստացման ուղիների, բառակազմական կաղապարների, դարձվածքների և բառարանների մասին,

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. հայոց լեզվի զարգացման փուլերը, գործառույթները, ինչույթ և ինչյուն հասկացությունները, ինչյունների և ինչյունափոխական երևույթների տեսակները, բացահայտել ինչյունափոխական երևույթները,
2. ուղղախոսության և ուղղագրության կանոնները, այբուբենը, բառը, իմաստափոխությունը, նրա տեսակները, բարդությունները, ածանցները, դարձվածքները և բառարաններն իրենց տեսակներով.

Կկարողանա՝

1. ներկայացնել հայերենի զարգացման փուլերը ինչյունական-ինչյունափոխական իրողությունները, այբուբենի և ուղղագրական-ուղղախոսական կանոնների առանձնահատկությունները,
2. սահմանել բառը, բացատրել բառիմաստը և ցուցադրել նրա փոփոխության առանձնա-հատկությունները, սահմանել և առանձնացնել բառակազմական կաղապարները,
3. գնահատել դարձվածքների ու բառարանների նշանակությունը, դարձվածքներն ու բառարաններն ըստ իրենց նշանակության

Կտիրապետի՝

1. ինչյունները դասակարգելու, ճիշտ կարդալու, գրելու, խոսելու, ինչյունաբանական վերլուծու-թյուններ կատարելու, ինչյունափոխությունը, նրա տեսակը որոշելու հմտությունների,
2. բառապաշարն ըստ տարբեր հատկանիշների դասակարգելու, դարձվածքների տեսակները, նրանց ոճական առանձնահատկությունները, բառարանների տեսակները որոշելու, ինչպես նաև ձևութաբանական և բառակազմական վերլուծություններ անելու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Ներածություն: Ժիլ դասընթացը: Հայոց լեզվի զարգացման շրջանները: Նոր գրական հայերենի 2 ճյուղերը: Հայերենը ազգային, պետական և գրական լեզու: **Թեմա 2**. Հնչյունաբանություն: Հնչյուն և ինչույթ: Հայերենի հնչյունական համակարգը; Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ: Ձայնավորներ, նրանց դասակարգումը: Բաղաձայններ, նրանց դասակարգումը:**Թեմա 3**. Վանկ, շեշտ, հնչերանգ: **Թեմա 4.** Հնչյունափոխություն, տեսակները: **Թեմա 5.** Ուղղագրություն և ուղղախոսություն: Մ. Մաշտոցը և հայ գրերի գյուտը: Այբուբեն: Հայերենի ուղղագրության և ուղղախոսության սկզբունքները:: **Թեմա 6**. Ձայնավորների ուղղագրությունը և ուղղախոսությունը: **Թեմա 7**. Բաղաձայնների ուղղագրությունը և ուղղախոսությունը: **Թեմա 8**. Ուղղագրական բարեփոխումներ:

22/Բ14- Ժամանակակից հայոց լեզու՝ բառագիտություն - 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 40 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

գիտելիքներ տալ հայերենի բառապաշարի, նրա շերտերի, հարստացման ուղիների, բառակազմական կաղապարների, դարձվածքների և բառարանների մասին,

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝ ինչ է բառը, իմաստափոխությունը, նրա տեսակները, բարդությունները, ածանցները, դարձվածքները և բառարաններն իրենց տեսակներով.

Կկարողանա՝

բացատրել բառիմաստի և նրա փոփոխության առանձնահատկությունները, ինչ է բառակազմական կաղապարը և դարձվածքների ու բառարանների նշանակությունը:

Կտիրապետի՝

բառապաշարն ըստ տարբեր հատկանիշների դասակարգելու, դարձվածքների տեսակները, նրանց ոճական առանձնահատկությունները որոշելու, ինչպես նաև ձևույթաբանական և բառակազմական վերլուծություններ կատարելուհմտությունների

Բովանդակություն

Թեմա 1.Բառագիտություն: Բառ, հատկանիշներն ու սահմանումը: Բառաձևեր: Բառ և ձևույթ: Լիմաստ և թերիմաստ /սպասարկու/ բառեր: Բնաձայնական բառեր: **Թեմա 2.** Իմաստաբանություն: Բառիմաստի բնորոշումը, նրա տեսակներն ու տեսակները: Բառի բազմիմաստությունը: Բառերի ուղղակի և փոխաբերական իմաստներ: Բնիմաստ և բառի ներքին ձև: **Թեմա 3**. Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի փոխհարաբերության. համանուն, հոմանիշ և հականիշ բառեր: **Թեմա 4**. Իմաստափոխություն: Արդի հայերենի իմաստափոխությունը, նրա տեսակներն ըստ իմաստափոխական հիմունքների և իմաստային զարգացման արդյունքի: **Թեմա 5.** Բառապաշար: Բառակազմ և բառային հիմնական ֆոնդ: Բառապաշարի ծագումնաբանական դասակարգումը: Բնիկ և փոխառյալ բառեր: Բառապաշարի դասակարգումն ըստ հայերենի զարգացման փուլերի և լեզվական տարբեր շերտերի: **Թեմա 6.** Բառապաշարի դասակարգումն ըստ հուզաարտահայտչական գունավորման և ոճական կիրառության, ակտիվ և պասիվ շերտերի: Հնաբանություններ և նորաբանություններ: Բառապաշարի իմաստաբանական դասակարգումը: **Թեմա 7.** Բառապաշարի դասակարգումն ըստ հուզաարտահայտչական գունավորման և ոճական կիրառության, ակտիվ և պասիվ շերտերի: Հնաբանություններ և նորաբանություններ: Բառապաշարի իմաստաբանական դասակարգումը: **Թեմա 8.** Բառակազմություն: Բառակազմության առարկան: Ձևույթներ: Բառերի ձևույթաբանական, ձևաբանական, բառակազմական վերլուծություն: Բառերի տեսակներն ըստ կազմության: Համադրական և վերլուծական բարդություններ: **Թեմա 9.** Ածանցում: Ածանցների դասակարգումն ըստ ծագման, ըստ դիրքի, ըստ խոսքի մասեր կերտելու արժեքի: **Թեմա 10.** Դարձվածաբանություն: Դարձվածք, նրա հարաբերակցությունը բառերի, բառակապակցությունների նախադասությունների, ասացվածքների, թևավոր խոսքերի հետ:Դարձվածքների դասակարգումը, նրանց կիրառությունը խոսում: **Թեմա 11**. Բառարանագրություն: Բառարանների տեսակները:

22/Բ15- Ժամանակակից հայոց լեզու՝ ձևաբանություն 3 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է

գիտելիքներ տալ հայերենի քերականական համակարգի, նրա երկու բաժինների մասին,
գիտելիքներ տալ ձևաբանական քերականական կարգերի մասին,
գիտելիքներ տալ հայերենի ձևաբանական համակարգի, խոսքի մասերի, նրանց առանձնահատկությունների վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

հայերենի խոսքի մասերի դասակարգման սկզբունքները, խոսքի մասերի քանակը, անվանումները, գոյական, ածական, թվական, դերանուն խոսքի մասերի քերականական կարգերը.

Կկարողանա՝

հասկանալ խոսքի մասերի դասակարգման սկզբունքների առանձ-նահատկությունները, տարբերակման յուրահատկությունները,

ներկայացնել և մեկնաբանել քերականական կարգերի հատկանիշները.

վիճարկել քերականական զուգաձևությունների կիրառական նպատակահարմարությունը, բացահայտել շեղումներն ու բացառությունները.

Կտիրապետի՝

1. ձևաբանական վերլուծություններ կատարելու կարողությունների,
2. քերականորեն գրագետ խոսք կառուցելու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Ներածություն: Քերականություն, բաժինները: Ձևաբանության ուսումնա-սիրության առարկան: Քերակա¬նական կարգեր: **Թեմա 2.** Խոսքի մասեր, նրանց որոշման հիմունքները: Հայերենի խոսքի մասերը, նրանց ընդհանուր բնութագիրը: Խոսքի մասերի փոխանցումը: Փոխանունություն: **Թեմա 3.** Գոյական անուն: Գոյականը որպես խոսքի մաս, կազմությունը: Գոյականի իմաստային-քերականական խմբերը: Հատուկ և հասարակ գոյականներ, նրանց կազմությունը: **Թեմա 4.** Գոյականի թվի քերականական կարգը, նրա արտահայտությունը: Եզակի և հոգնակի թվեր:Նրանց կազմությունը և գրությունը: **Թեմա 5.** Գոյականի հոլովի քերականական կարգը: Արդի հայերենի հոլովական համակարգը: Հոլովների կազմությունը: Հոլովում. արտաքին և ներքին հոլովումներ: Այլաձև հոլովումներ: **Թեմա 6**. Գոյականի առկայացման, անձի և ոչ անձի քերականական կարգերը, նրանց ձևաբանական առանձնա¬հատ¬կութ¬յուն¬ներր: Գոյականի կիրառությունները: **Թեմա 7.** Ածական անուն: Ածականը որպես խոսքի մաս: Ածականի կազմությունը: Ածականի տեսակները: **Թեմա 8**. Ածականի համեմատության աստիճանները, նրանց կազմությունը և գրությունը: **Թեմա 9.** Ածականների հոլովումը: Ածականների կիրառությունները: **Թեմա 10.** Թվական անուն: Թվականը որպես խոսքի մաս: Թվականների տեսակները, նրանց կազմությունը և գրությունը: Թվականների կիրառությունները: **Թեմա 11**. Դերանունը որպես խոսքի մաս: Դերանունների հարաբերակցությունը մյուս խոսքի մասերի հետ: Դերանունների տեսակները: **Թեմա 12.** Դերանունների հոլովումը: Դերանվանական և անվանական հոլովումներ: Դերանունների կրառությունները:

22/Բ16- Ժամանակակից հայոց լեզու՝ ձևաբանություն- 4 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

1. բնութագրել հայերենի շարահյուսական համակարգը՝ շարահյուսական կապակցման միջոցները և եղանակները, բառակապակցությունները և նախադասությունները, նրանց տեսակները,
2. պարզաբանել լեզվական վերլուծությունների բնույթը,
3. պարզաբանել հայերենի կետադրության հետ կապված հարցերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. բայը, մակբայը, կապը, շաղկապը, վերաբերականն ու ձայնարկությունը որպես խոսքի մասեր,
2. բայի դերբայական և եղանակաժամանակային ձևերի կազմության և նրանց կիրառության առանձնահատկությունները.

Կկարողանա՝

բացատրել բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն խոսքի մասերի քերականական առանձնահատկությունները, տարանջատել կապ և շաղկապ, վերաբերական և ձայնարկություն խոսքի մասերը:

Կտիրապետի՝ ձևաբանական վերլուծություններ կատարելու կարողությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Բայը որպես խոսքի մաս: Բայի կազմությունը.բայածանցներ: Բայական լծոր¬դություններ և խոնարհումներ: Բայահիմքեր: Բայի սեռի քերականական կարգը. ներգործական, կրավորական և չեզոք սեռեր: **Թեմա 2.** Բայի դեմքի, թվի, եղանակի և ժամանակի քերականական կարգերը: Բայի դիմավոր և անդեմ ձևեր: Արդի հայերենի դերբայները, նրանց կազմությունը: **Թեմա 3.** Ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակներ, նրանց ժամանակներն ու կազմությունը: **Թեմա 4.** Սահմանական և հրամայական եղանակներ, նրանց ժամանակներն ու դրանց կազմությունը: **Թեմա 5.** Անկանոն և պակասավոր բայեր, նրանց կազմությունը: **Թեմա 6.** Բայի ժխտական խոնարհումը: **Թեմա 7.** Մակբայը որպես խոսքի մաս: Մակբայների դասակարգումը: Մակբայների կազմությունն ու ուղղագրությունը: **Թեմա 8**. Կապը որպես խոսքի մաս: Կապերի դասակարգումը: Կապերի հոլովառությունը: Կապերի կազմությունն ու կիրառությունը: **Թեմա 9.** Շաղկապը որպես խոսքի մաս: Շաղկապների տեսակները: Շաղկապների իմաստային դասակարգումը: Շաղկապների կազմությունն ու կիրառությունը: **Թեմա 10.** Վերաբերականը որպես խոսքի մաս: Վերաբերականների տեսակները: Վերաբերականների կիրառությունները:**Թեմա 11.** Ձայնարկությունը որպես խոսքի մաս: Տեսակները: Կիրառությունը:

22/Բ17- Ժամանակակից հայոց լեզու՝ շարահյուսություն- 5 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է

1. բնութագրել հայերենի շարահյուսական համակարգը՝ շարահյուսական կապակցման միջոցները և եղանակները, բառակապակցությունները և նախադասությունները, նրանց տեսակները,
2. պարզաբանել լեզվական վերլուծությունների բնույթը,
3. պարզաբանել նախադասության անդամների առանձնահատկությունները, արտահայտությունները, կետադրությունը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. կիմանա բառակապակցության և նախադասության, դրանց տեսակների, կապակցման միջոցների ու եղանակների մասին. կսովորի կառուցել գրագետ խոսք,
2. կիմանա նախադասության անդամները, նրանց դասակարգումն ու շարահյուսական հատկանիշները

Կկարողանա՝

1. ներկայացնել բառակապակցության և նախադասության կազմության առանձնահատկությունները, տեսակները, կաղապարները, նախադասության անդամները
2. բացատրել կապակցման միջոցների և եղանակների նշանակությունը,
3. դասակարգել բառակապակցություններն ու նախադասություններն ըստ տարբեր մոտեցումների

Կտիրապետի՝

կապակցման միջոցներն և եղանակները որոշելու, , բառակապակցություններն ու նախադասություններն ու նախադասության անդամները ըստ տարբեր մոտեցումների դասակարգելու նախադասություններ և խոսք կառուցելու հմտությունների

Բովանդակություն

Թեմա 1. Շարահյուսության ուսումնասիրության առարկան:Շարահյուսության առավելագույն և նվազագույն միավորներ: Շարահյուսական կաղապարներ: Շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները: **Թեմա 2.** Բառակապակցություն, տեսակները, դասակարգումը: **Թեմա 3.** Նախադասություն, նրա բնորոշ հատկանիշները: Նախադասությունների դասակարգումն ըստ տարբեր հատկանիշների: **Թեմա 4.**Նախադասության անդամներ, նրանց դասակարգումը: Ենթակա, նրա արտահայտությունը: Ստորոգյալ, նրա արտահայտությունն ու տեսակները: Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը: **Թեմա 5.** Գոյականական անդամի լրացումներ. որոշիչ, նրա արտահայտությունը, տրոհումը, կետադրությունը, շարադասությունը, որոշիչ-որոշյալյալ կապակցությունը: **Թեմա 6.** Հատկացուցիչ, նրա արտահայտությունը, տրոհումը, կետադրությունը, շարադասությունը, հատկացուցիչ-հատկացյալ կապակցությունը: **Թեմա 7.** Բացահայտիչ, նրա տեսակները, արտահայտությունը, տրոհումը, կետադրությունը, շարադասությունը, բացահայտիչ-բացահայտյալյալ կապակցությունը: **Թեմա 8.** Շարադասություն: Նախադասության հարակից միավորներ:

22/Բ18- Ժամանակակից հայոց լեզու՝ շարահյուսություն- 6 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը՝

Ուսանողները կսովորեն հայոց լեզվի շարահյուսական կառուցվածքի առանձնահատկությունները, կտարբերեն բայական անդամի լրացումները, նրանց արտահայտությունները, հարցադրումները, շարադասությունը, կետադրությունը: Կծանոթանան նախադասության անդամ չհանդիսացող հարակից միավորների դրսևորումներին ու կետադրությանը, նրանց խաղացած դերին նախադասության մեջ ու յուրահատուկ կետադրությանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

բայական անդամի լրացումները, նրանց քերականական նշանակությունը, անվանման հիմքերը, ինչ են բնության խնդիրը և պարագան, քանի տեսակ են լինում, ինչ արտահայտություններ ունեն, որոնք ենտրոհման նախադրյալները, ԴԴ և նախադասության կողմնակի անդամները, կիմանանա խադասության հարակից միավորների, նախադասության անդամների շարադասության մասին:

Կկարողանա՝

Կբացատրի լրացումների բնույթն ու արտահայտությունը, կներկայացնի բնության խնդիրների և պարագաների ձևավորումը, տրոհման նախադրյալները, ԴԴ-ն և նախադասության կողմնակի անդամների դերն ու նշանակությունը, նախադասության հարակից միավորների, նախադասության անդամների շարադասությունը:

Կտիրապետի՝

Կկատարի ձևաբանական և շարահյուսական վերլուծություններ, կկետադրի նախադասությունները:

Բովանդակություն

Թեմա1. Բարդ նախադասության ընդհանուր բնութագիրը: **Թեմա2.** Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման միջոցներն ու եղանակները: **Թեմա3.** Բարդ համադասական նախադասություն, նրա կառուցվածքը, իմաստային տեսակներն ըստ բաղադրիչների

շարահյուսական հարաբերությունների բնույթի: **Թեմա4**. Բարդ ստորադասական նախադասություն. ընդհանուր բնութագիրը: Գերադաս և ստորադաս բաղադրիչներ: Ստորադաս նախադասությունների շարադասությունը, կետադրությունը, կապակցման միջոցները: **Թեմա5**. Ստորադաս նախադասություններն ըստ իրենց շարահյուսական գործառույթի, նրանց դասակարգումը: **Թեմա6**. Ենթակա և ստորոգելի ստորադաս բաղադրիչներով կառույցներ: **Թեմա7**. Գոյականական անդամի լրացում ստորադաս բաղադրիչով կառույցներ: **Թեմա8.** Բայական անդամի լրացում ստորադաս բաղադրիչներով կառույցներ: **Թեմա9.** Ամբողջ գերադաս նախադասությանը լրացնող ստորադաս բաղադրիչներով կառույցներ: **Թեմա10.** Բազմաբարդ նախադասություններ. ընդհանուր բնութագիրը: Համադասական բազմաբարդ նախադասություններ: **Թեմա11.** Ստորադասական բազմաբարդ նախադասություններ. համաստորադասություն, ենթաստորադասություն, տարաստորադասություն: **Թեմա12.** Խառը տիպի բազմաբարդ նախադասություններ: **Թեմա13.** Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպումը: **Թեմա14.** Մեջբերվող խոսք. ուղղակի և անուղղակի մեջբերվող խոսք, նրանց կետադրությունը: Մեջբերվող խոսքի փոխակերպումը: **Թեմա15.** Պարբերույթ: **Թեմա16**. Կետադրություն: Տրոհության, առոգանության, բացահայտության նշաններ:

22/Բ48- Ոճագիտություն (5 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

Դասընթացի նպատակն է ուսանողների լեզվական գիտելիքների ամրապնդումն ու հաղորդակցական իրազեկության զարգացումը հիմնական երեք ուղղություններով՝ լեզվաբանական-ոճական, խոսքային-հաղորդակցական և հասարակական: Դասընթացն սկսելուց առաջ ուսանողները պետք է հանրակրթական դպրոցի ծրագրին համապատասխան նախնական գիտելիքներ ունենան հայոց լեզվի ոճաբանության վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. առարկայի դասավանդման հիմնախնդիրները,
2. լեզվի ոճերը / դասակարգումը/, խոսքի ոճեր,
3. գործառական ոճերը, տեսակները,
4. իրադրական ոճերը, տեսակները,
5. անհատական ոճերը, տեսակները,
6. ռադիոյի և հեռուստատեսության լեզուն և ոճը,
7. ակտիվ և պասիվ բառապաշարն իր շերտերով,
8. հայերենի բառապաշարն ըստ լեզվի զարգացման տարբեր փուլերի և գործածության ոլորտների,
9. հնչյունաբանական և բառագիտական ոճաբանությունը,
10. խոսքի մասերի ոճական արժեքը,
11. ոճի արտահայտչական և պատկերավորման միջոցները. դարձույթներ և բանադարձումներ:

Կկարողանա՝

1. ներկայացնել առարկայի դասավանդման հիմնախնդիրները,
2. տարբերակել լեզվի ոճերը / դասակարգումը/, խոսքի ոճեր,
3. վերլուծել գործառական, իրադրական և անհատական ոճերով բնագրեր,
4. վերլուծել ռադիոյի և հեռուստատեսության լեզուն և ոճը, ճիշտ և սխալ խոսքի դրսևորումները,
5. կիրառել ակտիվ և պասիվ բառապաշարն իր շերտերով,
6. տարբերակել հայերենի բառապաշարն ըստ լեզվի զարգացման տարբեր փուլերի և գործածության ոլորտների,
7. տարբերակել հնչյունական և բառագիտական ոճաբանության առանձնահատկությունները,
8. հասկանալ խոսքի մասերի ոճական արժեքը գեղարվեստական ստեղծագործություններում,
9. կատարել գրական երկերի ոճական վերլուծություններ
10. տարբերակել ոճի արտահայտչական և պատկերավորման միջոցները և դրանց դրսևորումները գեղարվեստական գրականության մեջ,

Կտիրապետի՝

1. Լեզվի ոճերի դասակարգմանը:
2. Գործառական, իրադրական, անհատական ոճերի կիրառական առանձնահատկություններին,
3. ռադիոյի և հեռուստատեսության լեզվի և ոճի վերլուծությանը
4. ակտիվ և պասիվ բառապաշարին շերտերի տարբերակմանը
5. հայերենի բառապաշարի դասակարգումներին ըստ լեզվի զարգացման տարբեր փուլերի և գործածության ոլորտների:

Բովանդակություն

Թեմա 1. Առարկայի բովանդակությունը: Ներածություն: Առարկայի դասավանդման հիմնախնդիրները: Ոճագիտությունը որպես լեզվաբանական գիտաճյուղ:Լեզվի ոճեր/ դասակարգումը/, խոսքի ոճեր: Լեզվի գործառական ոճերը: Տեսակները: Իրադրական, անհատական ոճեր: **Թեմա 2.** Բառապաշար:Ակտիվ և պասիվ բառապաշար: Տարբեր շերտերը: Բարբառային, գրական բառեր, գրաբարյան, միջինհայերենյան բառեր: Հնաբանություններ: Նորաբանություններ: Գռեհկաբանություն, ժարգոն: Տերմինաբանություն: Ժամանակակից հայերենի բառապաշարի հարստացման աղբյուրները: Փոխառյալ բառեր: **Թեմա 3**. Բառագիտություն: Բառը որպես լեզվական միավոր: Բառիմաստ:Բազմիմաստություն: Փոխաբերական իմաստ: Համանուններ: Հոմանիշներ:Հականիշներ: Հարանունություն: Հայերենի դարձվածային միավորները: Շրջասույթներ: **Թեմա 4.** Լեզվի գործառական ոճերը: Դասակարգումը՝ առօրյա-խոսակցական, գիտական, գեղարվեստական, հրապարակախոսական, վարչական: Անհատական և իրադրական ոճեր: Բանավոր և գրավոր ոճական վարժությունների կատարում լսարանում: Բնագրի վերլուծություն, տեքստերի կազմում: **Թեմա 5.** Ոճական արտահայտչամիջոցներ: Ոճի պատկերավորման միջոցները. Դարձումներ և

բանադարձումներ: Ոճական արտահայտչամիջոցների տեսակները՝ զորացում, փո¬խակերպումներ: Ճարտասանական, բառային ձևերը: Բառային ձևերի կազմավորման եղանակները՝ հավելում, զեղչում, նմանություն: Հավե¬լումով կազմվող ձևերը՝ կրկնություն, երկրորդում, ներհակություն աստիճանավորում և այլն: Զեղչումով կազմվող ձևեր՝ զեղչում, անշաղ¬կապություն: **Թեմա 6**. Գիտամասնագիտական շփման ժանրերը: Տեքստային նյութի վերլուծում, մշակում Պաշտոնական փաստաթղթերի լեզվաոճական և կառուցվածքային առանձնահատկությունները: Պաշտոնական և գիտական, հրապարակախոսական խոսք: Գրավոր պաշտոնական հաղորդակցում:Պաշտոնական բնույթի փաստաթղթերի պատրաստման և լեզվական ձևավորման ընդհանուր կանոնները: Պաշտոնական նամակագրություն:
Կայուն դարձվածքներ, կաղապարներ:

22/Բ19- Լեզվաբանության հիմունքներ (3 կրեդիտ)
Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)
1-ին կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է

1. ներկայացնել մարդկային լեզվի էական բնութագրերը, լեզվի՝ որպես հասարակական հաղորդակցման հիմնական միջոցի գործառության հիմնական ոլորտներն ու օրինաչափությունները, ուսումնասիրության մեթոդները,
2. ներկայացնել լեզվի պատմական զարգացման և փոփոխությունների պատճառներն ու օրինաչափությունները,
3. տալ հիմնական գիտելիքներ լեզվի կառուցվածքային բաղադրիչների, նրանց լեզվական դրսևորումների վերաբերյալ՝ հիմք ընդունելով աշխարհի լեզուների տվյալները,
4. ծանոթացնել աշխարհի լեզուների դասակարգման տեսություններին, լեզվաընտանիքների ձևավորման սկզբունքներին,

նախապատրաստել ստացած գիտելիքներն առանձին լեզուների ուսումնասիրության ընթացքում կիրառելուն:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. ներկայացնել լեզվի լեզվաբանական բնութագիրը, լեզուների ուսումնասիրության բաժինները և հիմնական մեթոդները, գործառության առանձնահատկությունները,
2. լուսաբանել պատմական զարգացման ընթացքում լեզվի կրած փոփոխությունների օրինաչափություններն ու բնույթը,
3. բնութագրել լեզվական մակարդակների առանձնահատկությունները, նրանց հարաբերակցությունները, լեզվական միավորների միջև եղած փոխպայմանավորվածությունները,

4. մեկնաբանել աշխարհի լեզուների դասակարգման հայտնի տեսությունները և լեզվաընտանիքների ձևավորման սկզբունքները,
5. պարզաբանել ստացած գիտելիքները առանձին լեզուների ուսումնասիրության ընթացքում կիրառելու հնարավորություններն ու անհրաժեշտությունը:

Կկարողանա՝

1. Գնահատել լեզվի բնութագրման տեսությունները, ուսումնասիրության մեթոդները, գործառական հնարավորությունները,
2. բացահայտել լեզվական փոփոխությունների պատճառները, օրինաչափությունները,
3. պարզաբանել լեզվական հաղորդակցման ընթացքում խոսքի կառուցման առանձնահատկությունները,
4. գործադրել լեզվական գիտելիքները առանձին լեզուների ուսումնասիրության ընթացքում,
5. կազմել լեզվական երևույթներին վերաբերող աղյուսակներ, գծապատկերներ, կատարելու լեզվական վերլուծություններ:

Կտիրապետի՝

1. օգտվել մասնագիտական գրականությունից, համացանցից, տեղեկատվական այլ աղբյուրներից,
2. հանդես գալ ուսանողական գիտաժողովներում, քննարկումների, սեմինարների ժամանակ, կատարել անհատական աշխատանք,
3. կատարել փոքրածավալ հետազոտական աշխատանք,
4. ցուցաբերել վերլուծական և ինքնուրույն մոտեցում լեզվական իրողությունները գնահատելիս:

Բովանդակություն

Թեմա 1. Լեզվաբանության ուսումնասիրության առարկան: Լեզվի բնութագրերը:. Լեզվի բնորոշումը: Լեզվի գոյության ձևերը: **Թեմա 2.** Լեզու և խոսք: Խոսք, նորմա, կառուցվածք: **Թեմա 3.** Հնչյունների բնութագիրն ըստ ձայնի, աղմուկի, ուժգնության, բարձրության, լարվածության, ինչեղության, երկարության, կրկնության: Հնչյունների դասակարգումը: Հնչյուն և հնչույթ. հնչույթի ծագումն ու զարգացումը: **Թեմա 4.** Վանկ, շեշտ, հնչերանգ: **Թեմա 5.** Հնչյունափոխության տեսակները: **Թեմա 6.** Հնչյունական օրենք: **Թեմա 7.** Գրի ծագումը, զարգացումն ու տեսակները: Տառերի ծագումը: **Թեմա 8.** Ուղղագրության սկզբունքները: Գրադարձություն, հնչյունագրություն, տառադարձություն: **Թեմա 9.** Բառագիտություն: Բառի սահմանումը: Բառիմաստի բնորոշումը: Բառակազմ և հիմնական բառաֆոնդ: Պուրիզմ, էվֆենիզմ, տաբու: **Թեմա 10.** Բառապաշարի կատարելագործում և իմաստային զարգացում: Բառ և տերմին: Բառարաններ: **Թեմա 11.** Ձև և ձևույթ: Քերականական իմաստ և քերականական արտահայտություն կամ ձև: Քերականական արտահայտության միջոցներ: **Թեմա 12.** Քերականական կարգեր: Քերականական կարգերի առաջացումը, փոփոխությունները: Խոսքի մասեր: **Թեմա 13.** Բառակապակցություն: Նախադասություն. տեսակները:

Նախադասության անդամներ: Նախադասության առաջացումը: **Թեմա 14.** Լեզվի ծագումը: Լեզվի զարգացումը: Լեզվական ազդեցություններ. տեսակները: Բարբառների առաջացումը:

22/Բ9- Գրաբար-1 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (10 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է Դասընթացի նպատակն է ներկայացնել գրաբարի՝ իբրև հին գրավոր հուշարձանների լեզվի հնչյունական համակարգը, պատմական և շեշտից կախված հնչյունափոխությունը, բայական համակարգի քերականական հատկանիշները և թարգմանության սկզբունքները գրաբարում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

գրաբարի՝ իբրև հին գրավոր հուշարձանների լեզվի հնչյունական համակարգը, պատմական և շեշտից կախված հնչյունափոխութան դեպքերը, բայական համակարգի քերականական հատկանիշները և թարգմանության սկզբունքները գրաբարում:

Կկարողանա՝

ներկայացնել գրաբարի հնչյունական համակարգը,
գործնականում ցույց տալ և բացատրել պատմական և շեշտից կախված հնչյունափոխութան դեպքերը, գրաբարի բայական համակարգի քերականական հատկանիշները և թարգմանության սկզբունքները գրաբարում:

Կտիրապետի՝

գրաբարի հնչյունական համակարգը ներկայացնելու, պատմական և շեշտից կախված հնչյունափոխութան դեպքերը, գրաբարի բայական համակարգի քերականական հատկանիշները գործնականում ցույց տալու, բացատրելու, գրաբարյան տեքստեր թարգմանելու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Հայերենի զարգացման շրջանները: Գրաբարի հնչյունական համակարգը, երկբարբառները և եռաբարբառները: **Թեմա** 2. Շեշտից կախված հնչյունափոխությունը:

Թեմա 3. Գրաբարի պատմական հնչյունափոխությունը: **Թեմա 4.** Բայի առանձնահատկությունները. բայի սեռը, ներգործաձև և կրավորաձև խոնարհում, խոնարհում և խոնարհիչներ, բայածանցներ: **Թեմա 5**. Բայի եղանակի և ժամանակի կարգերը գրաբարում, բայահիմքերը, ներկայի հիմքը, ներկա ժամանակ: **Թեմա 6.** Անցյալ կատարյալ, 1-ին ապառնի և արգելական հրամայական: **Թեմա 7**. Անցյալի հիմքի առանձնահատկությունները, անցյալի հիմքը ըստ առանց խոնարհիչների: **Թեմա 8.** Անցյալ կատարյալ և 2-րդ ապառնի: Թեմա 9. Բուն և հորդորական հրամայական , անորոշ և ապառնի դերբայները, պատճառական բայերի խոնարհումը: **Թեմա 10.** Անկանոն բայեր (1-ին և 2-րդ խումբ): Պակասավոր բայերը գրաբարում, բաղադրյալ ժամանակաձևերը, միադիմի բայեր:

22/Բ10- Գրաբար-2 (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (10 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ներկայացնել գրաբարի՝ իբրև հին գրավոր հուշարձանների լեզվի հոլովները, հոլովումների տեսակները, կազմությունը, ածականը, թվական, դերանուն, մակբայ խոսքի մասերը, նրանց քերականական հատկանիշները, նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները, գրաբարյան տեքստերի թարգմանության սկզբունքները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

գրաբարի՝ իբրև հին գրավոր հուշարձանների լեզվի հոլովները, հոլովումների տեսակները, կազմությունը, ածականը, թվական, դերանուն, մակբայ խոսքի մասերը, նրանց քերականական հատկանիշները, նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները, կսովորի գրաբարյան տեքստերի թարգմանության սկզբունքները

Կկարողանա՝

ներկայացնել գրաբարի հոլովները, հոլովումների տեսակները, կազմությունը, ածականը, թվական, դերանուն, մակբայ խոսքի մասերը, նրանց քերականական հատկանիշները, գործնականում ցույց տալ նախադասութունների կառուցվածքային առանձնահատկությունները,

կիրառել գրաբարյան տեքստերի թարգմանության սկզբունքները

Կտիրապետի՝

գրաբարի հոլովները, հոլովումների տեսակները, կազմությունը, ածականը, թվական, դերանուն, մակբայ խոսքի մասերի քերականական հատկանիշները, նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները գործնականում ցույց տալու, գրաբարյան տեքստեր թարգմանելու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Հոլովը և հոլովումը գրաբարում: Պարզ և խառը հոլովումներ, հոլովների կազմությունը: Հոլովակերտ մասնիկներ: Հոլովների կազմությունը: **Թեմա 2.** Կանոնավոր և անկանոն հոլովումները գրաբարում: **Թեմա 3.** Ածականը գրաբարում: Ածական անունները և նրանց հոլովումը: Ածականների գործածությումը գոյական անունների հետ: **Թեմա 4.** Թվականը գրաբարում: Քանակական թվականների հոլովումը, դասական և անձներական թվականների հոլովումը: **Թեմա 5.** Դերանունները գրաբարում: Անձնական, փոխադարձ, ցուցական, ստացական, հարցահարաբերական, անորոշ և որոշյալ դերանուններ: **Թեմա 6.** Մակբայ, տեսակները, կազմության յուրահատկությունները գրաբարում: **Թեմա 7.** նախադասության կառուցվածքային առանձնահատկությունները գրաբարում:

22/Բ47- Միջին հայերեն (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել հայոց լեզվի զարգացման 2-րդ շրջանը՝ միջին հայերենը՝ հնչյունաբանական, բառակազմական, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններով, անդրադառնալ միջին հայերենի բառապաշարին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի առանձնահատկությունները.
2. կհասկանա գրաբարի, միջին հայերենի և արդի արևելահայերենի հոլովման և խոնարհման համակարգերի հիմնական տարբերությունները, լեզվի զարգացման ընթացքում կատարված հիմնական փոփոխությունները:

Կկարողանա՝

1. տարբերակել միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերին բնորոշ իրողությունները.
2. վերլուծել միջին հայերենով բնագրեր.
3. գործնականում կատարել քերականական վերլուծություններ:

Կտիրապետի՝

1. միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերի վերաբերյալ տվյալները համակարգելու.
2. միջին հայերենի հոլովման և խոնարհման համակարգերում եղած շեղումները մեկնաբանելու
3. միջին հայերենով բնագրերի լեզվական վերլուծություն կատարելու և աշխարհաբարի վերածելու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Միջին հայերենի կազմավորումը, նրա զարգացման փուլերը: Միջին հայերենն իբրև պետական լեզու, նրա լեզվական օրինաչափություններն ու առանձնահատկությունները: **Թեմա 2.** Միջին հայերենի հնչյունական համակարգը: Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ: Երկբարբառներ: Նրանց ուղղագրական և արտասանական առանձնահատկությունները: **Թեմա 3**. Հնչյունափոխությունը միջին հայերենում: Ձայնավորների, բաղաձայնների ու երկբարբառների հնչյունափոխությունը: **Թեմա 4**. Միջին հայերենի բառային կազմը: Բառապաշարը և նրա հարստացման աղբյուրները: **Թեմա 5**. Բառակազմություն: Բառակազմության հիմնական միջոցները. բարդություն, ածանցում: **Թեմա 6**. Միջին հայերենի քերականական համակարգը: Ձևաբանություն: Հոլովման համակարգը: Գոյականների հոլովումը: Ածականներն ու նրանց աստիճանները: Դերանունները, նրանց հոլովումը: Միջին հայերենի խոնարհման համակարգը: Բայերի խոնարհումը: Ներկայի ու անցյալի հիմքերից կազմված

բայերի դիմային վերջավորությունները: Ժամանակների կազմությունը: Դերբայներ: Ժխտական խոնարհում: **Թեմա 7**. Շարահյուսություն: Համաձայնություն, շարադասություն: Նախադասության կապակցությունը: **Թեմա 8**. Միջնադարյան հայ գրականության գլխավոր տեսակները և նրանց լեզվական առանձնահատկությունները.ա) գեղարվեստական գրականություն բ) պատմական գրականություն, գ) գիտական գրականություն: **Թեմա 9.** Միջին հայերենի հետագա վիճակը:

22/Բ1- Արևմտահայերեն (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

5-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ունի առավելապես գործնական ուղղվածություն: Նպատակն է ուսուցանել գրական արևմտահայերենի հնչյունական, բառապաշարային և քերականական կառուցվածքի առանձնահատկությունները, նրա ձևավորման և զարգացման փուլերը, ընթերցանության կանոնները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Արևմտահայերենի բարբառային հիմքը,
2. ձևավորման և զարգացման փուլերը,
3. հնչյունական, արտասանական առանձնահատկությունները,
4. բառապաշարային առանձնահատկությունները,
5. ձևաբանական հատկանիշները,
6. շարահյուսական առանձնահատկությունները:

Կկարողանա՝

1. Հասկանալ արևմտահայերենի և արևելահայերենի միջև եղած տարբերություններն ու նմանությունները,
2. ընթերցել արևմտահայերեն բնագրերը ճիշտ արտասանությամբ,
3. գրել ուղղագրական նորմերին համապատասխան,
4. համեմատել գրական երկու տարբերակների հնչյունափոխական երևույթները,
5. հասկանալ բառերի գործածության առանձնահատկությունները երկու ճյուղերում,
6. վեր հանել քերականական տարբերությունները,
7. կատարել բնագրի փոխադրում:

Կտիրապետի՝

1. Արտասանության կանոններին,
2. հնչյունաբանությանը,
3. ուղղագրական նորմերին,
4. բառապաշարային առանձնահատկություններին, քերականական նրբություններին, տեքստերի վերլուծության եղանակներին:

Բովանդակություն

Թեմա 1. Գրական արևմտահայերենը հայոց գրական լեզվի առանձին տարբերակ: Գրական արևմտահայերենի ձևավորման և զարգացման փուլերը: Գրական արևմտահայերենի բարբառային հիմքը:Գրական արևմտահայերենի և արևելահայերենի առնչությունները: **Թեմա 2.** Գրական արևմտահայերենի հնչյունական համակարգը: Բաղաձայնական համակարգը: Պայթական բաղաձայնական համակարգի բնութագիրը: Երկաստիճան խլազուրկ համակարգ: Արտասանության և գրության տարբերությունները: Գրական արևմտահայերենի շփականների և հպաշփականների համակարգը: Հնչյունափոխություն. տեսակները, բնույթը: **Թեմա 3.** Գրական արևմտահայերենի բառապաշարը: Բուն կամ ավանդական բառապաշար: Նոր ձեռքբերումներ՝ փոխառություններ և ներքին տարբերակներ: Բառապաշարի ոլորտների հետ կապված փոփոխություններ: Բառակազմական տարբերություններ: Բառաբարդման և ածանցման երևույթներ: Արևմտահայ գրական լեզվին բնորոշ ածանցներ և մասնիկներ: Արևմտահայ գրական լեզվի դարձվածային միավորները և արտահայտությունները. ոճեր, խոսքային ձևեր և այլն: **Թեմա 4.** Գրական արևմտահայերենի ձևաբանությունը: Խոսքի մասերի դասակարգումը: Գոյականի հոլովումը: Թվական: Ածական: Դերանուն. տեսակները և հոլովումը: **Թեմա 5.** Բայի խոնարհումը: Բայական քերականական կարգերը: Եղանակների, ժամանակների կազմությունը: Բայական սեռի դրսևորումը: Բուն և բաղադրյալ ժամանակաձևեր: Կանոնավոր և անկանոն խոնարհում: **Թեմա 6.** Գրական արևմտահայերենի չթեքվող խոսքի մասերը: Չթեքվող խոսքի մասերի կազմությունը, ձևաբանական առանձնահատկությունները: **Թեմա 7.** Գրական արևմտահայերենի շարահյուսություն: Գրական արևմտահայերենի նախադասության կառուցվածքը: Գրական արևելահայ և արևմտահայ տարբերակների շարահյուսական տիպաբանություն: **Թեմա 8.** Պարզ նախադասություն: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամները. կազմությունը, բնույթը և արժեքը: **Թեմա 9.** Գրական արևմտահայերենի բարդ նախադասության կառուցվածքը: Արևմտահայերենի ուղղագրությունը և կետադրությունը:

22/Բ6- Բարբառագիտություն (3 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

4-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է գաղափար տալ բարբառ երևույթի մասին, ներկայացնել հայ բարբառագիտության զարգացման ընթացքը և հայերենի բարբառների դասակարգման փորձերը, ծանոթացնել հայերենի բարբառային իրողություններին և տալ առանձին բարբառների հիմնական բնութագրերը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. բարբառների դասակարգման վերաբերյալ եղած տեսությունները.

2. հայերենի բարբառների հնչյունական, բառային և քերականական հատկանիշները.

գրական լեզվի և բարբառների տարբերակիչ հատկանիշները

Կկարողանա՝

1. տարբերակել բարբառներին բնորոշ հնչյունական, բառապաշարային, քերականական իրողությունները.
2. վերլուծել բարբառային բնագրեր.

գործնականում կատարել բարբառագիտական բնագրերի լեզվական ուսումնասիրություններ:

Կտիրապետի՝

1. բարբառային նմուշների վերաբերյալ տվյալներ համակարգելու,
2. գրական լեզվի նորմից եղած շեղումները մեկնաբանելու, բարբառների ուսումնասիրության նկարագրական, համեմատական, պատմական, աշխարհագրական մեթոդները կիրառելու, բարբառային խոսքը լեզվական վերլուծության ենթարկելու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Բարբառագիտության ուսումնասիրության առարկան և խնդիրները: Բարբառ, ենթաբարբառ, խոսվածք: Բարբառների պատմական զարգացման ընթացքը: Բարբառների ուսումնասիրության մեթոդները: Լեզվաբական աշխարհագրության սկզբունքները: **Թեմա 2.** Հայ բարբառների ուսումնասիրության հարցեր: Հայ բարբառների ուսումնասիրության համառոտ պատմություն: Հայ բարբառների վերաբերյալ տեսակետները: Բարբառների և հայ գրական լեզուների փոխհարաբերությունները: Հայ բարբառների դասակարգումը: **Թեմա 3.** Հայ բարբառների դասակարգման առաջին փորձերը /Ա. Այտընյան, Ք. Պատկանյան/: **Թեմա 4**. Հ. Աճառյանը և հայ բարբառների ձևաբանական դասակարգումը ըստ սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմության /ում, կը, ել ճյուղի բարբառներ/: Հայ բարբառների հետագա ձևաբանական դասակարգումները /Ա. Ղարիբյան և ուրիշներ/: Հայ բարբառների հնչյունական դասակարգումը ըստ հպական բաղաձայնների համակարգի: **Թեմա 5**. Հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման սկզբունքները: Բարբառների առանձնացման սկզբունքները ևստ Գ. Ջահուկյանի դասակարգման: **Թեմա 6**. Հնչյունաբանություն:Բարբառային տառա-դարձություն: Աճառյանի օրենքը: Հին հայերենի երկբարբառները, նրանց համարժեքները հայերենի բարբառներում: Բարբառների բաղաձայնական յուրահատկությունները: **Թեմա 7**. Բառագիտություն: Հայ բարբառների բառապաշարի պատմական շերտերը և նոր փոխառյալ բառերը: Բարդությունը և ածանցումը բարբառներում: **Թեմա 8**. Ձևաբանություն:Գոյական անուն: Հոգնակի թվի կազմության յուրահատկությունները բարբառներում: Հայցական հոլովի վերապրուկային ձևերը: Յուրահատկությունները բացառական և գործիական հոլովների կազմության մեջ: Ներգոյական հոլովը ում ճյուղի բարբառներում: Բայ: Դերբայներ. նրանց կազմությունը: Խոնարհում: Սահմանական եղանակ: Ներկա և անցյալ անկատար: Անցյալ կատարյալը բարբառներում: Ըղձական, պայմանական և հարկադրական եղանակները հայերենի բարբառներում: Չթեքվող խոսքի մասերը հայերենի բարբառներում: **Թեմա 9**. Ընդհանուր ակնարկ առանձին բարբառների վերաբերյալ: Ում ճյուղի Արարատյան, Բայազետի բարբառների հնչյունական և ձևաբանական յուրահատկությունները: **Թեմա**

10. Կը ճյուղի Մշո, Վանի բարբառի հնչյունական և ձևաբանական յուրահատկությունները:

22/Բ44- Հայոց լեզվի պատմություն - 1 (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ներկայացնել հայոց լեզվի զարգացման փուլերը, նրա նախագրային և գրավոր շրջանները, այդ շրջաններում տեղի ունեցած փոփոխություններն ու տեղաշարժերը: Սովորողներին գիտելիքներ տալ հնչյունական համակարգի, բառապաշարի և քերականության պատմական զարգացման վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում,
2. հայոց լեզվի պատմության շրջանաբաժանումը,
3. հայերենի ծագման մասին եղած տեսությունները,
4. հնչյունական համակարգի պատմական զարգացումը,
5. բառապաշարի պատմական զարգացումը,
6. պատկերացում ունենա բնիկ բառապաշարի և փոխառությունների վերաբերյալ,
7. կարողանա դասակարգել բառապաշարը՝ ըստ թեմատիկ խմբերի:

Կկարողանա՝

1. տարբերակել բնիկ և փոխառյալ բառերը,
2. բացատրել հին և նոր փոխառությունների արժեքը,
3. հասկանալ և հիմնավորել նրանց գործածության կարևորությունը լեզվի պատմության նոր շրջանում,
4. հետազոտել լեզվի համակարգը՝ բոլոր բաժիններով,
5. կատարել եզրահանգումներ լեզվի արդի փուլի իրողությունների վերաբերյալ, կառուցել գրաֆիկը,
6. պատկերացում կազմել նախագրային հայերենի վերաբերյալ:

Կտիրապետի՝

1. հայերենի բառապաշարի պատմական զարգացմանը,
2. բնիկ և փոխառյալ բառերի տարբերակմանը,
3. դրանց մասին ստացած գիտելիքները վերլուծելուն և համադրելուն:

Բովանդակություն

Թեմա 1. Հայոց լեզվի պատմություն առարկան և հայերենագիտական մյուս գիտակարգերը: Առարկայի նպատակը և խնդիրները: Հայոց լեզվի պատմության աղբյուրները: Հայոց լեզվի պատմությանը նվիրված հայ և օտարազգի ուսումնասիրողների աշխատությունները: **Թեմա 2.** Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության մեթոդներ: **Թեմա 3.** Հայոց լեզվի պատմության շրջանաբաժանումը: Հայոց լեզվի պատմության նախագրային և գրավոր շրջանների

փուլերը. արտալեզվական և լեզվական չափանիշները: **Թեմա 4.** Լեզվի փոփոխությունը և զարգացումը: Լեզվական փոխազդեցություններ. Փոխներթափանցում, փոխառություն: Հայոց լեզվի պատմության նախագրային շրջանը: **Թեմա 5.** Հայերենը հնդեվրոպական ցեղակցության առանձին լեզու. ծագումնաբանություն, ցեղակցություն և համեմատական-տիպաբանական վերականգնում: Լեզվական շփումները: **Թեմա 6.** Հայոց լեզվի առանձնացումը հնդեվրոպական մյուս լեզուներից: Հայոց լեզվի ինքնուրույն զարգացման լեզվական բնութագիրը: **Թեմա 7.** Հայոց լեզվի պատմությունը և հնդեվրոպական լեզուների նախահայրենիքի հարցը: **Թեմա 8.** Հայոց լեզվի շփումը այլ լեզուների հետ: Հայերենը և հայասերենը: Հայերենը և ուրարտերենը: Հայերենի շփումն այլ լեզուների հետ մինչև գրերի գյուտը:Հայերենը և ասորերենը: Հայերենը և իրանական լեզուները: Հայերենը և հունարենը: Հայոց լեզվի բառապաշարի պատմություն: **Թեմա 9.** Հնդեվրոպական արմատի կառուցվածքը և նրա արտացոլումը հայերենում: Բնիկ հայերեն բառերը և նրանց թեմատիկ խմբերը: **Թեմա 10.** Հայոց լեզվի բառապաշարի թեմատիկ տրոհումը. Թեմատիկ խմբեր: Ֆիզիկական աշխարհ, մարդկային սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություն, կենդանիներ և անասնապահություն: Մարմնի մասեր և մարմնական գործառություններ: Ուտելիք և ըմպելիք, հագուստ, անձնական զարդարանք: Բնակարան, տուն, կահկարասի, երկրագործություն և բուսականություն, ֆիզիկական գործողություններ, արհեստներ, շարժում, տեղափոխություն: Ունեցվածք, սեփականություն, տարածական հարաբերություններ, քանակ և թիվ, ժամանակ, զգայական ընկալումներ, զգացմունք, խառնվածք: Մտածողություն, միտք, ձայնական արտահայտություն, տարածական բաժանումներ, ռազմական գործ, օրենք, կրոն, դերանուններ: **Թեմա 11.** Հայերենի անստույգ բառերը:

22/Բ45- Հայոց լեզվի պատմություն - 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 10 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ներկայացնել հայոց լեզվի զարգացման փուլերը, նրա նախագրային և գրավոր շրջանները, այդ շրջաններում տեղի ունեցած փոփոխություններն ու տեղաշարժերը: Սովորողներին գիտելիքներ տալ հնչյունական համակարգի, բառապաշարի և քերականության պատմական զարգացման վերաբերյալ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում,
2. հայոց լեզվի պատմության շրջանաբաժանումը,
3. հայերենի ծագման մասին եղած տեսությունները,
4. հնչյունական համակարգի պատմական զարգացումը,
5. բառապաշարի պատմական զարգացումը,

6. պատկերացում ունենա բնիկ բառապաշարի և փոխառությունների վերաբերյալ,
7. կարողանա դասակարգել բառապաշարը՝ ըստ թեմատիկ խմբերի:

Կկարողանա՝

1. տարբերակել բնիկ և փոխառյալ բառերը,
2. բացատրել հին և նոր փոխառությունների արժեքը,
3. հասկանալ և հիմնավորել նրանց գործածության կարևորությունը լեզվի պատմության նոր շրջանում,
4. հետազոտել լեզվի համակարգը՝ բոլոր բաժիններով,
5. կատարել եզրահանգումներ լեզվի արդի փուլի իրողությունների վերաբերյալ, կառուցել գրաֆիկը,
6. պատկերացում կազմել նախագրային հայերենի վերաբերյալ:

Կտիրապետի՝

1. հայերենի բառապաշարի պատմական զարգացմանը,
2. բնիկ և փոխառյալ բառերի տարբերակմանը,
3. դրանց մասին ստացած գիտելիքները վերլուծելուն և համադրելուն:

Բովանդակություն

Թեմա 1. Գրաբարի հնչյունական համակարգը: **Թեմա 2.** Գրաբարի քերականական համակարգը: Բառի քերականական կազմը: Գրաբարի հոլովման համակարգը: Հոլովումներ և հոլովիչներ: Պարզ և խառը հոլովումներ: Գոյականի հոլովումը: Աճակա-նի և թվականի հոլովումը: Դերանունների հոլովումը: **Թեմա 3.** Գրաբարի խոնարհման համակարգը: Բայի եղանակներն ու ժամանակաձևերը: **Թեմա 4.** Գրաբարի շարահյու-սական առանձնահատկությունները: Գրաբարի հետագա զարգացումը 7-10-րդ դդ.: Գրաբարի հետագա զարգացումը 10-18-րդ դդ.: **Թեմա 5.** Միջին հայերեն. հնչյունական, բառակազմական և քերականական առանձնահատկությունները: **Թեմա 6.** Հունաբան հայերեն: Լատինաբան հայերեն: Հայոց ազգային լեզվի կազմավորումը:

22/Բ9- Հայ ժողովրդական բանահյուսություն (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ծանոթացնել հայ ժողովրդի բանավոր բանաստեղծական ստեղծագործությունների ծագման, ձևավորման և զարգացման օրինաչափություններին, բանահյուսական նմուշների ժանրային, թեմատիկ դասակարգմանը, ազգային բնութագրին, այլ ժողովուրդների պատմագրության, գրականության հետ ունեցած առնչություններին, առանձին գրական երկերի վրա թողած ազդեցությունների, հայ ժողովրդի հոգևոր կյանքում ունեցած դերին ու նշանակությանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. հայ ժողովրդի ոչ նյութական մշակութային ժառանգության դասակարգումն ու չափորոշիչները,
2. հայ ժողովրդի պատմական զարգացման հետ ունեցած առնչությունները,
3. զարգացման փուլերը,
4. ժանրային տեսակները,
5. գեղարվեստական գրականության, արվեստի այլ տեսակների հետ ունեցած աղերսները,
6. կրթադաստիարակիչ նշանակությունը:

Կկարողանա՝

1. ինքնուրույն վերլուծել, գրանցել ժողովրդի ստեղծած բառ ու բանը,
2. դասակարգել ու պահպանել ժողովրդի ստեղծած հոգևոր արժեքները,
3. հասկանալ և գնահատել հայ ժողովրդական բանահյուսական ստեղծագործությունների գաղափարա-գեղարվեստական արժանիքները, դրանք արժևորել համաշխարհային բանավոր ստեղծա•ործությունների համապատկերի վրա,
4. դրսևորել քննական-ստեղծագործական վերաբերմունք,
5. կատարել հետազոտական-որոնողական աշխատանքներ:

Կտիրապետի՝

1. ժողովրդական բառուբանին, խոսք ու զրույցին,
2. բանահյուսության պատմաճանաչողական և •եղարվեստական արժեքներին,
3. քննադատական-համեմատական վերլուծություն կատարելու,
4. սեփական տեսակետը արտահայտելու,
5. ձեռք բերած գիտելիքները ինքնուրույն կիրառելու,
6. ինքնուրույն դատողություն անելու,
7. սեփական կարծիքը պաշտպանելու կարողություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Ներածություն: Բանահյուսության առարկան և անվանումները տարբեր երկրներում,տարբեր գիտնականների կողմից: Բանահյուսության սոցիալական էությունը, գաղափարական միտումները: **Թեմա 2.** Բանահյուսության հիմնական հատկանիշները իբրև կոլեկտիվ և բանավոր ստեղծագործության, առանձնահատկությունները, նրա ավանդականությունն ու տարբերակայնացման եղանակները, սինկրետիկ կամ համադրական արվեստ լինելը: **Թեմա 3.** Բանահյուսության կապը ժողովրդական մշակույթի այլ բնագավառների հետ:Կապը պրոֆեսիոնալ արվեստի՝ գրականության հետ, ազգագրական կենցաղի, սովորույթների, արտադրական կյանքի, ծիսակրոնական արարողությունների հետ: Կապը կերպարվեստի և կիրառական արվեստի բնագավառների հետ: **Թեմա 4.** Բանահյուսության փոխակերպման գործոնները: **Թեմա 5.**Բանահյուսության սեռերն ու հիմնական տեսակները. քնարական, վիպական, դրամատիկական: **Թեմա 6.** Բանագիտական դպրոցները: Առասպելաբանական դպրոց, փոխառությունների դպրոց, անգլիական մարդաբանական դպրոց, ֆիննական պատմաշխարհագրական մեթոդ: **Թեմա 7.**Հայ բանագիտության սկզբնավորումն ու զարգացումը: Գ. Սրվանձտյանցի և Մանուկ Աբեղյանի բանագիտական վաստակը: 19-րդ դարի 90-

ական թվականների բանագիտական-մասնագիտական պարբերականների հիմնադրումը («Ազգագրական հանդես», «Էմինյան ազգագրական ժողովածու»): **Թեմա 8.**Առասպելների ընդհանուր բնորոշումը: Առասպելի ժանրը, գեղարվեստական առանձնահատկությունները: **Թեմա 9.** Հայ ժողովրդական առասպելները. Հայկ և Բել, Արամ, Արա Գեղեցիկ և Շամիրամ, Տորք, Երկվորյակներ: **Թեմա 10.** Առասպել և էպոս (ընդհանուր հատկանիշները): **Թեմա 11**. Վիպասանք՝ առասպելաբանական վեպը, գաղափարական բովանդակությունը: **Թեմա 12.** «Պարսից» պատերազմ վեպը: Կերպարները, գաղափարախոսությունը: **Թեմա13**. Տարոնի պատերազմ վեպը: Աղբյուրները: **Թեմա14**.«Սասնա ծռեր» հերոսավեպը: **Թեմա15**.Վիպական երգեր: **Թեմա 16**. Հայկական ժողովրդական հեքիաթներ: **Թեմա 17**. Առասպել և հեքիաթ: Առասպելի և հեքիաթի տարբերությունը: **Թեմա 18.** Առակներ, դրանց կառուցվածքը, թեմատիկան: **Թեմա 19**. Հայ ժողովրդական ավանդություններ: **Թեմա 20**. Հայ ժողովրդական հանելուկներ: **Թեմա 21.** Անեծքներ, օրհնանքներ, բարեմաղթություններ, երդումներ, հմայական աղոթքներ: **Թեմա 22.** Առածներ և ասացվածքներ: **Թեմա 23.** Հայ ժողովրդական երգեր: Դրանց հիմնատիպերը. Հայրեններ և անտունիներ: **Թեմա 24.** Հայ ժողովրդական հանելուկները:

22/Բ21- Հայ գրականության պատմություն՝ հին և միջնադարյան շրջաններ - 1 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

2-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ներկայացնել հայոց հին գրականության սկզբնավորման և հետագա զարգացման ընթացքը, հին գրականության զարգացման հիմնական ուղղություններն ու ժանրերը, 5-րդ դարի պատմիչ-գրողների և նրանց ստեղծագործության դերը հայ հասարակական մտքի և գեղարվեստական գրականության պատմության մեջ, 6-18-րդ դարերի հայ գրականության և այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի քաղաքական և սոցիալական վիճակը, այդ դարերի հայ պատմագրությունը, հայ քնարերգության հիմնական թեմաները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Հայ դասական պատմագրության սկզբունքները,
2. Հայոց գիր և գրականություն ստեղծելու պատմական անհրաժեշտությունը,
3. Գրականության զարգացման հիմնական ուղղություններն ու ժանրերը, պատմագրության, եկեղեցական բանաստեղծություն, փիլիսոփայություն, կրոնադավանաբանական գրականություն և այլն,
4. 5-18-րդ դդ հայ գրականության և մշակույթի զարգացումը,
5. 5-18-րդ դդ հանդես եկած հայ պատմագիրների երկերը,
6. Աշխարհիկ քնարերգության և առակագրության զարգացումը,
7. Դասակարգային պայքարի արձագանքները գրականության մեջ,
8. Սոցիալ – քաղաքական քնարերգություն,

9. Բնապաշտական և սիրային քնարերգություն,
10. Հայ լուսավորական շարժման սկզբնավորումը

Կկարողանա՝

1. Հասկանալ այդ ժամանակաշրջանի գրականության փիլիսոփայական էությունը,
2. Գնահատել գրական փաստերը գրականագետի և պատմաբանի տեսակետից,
3. Հասկանալ գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները:

Կտիրապետի՝

1. Հայ հին գրականության զարգացման օրինաչափություններին,
2. Գրականագիտական վերլուծություններ կատարելու կարողությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Հայ մշակույթը և գրականությունը մինչև V դար, հեթանոսական-մեհենական մատյաններ: **Թեմա 2**.Կորյուն.«Վարք Մաշտոցի» երկը: **Թեմա 3**. Եզնիկ Կողբացի.«Եղծ աղանդոց»: **Թեմա 4**. Ագաթանգեղոս: Թեմա 5.Փավստոս Բուզանդ: **Թեմա 6.** Վիպական դրվագները Բուզանդի «Հայոց պատմության» մեջ: **Թեմա 7**. Մովսես Խորենացի «Հայոց պատմություն», գործածած աղբյուրները և ժամանակաշրջանը: **Թեմա 8.** Մովսես Խորենացու վերաբերմունքը ժող. բանահյուսության նկատմամբ, առասպելների քննական օգտագործումը նրա կողմից: **Թեմա 9**. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերջին գլուխը՝ «Ողբը». ժամանակաշրջանի քաղաքական և սոցիալական իրադրության արտացոլումը նրա մեջ: **Թեմա 10**. Եղիշե, «Վասն հայոց պատերազմի»: **Թեմա 11**. Ղազար Փարպեցի «Թուղթը»: **Թեմա 12**. Ղազար Փարպեցի «Հայոց պատմություն»: **Թեմա 13**. Սեբեոս (VII դար): **Թեմա 14.** Հովհան Մամիկոնյան (VIII դար): **Թեմա 15.** Ղևոնդ Երեց (VIII դար): **Թեմա 16.** Եկեղեցական բանաստեղծություն /շարական/: **Թեմա 17.** Դավթակ Քերթող (VII դար): **Թեմա 18**. Հովհաննես Դրասխանակերտցի (X դար): **Թեմա 19.** Թովմա և Անանուն Արծրունիներ: (X ԴԱՐ): **Թեմա 20.** Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ (X-XI դար): **Թեմա 21**. Մովսես Կաղանկատվացի (X դար): **Թեմա 22**. Գրիգոր Նարեկացի (X-XI դար): **Թեմա 23**. Գրիգոր Մագիստրոս (XI դար): **Թեմա 24**. Արիստակես Լաստիվերցի (XI դար): **Թեմա 25**. Հովհաննես Իմաստասեր (XI -XI I դարեր): **Թեմա 26**.Ներսես Շնորհալի (XII դար): **Թեմա 27**. Մխիթար Գոշ (XII-XIII դդ.):Վարդան Այգեկցի (XII-XIII դդ.): **Թեմա 28**. Ֆրիկ (XIII դար): **Թեմա 29.** Կոստանդին Երզնկացի (XIII-XIV դդ.): **Թեմա 30.** Հովհաննես Թլկուրանցի (XIV դար): **Թեմա 31**. Մկրտիչ Նաղաշ (XV դար): **Թեմա 32**. Գրիգորիս Աղթամարցի (XVIդար): **Թեմա 33**. Նահապետ Քուչակ (XIV դար): **Թեմա 34**.Հայ գրականությունը XVII-XVIII դդ: Ընդհանուր բնութագիր: Նաղաշ Հովնաթան (1661-1722): **Թեմա 35**. Պաղտասար Դպիր և Պետրոս Ղափանցի (XVIII դար): **Թեմա 36**. Սայաթ-Նովա (1722-1795թթ.):

22/Բ22- Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դար 2 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել 19- րդ դարի առաջին կեսի, ինչպես նաև 70 -80 ականների հայ հասարակական- քաղաքական կյանքը, գրականության մեջ տեղի

ունեցած տեղաշարժերը, գրական ժանրերի զարգացումը, հայ գրականության ձեռքբերումները, դրա դերն ու նշանակությունը գրականության հետագա զարգացման ճանապարհին և այլն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Հայ ժողովրդի քաղաքական կացությունը 19-րդ դարի սկզբի, առաջին և երկրորդ կեսերի հայ հասարակական-քաղաքական կյանքի հիմնական իրադարձությունները և դրանց անմիջական կապը գրականության հետ:
2. Գրականության երկու շրջափուլերի / առաջին և երկրորդ կես/ առանձնահատկությունները:
3. Կլասիցիզմից ռոմանտիզմի անցման յուրահատկությունները:
4. Խաչատուր Աբովյանի գրականության հեղաշրջող նշանակությունը նոր գրականության զարգացման ճանապարհին:
5. Սուլթանական լծի դեմ ուղղված ժողովրդական ազատագրական պայքարը: Զեյթունի ապաստամբությունը, դրա նշանակությունը:
6. 1877-78 թթ. Ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցը:
7. Րաֆֆու գրական մուտքը, Պռոշյանը և Աղայանը 70-80-ականներին
8. Շիրվանզադեի, Նար-դոսի, Մուրացանի, Փափազյանի ստեղծագործությունները:
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի, կկարողանա

Կկարողանա՝

1. Կատարել հայ նոր գրականության շրջափուլերի գրական երկերի վերլուծություն:
2. Ներկայացնել հայ կլասիցիստական գրականության և ռոմանտիկական գրականության առանձնահատկությունները:
3. Կատարել 19-րդ դարի առաջին կեսի լուսավորիչ Խ. Աբովյանի գրականությանը վերաբերող հարցադրումների քննություն:
4. Կատարել Պ. Պռոշյանի ստեղծագործության բովանդակաության ու ձևի քննություն:
5. Ներկայացնել Րաֆֆու աշխարհայացքում տեղի ունեցած փոփոխությունները և դրանց ազդեցությունը գրականության վրա:
6. Ներկայացնել բանաստեղծի անձնական ցավի և հասարակական խնդիրների միջև եղած անմիջական կապը պոեզիայում /Դուրյան/:
7. Ներկայացնել ծիծաղի դրսևորման յուրահատկությունները գրականության մեջ /Հ. Պարոնյան/:
8. Ներկայացնել մարդու և միջավայրի փոխհարաբերության խնդիրները գրականության մեջ /Նար-Դոս/:

Կտիրապետի՝

1. Գրական երկի վերլուծության նրբություններին, եզրահանգումներ անել ուսումնասիրված նյութի հանդեպ:
2. Տարբերակել գրականության բովանդակությունը ձևից և որոշակի ստեղծագործությունների օրինակով ցույց տալ այս կամ այն գրական երկի առանձնահատկությունները:

Բովանդակություն

Թեմա 1. Հայ ժողովրդի քաղաքական կացությունը 19-րդ դարի սկզբին, առաջին և երկրորդ կեսերին, հայ հասարակական-քաղաքական կյանքի հիմնական իրադարձությունները և դրանց անմիջական կապը գրականության հետ: **Թեմա 2.** Հայ կլասիցիստական գրականության և ռոմանտիկական գրականության առանձնահատկությունները: **Թեմա 3**. Խաչատուր Աբովյանի գրականության հեղաշրջող նշանակությունը նոր գրականության զարգացման ճանապարհին: **Թեմա 4**. Սուլթանական լծի դեմ ուղղված ժողովրդական ազատագրական պայքարը: Զեյթունի ապաստամբությունը, դրա նշանակությունը: **Թեմա 5**. Մխիթարյանների

գործունեությունը: **Թեմա 6.** Հարություն Ալամդարյանի, Մեսրոպ Թաղիադյանի,Ղևոնդ Ալիշանի ստեղծագործությունները: **Թեմա 7**. Միքայել Նալբանդյանի ստեղծագործությունը: **Թեմա 8**. Ռափայել Պատկանյանի, Սմբատ Շահազիզի, Մկրտիչ Պեշիկթաշլյանի ստեղծագործությունը: **Թեմա 9**. Բանաստեղծի անձնական ցավի և հասարակական խնդիրների միջև եղած կապը պոեզիայում /Դուրյան/: 1877-78 թթ. Ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցը:

22/Բ23- Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դար 3 (4 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

4-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

ուսանողներին ներկայացնել 19- րդ դարի առաջին կեսի, ինչպես նաև 70 -80 ականների հայ հասարակական- քաղաքական կյանքը, գրականության մեջ տեղի ունեցած տեղաշարժերը, գրական ժանրերի զարգացումը, հայ գրականության ձեռքբերումները, դրա դերն ու նշանակությունը գրականության հետագա զարգացման ճանապարհին և այլն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

Հայ ժողովրդի քաղաքական կացությունը 19-րդ դարի սկզբին, առաջին և երկրորդ կեսերին, հայ հասարակական-քաղաքական կյանքի հիմնական իրադարձությունները և դրանց անմիջական կապը գրականության հետ:

Գրականության երկու շրջափուլերի / առաջին և երկրորդ կես/ առանձնահատկությունները:

Կիմանա Պ. Պռոշյանի, Էդ. Աղայանի, Գ.Սունդուկյանի, Ռաֆֆու, Հ. Պարոնյանի, Ծերենցի, Ս. Տյուսաբի, Շիրվանզադեի, Մուրացանի, Նար-Դոսի, Հ. Հովհաննիսյանի, Ա. Արփիարյանի, Ս. Կամսարականի, Գ Զոհրապի ստեղծագործությունների բնութագիրը, թեմատիկ ու գաղափարական առանձնահատկությունները:

Կկարողանա՝

Կատարել հայ նոր գրականության շրջափուլերի գրական երկերի վերլուծություն:

Ներկայացնել հայ կլասիցիստական գրականության և ռոմանտիկական գրականության առանձնահատկությունները:

Կատարել Պ. Պռոշյանի, Էդ. Աղայանի, Գ.Սունդուկյանի, Ռաֆֆու, Հ. Պարոնյանի, Ծերենցի, Ս. Տյուսաբի, Շիրվանզադեի, Մուրացանի, Նար-Դոսի, Հ. Հովհաննիսյանի, Ա. Արփիարյանի, Ս. Կամսարականի, Գ Զոհրապի ստեղծագործությունների ստեղծագործությունների բովանդակության ու ձևի քննություն:

Կտիրապետի՝

Գրական երկի վերլուծության նրբություններին, եզրահանգումներ անել ուսումնասիրված նյութի հանդեպ:

Տարբերակել գրականության բովանդակությունը ձևից և որոշակի ստեղծագործությունների օրինակով ցույց տալ այս կամ այն գրական երկի առանձնահատկությունները:

Բովանդակություն

Թեմա 1. Պերճ Պռոշյան: **Թեմա 2.** Ղազարոս Աղայան: **Թեմա 3.** Գաբրիել Սունդուկյան: **Թեմա 4.** Ռաֆֆի: **Թեմա 5.** Հակոբ Պարոնյան: **Թեմա 6.** Ծերենց: **Թեմա 7.** Սրբուհի Տյուսաբ: **Թեմա 8.** Շիրվանզադե: Թեմա 9. Մուրացան: **Թեմա 10.** Նար-Դոս: **Թեմա 11.** Հ. Հովհաննիսյան, Ա. Արփիարյան, Ս. Կամսարական, **Թեմա 12.** Գ Զոհրապ:

22/Բ24- Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ 4 (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է

Խորությամբ ուսումնասիրել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը գրական, հասարակական շարժումների և քաղաքական անցուդարձերի համապատկերում:

Ներկայացնել այն գործիչներին ու գրողներին, որոնք որակական նոր մակարդակի բարձրացրին հայ մշակույթն ու գրականությունը՝ Հ.Հովհաննիսյան, Շանթ, Թումանյան, Իսահակյան:

Այս ժամանակահատվածում ստեղծված գրականությունը քննել ժառանգորդության, ավանդությունների փոխանցման և եվրոպական ու ռուս գրականությունների ազդեցությունների զարգացումների մեջ: Ցույց տալ այն դերն ու նշանակությունը, որ այն ունեցավ հայ ժողովրդի պատմության այդ փուլում, բացահայտել այդ շրջանում ստեղծված գրականության խորապես ազգային արմատներն ու համամարդկային արժեքները, արժևորել այն հայ և համաշխարհային մշակույթի համատեքստում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի գրական ուղղությունների դրսևորումները հայ գրականության մեջ, հասարակական-քաղաքական բեկումնային իրադարձությունների ազդեցությամբ գրականության մեջ ձևավորված նոր գաղափարական ուղղվածությունների և հիմնական թեմաները, գրականության զարգացման ընդհանուր միտումները.

Կկարողանա՝

1. ներկայացնել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը գրական, հասարակական շարժումների և քաղաքական անցուդարձերի համապատկերում, ցույց տալ գրական ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները, գրական-գեղարվեստական արժեքները և դրանց գաղափարական միտումները,
2. բացահայտել գրական երկի կառուցվածքի, կերպարների, գործողությունների ծավալման և զարգացման յուրահատկությունները,
3. վերլուծել գրական ստեղծագործությունը գրողի կյանքի և ապրած ժամանակաշրջանի իրադարձությունների համատեքստում:

Կտիրապետի՝

1. գրականագիտական վերլուծություններ անելու կարողությունների և կհանգի անհրաժեշտ եզրակացությունների,
2. տարբեր հեղինակների կարծիքները հաշվի առնելով՝ կկարողանա արտահայտել իր սեփական կարծիքը,
3. բանավոր և գրավոր խոսքում կդրսևորի գրականագիտական ձևակերպումներ անելու կարողություններ և անհրաժեշտ մակարդակի գեղագիտական ճաշակ:

Բովանդակություն

Թեմա 1. Հայ հասարակական-քաղաքական կյանքը 20-րդ դարի սկզբին: Գրական կյանքը և պայքարը այս ժամանակաշրջանում: Գրական խոշոր դեմքերի՝ Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի և ուրիշների ստեղծագործական վերելքը: **Թեմա 2**. Արևմտահայության վիճակը: Գրական կյանքը և պայքարը Արևմտյան Հայաստանում: Գրական նոր դեմքերի մուտքը. Մեծարենց, Վարուժան, Սիամանթո, Սևակ, Օտյան, Շանթ: Սուլթանական ռեակցիայի դեմ ուղղված ազատագրական պայքարի արտացոլումը գրականության մեջ: **Թեմա 3**. Հովհաննես Հովհաննիսյան,Կյանքը: Պոեզիայի բնորոշ կողմերը և հիմնական թեմաները: Հովհաննիսյանի բերած նորությունները: Նրա դերը հայ ռեալիստական պոեզիայի զարգացման մեջ: **Թեմա 4**.

Հովհաննես Թումանյան: Թումանյանը որպես հայ ժողովրդի հանճարեղ բանաստեղծ. Թումանյանի կյանքը, ստեղծագործության բազմաժանրությունը: Թումանյանի պոեմները. (<Մարո>, <Լոռեցի Սաքո> <Անուշ>, <Հառաչանք>). երկու աշխարհի սահմանագծում գտնվող գյուղական աշխարհի պատկերները այդ պոեմներում: <Անուշ> պոեմը որպես հայ նոր պոեզիայի գագաթ. պոեմի ստեղծագործական պատմությունը, կերպարները, գեղարվեստական արժանիքները: Թումանյանի քնարական պոեմները: **Թեմա 5**. Թումանյանի էպիկական պոեմները: <Սասունցի Դավիթ>. ժողովրդական էպոսի մշակման սկզբունքները: Ժողովրդական ոգու բացահայտումը և խորացումը: Դավթի կերպարը, հայրենասիրական-ազատագրական պայքարի գաղափարը պոեմում: <Թմկաբերդի առումը> պոեմը: Մարդու խնդիրը: <Լավ գործը> որպես մարդու մեջ մարդկայնորեն դրականը որոշող գաղափար: **Թեմա 6**. Լեգենդներն ու բալլադները և դրանց առանձնահատկությունները: <Փարվանա> բալլադը, մարդկային անկաշառ, ազնիվ հոգու, գեղեցկության, կատարելության ձգտման հավերժական գաղափարները: **Թեմա 7**. Թումանյանի քնարերգությունը: Հայրենիքի քաղաքական ողբերգությունը. <Հայոց վիշտը>, <Հայոց լեռներում>, <Հայրենիքիս հետ>, <Հոգեհանգիստ>, <Բարձրից> և այլ բանաստեղծությունները: **Թեմա 8**. Թումանյանի քառյակները: Թումանյանի արձակ ստեղծագործությունները: Թումանյանի հումորը. <Մերոնք> նովելաշարը: Թումանյանի հեքիաթները: <Քաջ Նազար>. Նազարի կերպարի դասական մշակվածությունը: Հրաշապատում հեքիաթները: Թումանյանը իբրև հրապարակախոս և քաղաքական գործիչ: **Թեմա 9**. Ավետիք Իսահակյան: Իսահակյանը որպես խոշորագույն քնարերգակ: Կյանքը և ստեղծագործության զարգացման շրջանները: Բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ («Երգեր և վերքեր»), նրա բերած նորությունները: Բանաստեղծությունների մյուս հրատարակությունները: **Թեմա 10**. Իսահակյանի պոեզիայի հիմնական թեմաները: Սոցիալական հայացքները և տրամադրությունները: **Թեմա 11**. Իսահակյանը սիրո երգիչ: Սոցիալական տրամադրությունների արտահայտությունները սիրո երգերում: Քնարերգության և ժողովրդական բանահյուսության կապերը: Իսահակյանի պոետիկական կուլտուրայի ինքնատիպությունը: «Ալագյազի մանիներ» քնարական պոեմը: «Ասպետի սերը» և «Հավերժական սերը» բալլադները: Սիրո հոգեբանության բազմերանգ և խոր պատկերումը: **Թեմա 12**. Իսահակյանի գրական մեթոդի հիմնական կողմերը: Իսահակայանի քաղաքական պոեզիան: Երգերը հայրենիքի մասին: Իսահակյանի «Աբու-Լալա-Մահարի» քնարական, խոհա-փիլիսոփայական պոեմը: Փախուստ իրականությունից: **Թեմա 13**. «Սասմա Մհեր» պոեմի ստեղծագործական պատմությունը: Ժողովրդական էպոսի թեմաների մշակման յուրաատկությունները, պոեմի գաղափարական բովանդակությունը և Մհերի կերպարը: Պոեմի լեզուն:Հասարակական կյանքի ժխտման պատճառները: **Թեմա 14**. Իսահակյանի գեղարվեստական արձակը: Իրականության դեմ՝ սոցիալական պայքարի գաղափարը պատմվածքներում («Գարիբալդիականը», «Համբերանքի չիբուխը», «Շաքրո Վալիշվիլի» և այլն): «Ուստա Կարո» վեպը: **Թեմա 15**. Իսահակայնի նորավեպերը: Մարդու կյանքի կարճատևության և աշխարհի գեղեցկության ու հավերժության մոտիվները նորավեպերում և արձակ լեգենդներում՝ («Լիթիայի Պո», «Սաադիի վերջին գարունը», «Թափառական Շիդհարը» և այլն): Նորավեպերի գեղարվեստական առանձնահատկությունները: **Թեմա 16**. Լևոն Շանթ. Կյանքը, գրական, հասարակական-քաղաքական գործունեությունը: Ստեղծագործություններում առկա իդիլիան, արձակին բնորոշ հատկանիշները, դրամատուրգիային բնորոշ հիմնական առանձնահատկությունները:

22/Բ25- Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ 5 (4 կրեդիտ)

Շաբաթական 7 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է խորությամբ ուսումնասիրել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը գրական, հասարակական շարժումների և քաղաքական անցուդարձերի համապատկերում:

Ներկայացնել այն գործիչներին ու գրողներին, որոնք որակական նոր մակարդակի բարձրացրին հայ մշակույթն ու գրականությունը՝ Տերյան, Սիամանթո, Վարուժան, Մեծարենց, Օտյան, և այլն:

Այս ժամանակահատվածում ստեղծված գրականությունը քննել ժառանգորդության, ավանդությունների փոխանցման և եվրոպական ու ռուս գրականությունների ազդեցությունների զարգացումների մեջ: Ցույց տալ այն դերն ու նշանակությունը, որ այն ունեցավ հայ ժողովրդի պատմության այդ փուլում, բացահայտել այդ շրջանում ստեղծված գրականության խորապես ազգային արմատներն ու համամարդկային արժեքները, արժևորել այն հայ և համաշխարհային մշակույթի համատեքստում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի գրական ուղղությունների դրսևորումները հայ գրականության մեջ, հասարակական-քաղաքական բեկումնային իրադարձությունների ազդեցությամբ գրականության մեջ ձևավորված նոր գաղափարական ուղղվածությունների և հիմնական թեմաները, գրականության զարգացման ընդհանուր միտումները.

Կկարողանա՝

1. ներկայացնել 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գրականությունը գրական, հասարակական շարժումների և քաղաքական անցուդարձերի համապատկերում, ցույց տալ գրական ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները, գրական-գեղարվեստական արժեքները և դրանց գաղափարական միտումները,
2. բացահայտել գրական երկի կառուցվածքի, կերպարների, գործողությունների ծավալման և զարգացման յուրահատկությունները,
3. վերլուծել գրական ստեղծագործությունը գրողի կյանքի և ապրած ժամանակաշրջանի իրադարձությունների համատեքստում:

Կտիրապետի՝

1. գրականագիտական վերլուծություններ անելու կարողությունների և կհանգի անհրաժեշտ եզրակացությունների,
2. տարբեր հեղինակների կարծիքները հաշվի առնելով՝ կկարողանա արտահայտել իր սեփական կարծիքը,
3. բանավոր և գրավոր խոսքում կդրսևորի գրականագիտական ձևակերպումներ անելու կարողություններ և անհրաժեշտ մակարդակի գեղագիտական ճաշակ:

Բովանդակություն

Թեմա 1. Վահան Տերյան: Վահան Տերյանի կյանքը և գրական-հասարակական գործունեությունը: Տերյանի ստեղծագործության տեղն ու նշանակությունը 20-րդ դարի հայ պոեզիայի զարգացման պատմության մեջ: Տերյանի բանաստեղծական առաջին քայլերը: «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն: Տերյանը և սիմվոլիզմը: Տերյանի հասարակական հայացքները և արտահայտած տրամադրությունները: Առաջին համաշխարհային պատերազմը և հայ ժողովրդի ճակատագրի ու հեռանկարների հարցը Տերյանի երգերում, հոդվածներում: Բանաստեղծի ապրած ողբերգությունը և նրա լավատեսությունը: Տերյանի լեզվական և բանաստեղծական բարձր արվեստը: Տերյանը և դարասկզբի ռուս գրականությունը: Տերյանի ազդեցությունը հետագա հայ բանաստեղծների վրա: Տերյանի քննադատական և հրապարակախոսական հոդվածները: **Թեմա 2.** Սիամանթո: Կյանքը և գրական գործունեությունը: Սիամանթոյի գրական ուղղության խնդիրը. սիմվոլիզմից կրած

ազդեցությունները ձևի ասպարեզում: Պոեզիայի գրական հայացքների հակադրությունը սիմվոլիզմին ոգու և գաղափարի իմաստով: Սուլթանական ջարդարարության և մղձավանջային իրականության պատկերը Սիամանթոյի ստեղծագործության մեջ: «Սուրբ Մեսրոպը» և նրա կապը Գր. Նարեկացու ավանդների հետ: Սիամանթոյի պոետիկական ինքնատիպ կուլտուրան: **Թեմա 3.** Միսաք Մեծարենց: Կյանքը: Մեծարենցի պոեզիան: Բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ <Ծիածան>: Բանաստեղծի երգած ու արտահայտած հիմնական տրամադրությունները: Գրապայքարը նրա ստեղծագործությունների շուրջը: Մեծարենցի պոետիկական բարձր կուլտուրան: Բանաստեղծությունների լեզուն և երաժշտականությունը: Մեծարենցի ստեղծագործական կապերը Գրիգոր Նարեկացու հետ: **Թեմա 4.** Դանիել Վարուժան: Կյանքը և գրական ուսումնառությունը. առաջին փորձերը՝ <Սարսուռներ> ժողովածուն: Հասուն շրջանի ստեղծագործությունները: Վարուժանը իբրև մարդկային ուժեղ և ազնիվ ապրումների և բնավորությունների երգիչ: Վարուժանի բերած նորությունը արևմտահայ պոեզիայում: Գյուղական աշխատանքային կյանքի հովվերգական պատկերումը որպես բուրժուական գորշ իրականության ժխտման արտահայտություն: Ժողովրդական բանահյուսության օգտագործումը: Վարուժանի պոետիկան: **Թեմա 5.** Ռուբեն Սևակ: Կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Սևակի պոեզիայի առանձնահատկությունները, թեմատիկան, բանաստեղծական շարքերը: **Թեմա 6.** Երվանդ Օտյան: Արևմտահայ երգիծաբանությունը Պարոնյանից մինչև Օտյան: Օտյանի կյանքը: Օտյանն իբրև երգիծաբան. երգիծանքի բնույթը և առանձնահատկությունները. բերած նորությունները: Երգիծանքը և հումորը նրա ստեղծագործության մեջ: Օտյանը իբրև ռեալիստական երգիծաբանության ականավոր դեմքերից մեկը: Օտյանի քաղաքական երգիծանքը:

22/Բ26- Հայ գրականության պատմություն՝ նորագույն շրջան 6 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ներկայացնել նորագույն շրջանի հայ գրականության զարգացման հիմնական ուղղությունները, գրականության մեջ ժանրերի զարգացման ընթացքը, գեղարվեստական բարձրարժեք երկերի գեղարվեստական նշանակությունը, որպեսզի ուսանողը կարողանա դասակարգել, քննել, խմբավորել, ներկայացնել գրական հերոսներին, մեջբերել, վերհիշել հիմնական իրադարձությունները, վերարտադրել, ձևակերպել հիմնական ասելիքը, կարողանա եզրահանգումներ անել:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Խորհրդային գրականության ձևավորման հասարակական-քաղաքական նախադրյալները:
2. Եղիշե Չարենցի ստեղծագործությունը որպես նշանակալի երևույթ մեր գրականության պատմության մեջ:
3. 1920-ականներին հայ գրականության մեջ նկատվող նոր տեղաշարժերը:
4. Ե. Չարենցի 30-ականների գրականությունը որպես ժողովրդի անցած ճանապարհի, ներկայի ու գալիքի խոհական-փիլիսոփայական մտորումների ծնունդ:
5. Ակսել Բակունցի ստեղծագործությունը որպես որակապես նոր որակ արձակի բնագավառում:
6. Գրականությունը հայրենական պատերազմի տարիներին:
7. Դ. Դեմիրճյանի պատմագեղարվեստական փորձը:
8. Ստ. Զորյանի պատմավիպասանությունը:

9. Շիրազի ստեղծագործության ժողովրդականությունը:

Կկարողանա՝

1. Կատարել նորագույն շրջանի հայ գրականության շրջափուլերի գրական երկերի վերլուծություն:
2. Ներկայացնել նորագույն գրականության առաջացման սոցիալ-քաղաքական հիմքերը:
3. Կատարել Ե. Չարենցի ստեղծագործության վերլուծություն՝ ներառելով գրողի երկերի տարբեր շրջափուլերը:
4. Կատարել Ակսել Բակունցի ստեղծագործության վերլուծություն:
5. Ներկայացնել Դ. Դեմիրճյանի պատմագիտական փորձի առանձնահատկությունները:
6. Կատարել Ստ. Զորյանի գեղարվեստական երկերի վերլուծություն:
7. Ներկայացնել Գուրգեն Մահարու ,,Այրվող այգեստաններ,, վեպի գաղափարագեղագիտական վերլուծություն:
8. Ներկայացնել Հովհաննես Շիրազի ստեղծագործությունը:

Կտիրապետի՝

1. Գրական երկի վերլուծության նրբություններին, եզրահանգումներ անել ուսումնասիրված նյութի կապակցությամբ:
2. Տարբերակել գրականության բովանդակությունը ձևից և որոշակի ստեղծագործությունների օրինակով ցույց տալ այս կամ այն գրական երկի առանձնահատկությունները:

Բովանդակություն

Թեմա 1. Եղիշե Չարենց: **Թեմա 2**. Դերենիկ Դեմիրճյան: **Թեմա 3**. Ստեփան Զորյան: **Թեմա 4**. Գուրգեն Մահարի: **Թեմա 5**. Մկրտիչ Արմեն: **Թեմա 6**. Վահան Թոթովենց: **Թեմա 7**. Ակսել Բակունց: **Թեմա 8**. Գեղամ Սարյան: **Թեմա 9**. Նաիրի Զարյան: **Թեմա 10**. Հովհաննես Շիրազ:

22/Բ27- Հայ գրականության պատմություն՝ նորագույն շրջան 7 (5 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ներկայացնել նորագույն շրջանի հայ գրականության զարգացման հիմնական ուղղությունները, գրականության մեջ ժանրերի զարգացման ընթացքը, գեղարվեստական բարձրարժեք երկերի գեղարվեստական նշանակությունը, որպեսզի ուսանողը կարողանա դասակարգել, քննել, խմբավորել, ներկայացնել գրական հերոսներին, մեջբերել, վերհիշել հիմնական իրադարձությունները, վերարտադրել, ձևակերպել հիմնական ասելիքը, կարողանա եզրահանգումներ անել:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝նորագույն շրջանի հայ գրականության զարգացման հիմնական ուղղությունները, գրականության մեջ ժանրերի զարգացման ընթացքը, գեղարվեստական բարձրարժեք երկերի գեղարվեստական նշանակությունը և այլն:

Կկարողանա՝ հասկանալ գրական ստեղծագործությունների գեղարվեստական, գաղա-փարական առանձնահատկությունները, դրանց հասարակական նշանակությունը և այլն:

Կտիրապետի՝ վերլուծություններ և ուսումնասիրություններ կատարելու կարողությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Սփյուռքահայ գրականության սկզբնավորման ժամանակի խնդիրը: **Թեմա 2.**Պոլսահայ գրականությունը 1918-22 թթ. իբրև միջանկյալ ենթափուլ արևմտահայ և սփյուռքահայ գրականությունների միջև: **Թեմա 3.** Նոր տիպի գրականության սկզբնավորման

առաջին նշանները 1918-20թթ.: **Թեմա 4**.Սփյուռքահայ գրականությունը 1920-1950-ական թթ. Արմտահայ վերապրող գրողների գործունեությունը սփյուռքյան շրջանում: Տ. Կամսարականի, Ռ. Որբերյանի, Լ. Բաշալյանի, Վ. Մալեզյանի, Ե. Օտյանի, Վ. Թեքեյանի, Զ. Եսայանի գրական գործունեության և ստեղծագործության ուղեգծերը: **Թեմա 5.**Վահան Թեքեյան: **Թեմա 6.** Հակոբ Օշական: **Թեմա 7.** Կոստան Զարյան: **Թեմա 8.** Սփյուռքահայ բանաստեղծության անցած ճանապարհը: Արևմտահայ բանաստեղծության ավանդները և Մերձավոր Արևելքի հայ բանաստեղծությունը: **Թեմա 9**. Մուշեղ իշխան: **Թեմա 10.** Սփյուռքահայ արձակի հիմնահարցերը: **Թեմա 11**. Համաստեղ **Թեմա 12.** Հակոբ Մնձուրի: **Թեմա 13**. Շահան Շահնուր: **Թեմա 14**. Վազգեն Շուշանյան:

22/Բ30- Հայ գրաքննադատության պատմություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

8-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակը.

Դասընթացն ընդգրկում է բավականաչափ ծավալուն ժամանակահատված, առաջացման շրջանից մինչև 20-րդ դարի առաջին կեսերը, քննադատության առաջացման հասարակական պայմաններից մինչև 20-րդ դարի քննադատական տարբեր ուղղությունները: Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել հայ գրաքննադատական մտքի պատմության զարգացման ընթացքը, դրա զարգացման առանձնահատկությունները և այլն:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Հայ գրաքննադատության սկզբնավորումը հայ մատենագրության մեջ:
2. Մ. Խորենացու, Հովհ. Մանդակունու, Գր. Նարեկացու, Սարկավագ Իմաստասերի գրաքննադատական հայացքների մասին:
3. Լուսավորական քննադատության հիմնական պահանջների մասին /Մ. Հ. Ալամդարյան, Թաղիադյան, Խ. Աբովյան /:
4. Խ. Աբովյանի լուսավորական հայացքների, նոր գրականությանը ներկայացվող պահանջների, զարգացման ուղղությունների մասին:
5. Գ. Ախվերդյանի, Ստ. Նազարյանի, Մ. Նալբանդյանի գրաքննադատական հայացքների մասին:
6. Գրական քննադատությունը 70-80-ականներին /Ռաֆֆի, Հ. Պարոնյան, Գր. Արծրունի, Ղ. Աղայան, Արփիարյան, Գր. Զոհրապ/:
7. Քննադատությունը 90-900-ական թվականներին /Շիրվանզադե, Փափազյան, Մեծարենց, Չոպանյան, Թումանյան, Տերտերյան, Վարուժան, Տերյան/:

Կկարողանա՝

1. Կատարել գրաքննադատության պատմության տարբեր շրջափուլերի շրջանաբաժանում:
2. Կատարել հայ մատենագրության մեջ եղած գրաքննադատական հայացքների վերլուծություն:
3. Կատարել Խորենացու, Հովհ. Մանդակունու, Գր. Նարեկացու, Հովհ. Իմաստասերի գրաքննադատական հայացքների վերլուծություն:
4. Կատարել լուսավորական քննադատության հայացքների վերլուծություն:

5. Ներկայացնել գրական քննադատությունը 70-80-ականներին /Ռաֆֆի, Հ. Պարոնյան, Գր. Արծրունի, Ղ. Աղայան, Արփիարյան, Գր. Զոհրապ/:
6. Քննադատությունը 90-900-ական թվականներին /Շիրվանզադե, Փափազյան, Մեծարենց, Չոպանյան, Թումանյան, Տերտերյան, Վարուժան, Տերյան/:

Կտիրապետի՝

1. արողանալ տարբերակել տարբեր շրջափուլերի հայ գրաքննադատության հիմնական պահանջները, դրանց առանձնահատկությունները:
2. Կարողանալ գրաքննադատների սկզբունքներն անհրաժեշտության դեպքում կիրառել գրական երկերի վերլուծության ընթացքում:

Բովանդակություն

Թեմա 1. Խորենացին իբրև ազգային մշակույթի զարգացման գաղափարախոս: Դպրության ազգային բովանդակության անհրաժեշտության հիմնավորումը: **Թեմա 2.** Հովհան Մանդակունի: **Թեմա 3**. Գրիգոր Նարեկացի: **Թեմա 4.** Հովհաննես Սարկավագ Իմաստասեր: **Թեմա 5.** Մեսրոպ Թաղիադյան: **Թեմա 6.** Խաչատուր Աբովյան: **Թեմա 7.** Գևորգ Ախվերդյան: **Թեմա 8.** Ստեփա¬նոս Նազարյան: **Թեմա 9.** Միքայել Նալբանդյան: **Թեմա 10**. Ռաֆֆի: **Թեմա 11**. Հակոբ Պարոնյան: **Թեմա12.** Գրիգոր Արծրունի: **Թեմա 13.** Ստեփանոս Պալասանյան: **Թեմա14**. Ղազարոս Աղայան: **Թեմա 15**. Արփիար Արփիարյան: **Թեմա 16.** Գրիգոր Զոհրապ: **Թեմա 17**. Ալեքսանդր Շիրվանզադե: **Թեմա 18**. Վրթանես Փափազյան: **Թեմա 19**. Միսաք Մեծարենց: **Թեմա 20.** Արշակ Չոպանյան: **Թեմա 21.** Հովհաննես Թումանյան: **Թեմա22.** Արսեն Տերտերյան: **Թեմա 23.** Դանիել Վարուժան: **Թեմա 24.** Վահան Տերյան:

22/Բ2- Արտասահմանյան գրականության պատմություն՝ անտիկ դարաշրջան (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

1-ին կիսամյակ, քնուություն

Դասընթացի նպատակն է

Ուսումնասիրել անտիկ գրականությունը, հին հունական գրականության պատմությունը, առանձնահատկությունները, մշակույթը, դիցաբանությունը, էպոսը, քնարերգությունը, դրաման, հռոմեական գրականությունը, մշակույթը, դիցաբանությունը, էպոսը և քնարերգությունը, կատարել հետազոտություններ, ուսումնասիրություններ, տալ գնահատականներ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Անտիկ մշակույթի և գրականության տեղը գրականության պատմության մեջ
2. Հին հունական գրականության պատմության հիմնական էտապներն ու ժանրերը
3. Հունական էպոսի առանձնահատկությունները
4. Հոմերոսի և Հեսիոդոսի ստեղծագործությունները: Քնարերգության հիմնական տեսակները
5. Հին հունական դրամայի ծագումը և դիցաբանական հիմքերը,
6. Հռոմեական գրականության հիմնական ժանրերն ու դեմքերին

Կկարողանա՝

1. Հասկանալ և վերլուծել անտիկ գրականության հիմնական արժեքներն ու ստեղծագործությունները
2. Անտիկ դարաշրջանի պատմության առանձնահատկություններն ու իրադարձությունները
3. Գրել գրավոր աշխատանքներ անտիկ գրականության թեմաներով
4. Միմյանց համեմատել անտիկ գրականության ժանրերն ու ճանաչելու գրական ստեղծագործությունների գաղափարական իմաստը

Կտիրապետի՝

1. Անտիկ գրականության հիմնական արժեքների և ստեղծագործությունների վերլուծության հիման վրա հիմնավոր եզրակացություններ անելու կարողությանը:
2. Անտիկ գրականության հիմնական գործերի վերաբերյալ նոր մեկնաբանություններ (տակ ընկալման նոր առաջարկներ) ներկայացնելու և դրանք հիմնավորելու կարողությանը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Անտիկ գրականության առարկան, ուումնասիրության աղբյուրներն ու մեթոդները: Նախահոմերոսյան Հունաստանը: **Թեմա 2**.»Իլիական», նրա պատմական և առասպելական հիմքը: **Թեմա 3**.»Ոդիսական»-ի հեղինակության հարցը: **Թեմա 4.** Հերոսական էպոսի քայքայումը: Խրատական էպոսի առաջացումը: **Թեմա 5.** Հեսիոդոսի պոեմները: **Թեմա 6**. Արքիլոքոս, նրա խոհական, ռազմական և սիրային երգերը: **Թեմա 7.** Սապֆոյի պոեզիան: **Թեմա 8.** Անակրեոն: Ալքայոս: Սոլոնը բանաստեղծ և օրենսդիր: **Թեմա 9.** Համահունական գաղափարախոսությունը Պինդարոսի ներբողներում: **Թեմա 10.** Թատրոնը և դրամայի ծագումը: Էսքիլես: **Թեմա 11**. Սոֆոկլես: **Թեմա 12**. Եվիպիդես: **Թեմա 13.** Հելլենիստական գրականության և արվեստի հիմնական առանձահատկությունները: Կապը տեղական մշակույթի հետ: Նոր ժանրեր: Վեպ: Հռոմեական գրականության առաջին շրջանը: Պլավտոսի և Տերենտիուսի կատակերգությունները: **Թեմա 14.**»Էնեականը»իր առնչություններում հունական էպոսի հետ: Հռոմեական քնարերգության համայնապատկերը Կատուլլոսից մինչև Օվիդիուս: **Թեմա15.** Անտիկ աշխարհի կործանման արտաքին ու ներքին պատճառները: Քրիստոնեական գրականության սկզբնավորումը:

22/Բ3- Արտասահմանյան գրականության պատմություն՝ վերածննդի դարաշրջան (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

2-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է

ուսանողներին ծանոթացնել Վերածննդի դարաշրջանի եվրոպական գրականության ձևավորմանը, հիմնական ուղղություններին և ներկայացուցչական հեղինակներին՝ զարգացնելով նրանց կարողությունները վերլուծելու այդ շրջանի գրական ստեղծագործությունները, բացահայտելու դրանց գեղարվեստական արժեքներն ու գաղափարական նշանակությունը, ինչպես նաև գնահատելու Վերածննդի

գրականության ազդեցությունը համաշխարհային գրական-մշակութային զարգացումների վրա:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. ըմբռնի վաղ, հասուն և ուշ միջնադարի գրականությունն ու մշակույթը Եվրոպայում, նրանում առկա գրական ուղղությունները,
2. տարբերակել Վաղ վերածննդի գրականության հիմնական դեմքերին Իտալիայում և Գերմանիայում.
3. ֆրանսիական վերածննդի պատմությունն ու գրականությունը, մասնավորապես Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել» վեպը, իսպանական վերածննդի գրականությունն ու պատմությունը, մասնավորապես Սերվանտեսի և Լուպե դե վեգայի հիմնական ստեղծագործությունները, անգլիական գրականությունն ու պատմությունը, մասնավորապես Քր. Մառլոյի, Շեքսպիրի ստեղծագործությունները.

Կկարողանա՝

1. պատկերացում կազմել գրականության զարգացման միջնադարյան և Վաղ վերածննդի գրականության հիմնական միտումների մասին,
2. ներկայացնել Վերածննդի գրականությունն ու գրողներին,
3. հասկանալ Ֆրանսիայում, Իսպանիայում և Անգլիայում Վերածնության գործընթացների տրամաբանությունն ու համապատկերը, գրականության ու կյանքի սերտ կապը,
4. կատարել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

Կտիրապետի՝

1. տիրապետի Վերածննդի գրականության հիմնական երկերն ու գրողներին բնութագրելու կարողությունների
2. գրի ուսումնասիրություն գրական նշված իրողությունների և երկերի վերաբերյալ,
3. Ռաբլեի, Սերվանտեսի, Լուպե դե Վեգայի, Շեքսպիրի շատ ստեղծագործություններ մեկնաբանելու կարողությունների:

Բովանդակությունը.

Թեմա 1. Վերածննդի գրականության հիմնական առանձնահատկությունները: **Թեմա 2.** Վաղ վերածնունդը Իտալիայում: Դանթե: «Աստվածային կատակերգություն» պոեմը: **Թեմա 3.** Պետրարկա: «Երգերի գիրք» ժողովածուն: **Թեմա 4.** Բոկաչչո: «Դեկամերոնի» հումանիստական ուղղվածությունը: **Թեմա 5.** Վերածնունդը Նիդեռլանդներում: Էրազմ Ռոտերդամցու «Գովք հիմարության» երկը: **Թեմա 6.** Գերմանական ռեֆորմացիան. գերմանական ժողովրդական վեպը: **Թեմա 7.** Նախավերածնունդը Ֆրանսիայում: Վիյոն: **Թեմա 8.** Վերածնունդը Ֆրանսիայում: **Թեմա 9.** Ֆրանսիական վերածննդի պոեզիան: **Թեմա 10.** Ֆրանսիական վերածննդի արձակը: **Թեմա 11**. Ֆրանսուա Ռաբլե: **Թեմա 12.** Վերածնունդը Իսպանիայում: **Թեմա 18.** Պիկարոյական վեպը: **Թեմա 13**. Սերվանտես: **Թեմա 14.** Լուպե դե Վեգա: **Թեմա**

15. Վերածնունդը Անգլիայում: **Թեմա 16.** Ռեֆորմացիան և ռոմանտիզմը: **Թեմա 17.** Քրիստոֆեր Մառլո: **Թեմա 18.** Վ. Շեքսպիր:

22/Բ4-Արտասահմանյան գրականության պատմություն ՝ 17-19-րդ դարեր (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

ուսանողներին ծանոթացնել 17-19-րդ դարերի արտասահմանյան գրականության նշանավոր դեմքերին և նրանց ստեղծագործություններին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. 17-19-րդ դարերի արտասահմանյան գրականության հիմնական դեմքերին ու ստեղծագործությունները.
2. 17-րդ դարի եվրոպական գրականության հիմնական ուղղություններն ու մեթոդները, մասնավորապես կլասիցիզմը և բարոկկոն, նրանց գեղագիտությունն ու գրականությունը
3. 18-րդ դարի գրական հիմնական ուղղությունները՝ լուսավորական ռեալիզմը, սենտիմենտալիզմը և նատուրալիզմը, նրանց ներկայացուցիչներին ու երկերը, ինչպես նաև 19-րդ դարի 1-ին տասնամյակների գրական հիմնական ուղղությունը՝ ռոմանտիզմը
4. ռեալիստական, ռոմանտիկական, նատուրալիստական, սիմվոլիստական ազդեցությունները և գեղագիտությունը.

Կկարողանա՝

1. կարողանա համադրել գրական ուղղություններն ու գրական երկերը
2. պատկերացում կազմել գրականության զարգացման 17-19-րդ դդ. միտումների մասին.
3. ներկայացնել 17-19-րդ դդ. գրականությունն ու գրողներին
4. հասկանալ 19-րդ դարի պատմության ու մշակույթի շատ իրողություններ, դրանց կապը միմյանց հետ,անգլիական, ֆրանսիական, գերմանական, ամերիկյան գրականությունների առանձնահատկությունները.
5. կատարել ինքնուրույն հետազոտական աշխատանքներ:

Կտիրապետի՝

1.17-19-րդ դդ. գրականությանն ու գրողների ստեղծագործությունները բնութագրելու կարողությունների:

2.կգրի ուսումնասիրություն գրական նշված իրողությունների և երկերի վերաբերյալ:

Բովանդակությունը.

Թեմա 1. Կլասիցիզմի առաջացումը Ֆրանսիայում: Կլասիցիզմի տեսությունը /Ն. Բուալո/: Կոռնեյլ: Մոլիեր: **Թեմա 2.** Անգլիական վեպի ձևավորումը և զարգացումը 18-

րդ դարում: Դ. Դեֆո: Սենտիմենտալիզմի առաջացումը Անգլիայում: Լ. Ստերն: **Թեմա 3**.Ֆրանսիական լուսավորչական գրականություն: Ռուսսո: Դ. Դիդրո: Վոլտեր: **Թեմա 4.** Լուսավորությունը Գերմանիայում: «Գրոհ և փոթորիկ» շարժումը: Հերդեր: Լեսսինգ: Վ. Գյոթե: Շիլլեր: **Թեմա 5.** Ռոմանտիզմի սոցիալ-պատմական փիլիսոփայական նախադրյալները: Ռոմանտիզմի գեղագիտությունը և գրականությունը: **Թեմա6.**Գերմանական ռոմանտիկական արձակը: Հոֆման: **Թեմա7.** Անգլիական ռոմանտիզմի գրականությունը: Բայրոն: Ռոմանտիզմը ֆրանսիայում: Հյուգո: Ռոմանտիզմը ԱՄՆ-ում: Էդգար Պո: **Թեմա 8.** Դասական ռեալիզմի գեղագիտությունը և գրականությունը: **Թեմա 9.** Դասական ռեալիզմի գրականությունը Ֆրանսիայում: Բալզակի գրական ժառանգությունը: Բալզակի «Մարդկային կատակերգության» կառուցվածքը և նրա գեղագիտական-փիլիսոփայական կոնցեպցիան: Մարդը և հասարակությունը: «Շագրենի կաշինե վեպը: Ռոմանտիկական իդեալի փլուզումը Գ. Ֆլոբերի վեպերում /«Տիկին Բովարի», «Զգացմունքների դաստիարակություն»/: Ֆլոբերի պոետիկան: **Թեմա 10.** Դասական ռեալիզմի գրականությունը Անգլիայում: Դիկկենսի վիպասանությունը: Մանկության թեմայի արծարծումը Դիկկենսի վեպերում. «Օլիվեր Թվիստ»: **Թեմա 11**. Նատուրալիզմի առաջացումը ֆրանսիայում: **Թեմա 12.** Սիմվոլիզմի գեղագիտությունը և գրականությունը: Օսկար Ուայլդի գեղագիտությունը: «Դորիան Գրեյի դիմանկարը» վեպը: **Թեմա 13.** Դարակեսի ԱՄՆ-ի գրականությունը: Հ. Մելվիլի ստեղծագործությունը: «Մոբի Դիկ» վեպը: **Թեմա 14.** Ռեալիզմի սկզբնավորումը ամերիկյան գրականության մեջ:

22/Բ 5-Արտասահմանյան գրականության պատմություն՝ 20-րդ դար (3 կրեդիտ)
Շաբաթական 2 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)
3-րդ կիսամյակ, քննություն
Դասընթացի նպատակն է.
Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել 20-րդ դարի արտասահմանյան գրականության պատմության հիմնական իրողություններին ու ստեղծագործություններին:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝
1. իմանա 20-րդ դարի արտասահմանյան գրականության հիմնական դեմքերին ու ստեղծագործությունները
2. հասկանա 20-րդ դ. գրական դաշտում տեղի ունեցող իրադարձություններն ու շարժումները
3. ըմբռնի այն փոփոխությունները, որոնք կատարվում են 20-րդ դ. սահմանագծին գրականության կյանքում

Կկարողանա՝
1. կարողանա համադրել գրական ուղղություններն ու գրական երկերը
2. պատկերացում կազմել գրականության զարգացման 20-րդ դ. միտումների մասին.
3. ներկայացնել 20-րդ դ. գրականությունն ու գրողներին

Կտիրապետի՝

20-րդ դ. գրականությանն ու գրողների ստեղծագործությունները բնութագրելու կարողությունների:

Բովանդակությունը.

Թեմա 1. 20-րդ դարի արտասահմանյան գրականության պարբերացումը և զարգացման հիմնական միտումները: **Թեմա 2.** Անգլիայի գրականությունը: Ջեյմս Ջոյսի նորարարությունը: «Դուբլինցիներ» պատմվածաշարը: «Արվեստագետի դիմանկարը երիտասարդ հասակում»: «Ուլիսը» որպես 20-րդ դարի վեպի նոր կոնցեպցիա: Պարոդիայի հասկացությունը «Ուլիս»-ում: **Թեմա 3**. Թոմաս Էլիոթի ստեղծագործությունը: Թ. Էլիոթը և 20-րդ դարի մոդեռն պոեզիան: Էլիոթի պոեմները /«Մեռյալ երկիր»,«Չորս կվարտետ», «Մոխրե չորեքշաբթի»/: Էլիոթի քննադատական հայացքները: Եվրոպական մշակույթի անկման գաղափարները Էլիոթի պոեզիայում: **Թեմա 4**. Ջ. Օզբոռնի «Ետ նայիր զայրացած» պիեսը: Ու. Գոլդինգի փիլիսոփայական արձակը: «Ճանճերի տերը» վեպը: **Թեմա 5.** Գերմանախոս գրականությունը: Բ. Բրեխտի «Կուրաժ մայրիկը և նրա զավակները» պիեսը: **Թեմա 6.** Ֆ. Կաֆկան և էքսպրեսիոնիզմի գրականությունը: Մարդու իրավիճակի պատկերումը Կաֆկայի վեպերում /՝Դատավարություն», «Դղյակ», «Կերպարանափոխություն», «Դատավճիռ»/:

Թեմա 7. Թոմաս Մանի ստեղծագործական ուղին: Թոմաս Մանի փիլիսոփայական, գեղագիտական հայացքները /«Դոկտոր Ֆաուստոս»/: Հայնրիխ Մանի գեղարվեստական կոնցեպցիան: **Թեմա 8.** Հերման Հեսսեն և գերմանական գրականության զարգացումը 20-րդ դարի առաջին կեսին /«Տափաստանի գայլը», «Ուլունքախաղ»/: **Թեմա 9.** Ֆրանսիական գրականությունը: Ֆրանսիական սյուրռեալիզմի պոեզիան: Ֆ. Մորիակի Իժերի կծիկը վեպը: **Թեմա 10.** Ֆրանսիական էքզիստենցիալիստական գրականությունը, Ալ. Քամյուի Ընդվզող մարդը», Օտարականը», «Ժանտախտը»: Քամյուի դրամատուրգիան: **Թեմա 11.** Ժան Պոլ Սարտրի փիլիսոփայական կոնցեպցիան: Սարտրը վիպագիր /«Ազատության ուղիներ»/: Սարտրը դրամատուրգ: **Թեմա 12.** 20-րդ դարի ամերիկյան գրականության հիմնական ուղղությունները: Ջ.Լոնդոն «Մարտին Իդեն»: **Թեմա 13.** Ս. Ֆիցջերալդի «Մեծն Գեթսբին» և «Գիշերն անույշ է» վեպերը: «Ամերիկյան երազի» փլուզումը: Ուժեղ մարդու կերպարը Է. Հեմինգուեյի ստեղծագործություններում /՝աղմուկ և ցասում»/: **Թեմա 14.** Վ. Սարոյանը արձակագիր: «Մարդկային կատակերգություն» վեպը, պատմվածքները: Վ. Սարոյանը դրամատուրգ /«Իմ սիրտը լեռներում է», «Քո կյանքի ժամանակը»/: 20-րդ դարի ամերիկյան դրամատուրգիան:

24/Բ56- Ռուս գրականության պատմություն (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

1. Ձևավորել ռուս գրականության պատմության հիմնական օրինաչափությունների ուղղությունների, հոսանքների և զարգացման միտումների մասին պատկերացնում,
2. Ներկայացնել ռուս գրականության պատմության կարևորագույն երևույթները,
3. Ստեղծել գրական տեքստերի գեղարվեստական, բարոյափիլիսոփայական և սոցիալական նշանակության հասկացություն,
4. Բարելավել գրական վերլուծության հմտությունները, գրական ստեղծագործության մեկնաբանումը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Հին ռուս գրականության ծագումը, ժանրերի դասակարումը, թեմաների առանձնահատկությունը,
2. 18 դարի ռուս գրականության հիմնական գրական ուղղությունները և դրանց դրսևորումները ռուս գրականության մեջ,
3. 19 դարի ռուս գրականության հասարակական-քաղաքական բեկումնային իրադարձությունների ազդեցությամբ գրականության մեջ ձևավորված նոր գաղափարական ուղղվածությունները և հիմնական թեմաները, նշված Ժամանակաշրջանի կարևորագույն պրոզաիկ, պոետիկ և դրամատիկական աշխատանքները,
4. 20-րդ դարի ռուս գրականության զարգացման միտումները, ուղղությունները,
5. բացատրելու գրական ստեղծագործությունների գաղափարական առանձնահատկությունները, գրական երկերի պատմական-հասարակական դերը:

Կկարողանա՝

1. գործնականում կատարելու գրականագիտական նյութերի վերլուծություններ և ուսումնասիրություններ:
2. հիմնավորել սեփական դիրքորոշումը և եզրակացություններ անել,
3. կողմնորոշվել ժամանակակից գրական հոսքի մեջ,
4. կենտրոնացնել ուշադրությունը ժամանակակից գեղագիտական խնդիրների վրա,
5. տարբերակելո գրական ստեղծագործությունների առանձնահատկությունները:

Կտիրապետի՝

1. մտքի հստակ ձևակերպման և շարադրման հմտություններին,
2. վերացական մտածողության հմտություններին,
3. գրական տեքստի վերլուծության հմտություններին,
4. գրականագիտական վերլուծությունների վերաբերյալ տվյալներ համակարգելու հմտություններին:

Բովանդակություն

Тема 1. Древнерусская литература. Общая характеристика. Первые летописи. Значение летописей. Христианская литература на Руси. Возникновение письменности на Руси. Русское средневековье. Реформы Петра. Развитие литературных жанров на Руси. **Тема 2.** Литература XVIII века. Классицизм в России А. Д. Кантемир, В. Тредиаковский, М. Ломоносов. Значение их творчества. Филологические труды. Реформы русского классицизма. Понятие классицизм.

Причины возникновения классицизма на русской почве, связь течение с политической общественной культурной жизнью. **Тема 3.** Возникновение русского романтизма: причины, 2 волны русского романтизма, отличительные черты русского романтизма от западного романтизма. Романтические стихи Пушкина, Лермонтова, Жуковского. Жуковский родоначальник русского романтизма. **Тема 4.** Литература XIX века. Творчество Пушкина. Вольнолюбивая и философская лирика Пушкина, истоки байронизма в лирике Пушкина. Особенности любовной лирики Пушкина. Поэмы Пушкина. "Маленькие трагедии" Пушкина. **Тема 5**. Проза Пушкина. Роман «Евгений Онегин». Идейное содержание романа в стихах Пушкина. История создания "романа в стихах". Художественные особенности романа. **Тема 6**.Творчество Лермонтова. Лирика, поэмы, проза, роман «Герой нашего времени». Образ лишнего человека в романе Лермонтова. Женские образы, их отличия и сходства.

Тема 7.Творческий путь Гоголя. Повести, комедия «Ревизор», «Мертвые души».Повесть «Тарас Бульба». Идейное содержание повести. Конфликт повести и композиционное своеобразие. Система образов. Образ национального борца-патриота в повести. **Тема 8.** Л. Н. Толстой. Раннее творчество Толстого. «Детство», «Отрочество», «Юность» — художественное исследование душевной жизни и духовного развития; нравственный идеал, «чистота нравственного чувства» как основа такого исследования. Изображение «диалектики души» как метод и форма психологического анализа. Л. Повести ,,Люцерн", ,,Три смерти", ,,Холстомер". Романы Толстого «Анна Каренина», «Воскресение». **Тема** 9.Ф.М. Достоевский. «Преступление и наказание». Тема Человека - бога; ницшеанские мотивы в романе и сущность теории Родиона Раскольникова о Сверхчеловеке. .Библейские мотивы в романе "Идиот". **Тема 10.** А. П. Чехов. Повести и рассказы. Пьесы. Чехов и европейская «новая драма» его времени. Драматургическое новаторство Чехова. **Тема 11.** М. Горький. Романтические произведения. Образы босяков и изгоев в раннем творчестве Горького. цикл рассказов «Старуха Изергиль». Стихотворения в прозе: «Песня о буревестнике», «Песня о Соколе». Гуманизм пьесы «На дне». **Тема 12.** Лирика поэтов начала XX века.Поэзия А. Блока, Есенина, Маяковского.

22/Բ12- Գրականության տեսություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

3-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել գրականագիտության բաժիններին, գրականության տեսության առանձնահատկություններին, իբրև արվեստի տեսակ գրականության ժանրերին, տեսակներին և հարակից խնդիրներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. գրականության տեսության տեղը գրականագիտական առարկաների մեջ, գրական ժանրերի և տեսակների պատմությունն ու առանձնահատկությունները,

2. ունակ կլինի հասկանալու գրական պատկերի, պատկերավորման միջոցների հետ կապված խնդիրները:

Կկարողանա՝

1. կկարողանա համադրել գրական սեռերն ու տեսակները, ուղղություններն ու գրական երկերը,
2. պատկերացում կազմել գրականության լեզվի և տաղաչափական համակարգերի մասին:

Կտիրապետի՝

կտիրապետի գրականագիտության և գրականության տեսության հիմնական տերմիններին և հասկացություններին և դրանք գործնականում կիրառելու հմտություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Գրականագիտական մտքի զարգացման համառոտ ակնարկ: **Թեմա 2.** Գրականագիտության բաժինները: **Թեմա 3.** Արվեստը որպես հասարակական գիտակցության ձև: Գրականությունը որպես արվեստի տեսակ: Գրականության ժողովրդայնությունը և ազգային յուրահատկությունը: Գրականության հասարակական նշանակությունը: **Թեմա 4**. Գեղագիտական զգացմունք և իդեալ: **Թեմա 5**. Գեղագիտական կատեգորիաներ: Գրական-գեղարվեստական պատկեր, նրա բազմազանությունը, պատկերի անհատական բնույթը և տիպականությունը: **Թեմա 6.** Գրական կերպարի առանձնահատկություններն ու տեսակները: **Թեմա 7.** Բովանդակություն և ձև: Կոմպոզիցիա և սյուժե: **Թեմա 8**. Գրական ստեղծագործության լեզվի առանձնահատկությունները: Լեզվի պատկերավորության միջոցները: Տաղաչափության հիմունքները: Տաղաչափական համակարգեր: Հայկական տաղաչափության առանձնահատկությունները: **Թեմա 9**. Գրական սեռեր և տեսակներ: **Թեմա10**. Գեղարվեստական մեթոդ. կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, 19-20-րդ դդ. գրական հոսանքները: Գրական ոճ:

22/Բ42- Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա (5 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

5-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է

Միջին (հիմնական) և ավագ դպրոցում հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան տեսական-որձնական բնույթի դասընթացը է, որը սերտ աղերսներ ունի լեզվաբանության, գրականության, հոգեբանության, փիլիսոփայության, մանկավարժագիտության և այլ գիտությունների հետ: Հայոց լեզվի և գրականության բաժնի երկրորդ կուրսում «Հայոց լեզվի մեթոդիկա» դասընթացի նպատակն է ծանոթացնել ուսանողներին միջին և ավագ դպրոցի սաների հոգեբանական առանձնահատկություններին, պետական կրթական փաստաթղթերով ներկայացվող պահանջներին և դրանցով պայմանավորված[a] հայոց (մայրենի) լեզվի ուսուցման սկզբունքներին:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. հիմնական և ավագ դպրոցների սովորողների հոգեբանամանկավարժական բնութագիրը հիմնական գծերով.

2. պետական փաստաթղթերով հայոց (մայրենի) լեզվի ուսուցման առջև դրված պահանջները.
3. անձնակենտրոն կամ սովորողակենտրոն ուսուցման հիմնական և բնորոշ կողմերը.
4. 5-6-րդ դասարաններում հայոց լեզվի և գրականության միասնացած (ինտեգրված) դասընթացի առանձնահատկությունները.
5. 7-9-րդ դասարաններում հայոց լեզվի դասընթացի առանձնահատկությունները.
6. Ավագ դպրոցում հայոց լեզվի դասընթացի առանձնահատկությունները.
7. ուսուցման ժամանակակից մի քանի տեխնոլոգիաների և ակտիվ մեթոդների կիրառման առանձնահատկությունները.
8. տեքստային աշխատանքի և բառապաշարի հարստացման սկզբունքները.
9. քերականական նյութի ուսուցումը սովորողների լեզվամտածողության, հաղորդակցական կարողությունների զարգացմանը ծառայեցնելու սկզբունքները:

Կկարողանա՝

1. նկարագրել մայրենի լեզվի և հայոց լեզվի ուսուցման գործընթացում ուսուցման մի քանի մեթոդներ և եղանակներ.
2. կազմակերպել ընթերցանության դասեր տարբեր մեթոդների կիրառությամբ.
3. կազմակերպել քերականության ուսուցման դասեր սովորողների հաղորդակ ցական և համագործակցային կարողությունների զարգացման նպատակով.
4. կազմակերպել խոսքի զարգացման դասեր տարբեր միջոցների և մեթոդների կիրառությամբ£

Կտիրապետի՝

1. հայոց լեզվի որևէ թեմայի կամ դասի պլանավորման սկզբունքներին.
2. մայրենի լեզվի և հայոց լեզվի տարբեր թեմաներից դասերի պլան կազմելու և փորձնական դասեր վարելու մեթոդներին.
3. սովորողների բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող հիմնական աշխատանքներին.
4. տեքստի ուսումնասիրության կազմակերպման սկզբունքներին.
5. սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացման եղանակներին և միջոցներին:

Բովանդակություն

Թեմա 1. Հայոց լեզվի մեթոդիկան իբրև գիտություն: Մեթոդիկայի կապը լեզվաբանության, գրականության, մանկավարժության, հոգեբանության, փիլիսոփայության և այլ գիտությունների հետ: Հայոց լեզվի ուսուցման մեթոդները: Ավանդական և ժամանակակից մեթոդներ: Դրանց համադրությունը ուսումնական գործընթացում: Անձնակենտրոն կամ աշակերտակենտրոն և փոխներգործուն (ինտերակտիվ) ուսուցում: **Թեմա 2.** Պետական փաստաթղթեր, դրանց նկարագրությունը: Հայոց լեզվի և գրականության ուսուցչի առջև դրված պահանջները: Հայոց լեզվի և գրականության միասնացած դասընթացը 5-6-րդ դասարաններում: Ուսուցման և դասավանդման յուրահատկությունները հանրակրթական դպրոցի 7-9 րդ դասարանների հայոց լեզվի դասընթացում: Ուսուցման և դասավանդման յուրահատկությունները հանրակրթական դպրոցի ավագ դպրոցի հայոց լեզվի դասընթացում: Նշված դասագրքերի բովանդակությունը և կառուցվածքային առանձնահատկությունները: Աշակերտի ճանաչողական-տրամաբանական,

հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների և ինքնուրույնության զարգացումը հայոց լեզվի դասավանդման գործընթացում: **Թեմա 3.** Աշակերտի բանավոր և գրավոր խոսքի զարգացումը հայոց լեզվի դասավանդման գործընթացում: Խոսքի զարգացման ուղիները: Աշակերտների բառապաշարի հարստացման ուղիները: Բառապաշարի հարստացումը ընթերցանության, բառագիտության և քերականության ուսուցման գործընթացում: Ընթերցանության կազմակերպման ավանդական և ժամանակակից մեթոդներ: Տեքստային աշխատանքի կազմակերպման սկզբունքները: Տեքստի լեզվաոճական և քերականական վերլուծություն: **Թեմա 4.** Բանավոր խոսքի զարգացման սկզբունքները միջին և բարձր դասարաններում: Գրավոր խոսքի զարգացում: Գրավոր խոսքի տեսակները, դրանց կիրառութ յունը, ուսուցման ձևերը և հնարները: Ստեղծագործական շարադրանքների կառուցման մանկավարժահոգեբանական (ՆԼԾ) սկզբունքները: Գործնական գրությունների ուսուցման առանձնահատկությունները: **Թեմա 5.** Հնչյունաբանության, բառակազմության, ուղղագրության, ուղղախոսության ուսուցում: Քերականության ուսուցում: Ձևաբանության ուսուցում: Անուն խոսքի մասերի (գոյական, ածական, թվական, դերանուն) ուսուցման առանձնահատկությունները: Բայ խոսքի մասի ուսուցումը: **Թեմա 6.** Շարահյուսության ուսուցման առանձնահատկությունները: Պարզ, բարդ և միակազմ նախադասությունների ուսուցումը. դրանց ընդհանրությունները և տարբերությունները: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներ: Գոյական անդամի լրացումներ. դրանց բնորոշ կետադրության ուսուցում: Բայական անդամի լրացումներ: Խնդիրների և պարագաների ուսուցումը: Դերբայական դարձվածի ուսուցման առանձնահատկությունները: Բարդ նախադասության տեսակների, կապակցման եղանակների և կետադրության ուսուցում: Ուրիշի ուղղակի և անուղղակի խոսքի ուսուցում: Կետադրությունը, կիրառությունը խոսքի մեջ:

22/Բ28- Հայ գրականության դասավանդման մեթոդիկա (5 կրեդիտ)

Շաբաթական 5 ժամ (30 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, քննություն

Դասընթացի նպատակն է հանրակրթական դպրոցի հիմնական /5-9-րդ/ և ավագ /10-12-րդ/ դասարաններում հայ գրականության դասավանդման մեթոդների ուսուցումը: Դասընթացի խնդիրն է՝ ձևավորել հանրակրթական դպրոցի ապագա ուսուցչին, զինել նրան գրականագիտական և մանկավարժական գիտելիքների ժամանակակից տեսությամբ, ծանոթացնել հանրակրթական դպրոցում հայ գրականության դասընթացի բովանդակությանը, կրթական չափորոշիչներին, ծավալին ու կառուցվածքին, պետական ծրագրերին, դասագրքերին, զարգացնել ստեղծագործական վերաբերմունք հայ գրականության ուսուցման նկատմամբ, դաստիարակել արժեքային համակարգ դեպի մայրենին, ներարկել սեր ընտրած մասնագիտության հանդեպ:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

«Հայ գրականության դասավանդման մեթոդիկա» առարկան և նրա կապը այլ գիտաճյուղերի հետ, դասավանդման և ուսուցման ժամանակակից խնդիրներն ու պահանջները,
ուսուցչին ներկայացվող պահանջները, կիրառվող մեթոդների բովանդակությունն ու նպատակայնությունը, ուսուցման երեք հիմնական խնդիրների լուծման ուղիները՝ ինչ սովորեցնել, ինչպես սովորեցնել և ինչու սովորեցնել:

Կկարողանա՝

համադրել սովորած մեթոդները, դրանք ծառայեցնել դասի նպատակի իրագործմանը, մշակել մանկավարժական նոր մոտեցումներ և հնարներ, կառուցել դասատիպեր՝ ըստ համապատասխան խնդիրների և նպատակների, իրականացնել ստեղծագործական-որոնողական աշխատանքներ, կողմնորոշվել մանկավարժական-հոգեբանական իրադրությունների մեջ, իրագործել ուսուցման հիմնական խնդիրը՝ սովորեցնել սովորել:

Կտիրապետի՝

Հայ գրականության մեթոդիկայի հիմնարար դրույթները գործնականորեն կիրառելու, յուրացված գիտելիքները տրամաբանորեն և հետևողականորեն ներկայացնելու,
նոր մանկավարժական մեթոդների կիրառմամբ հետազոտություններ կատարելու,
բարոյական արժեքներ դաստիարակելու հմտություններին և կարողություններին:

Բովանդակություն

Թեմա 1. Գրականության դասավանդման մեթոդիկան որպես առարկա, բովան-դակությունը, նպատակը, խնդիրները: Գրականության մեթոդիկայի կապն ու առնչությունները մանկավարժության, հոգեբանության, գեղագիտության, գրականության տեսության հետ: Ուսուցման ժամանակակից մեթոդներ. ԽԻԿ համակարգ, ԳՈՒՍ եղանակ: Տ-աձեվ աղյուսակ: Մ-աձեվ աղյուսակ: Պրիզմա: Մտագրոհ: Գրականության ուսուցման հիմնական մեթոդները: **Թեմա 2.** Խոսքային մեթոդներ: Ընթերցումը, պատմումը, մեկնաբանությունը, զրույցը, բանավեճը, դասախոսությունը, թեմատիկ զեկուցումները, ասմունքն ու բեմականացումն իբրև խոսքային մեթոդի տարատեսակներ: **Թեմա 3.** Գործնական մեթոդներ: Գրականության տետրում դասակարգումներ՝ կապված երկի բովանդակության, կերպարների, գաղափարների, լեզվի, ոճի յուրահատկությունների հետ: **Թեմա 4.** Զննական մեթոդներ: Շնորհանդեսներ, կինոնկարների, բեմականացումների դիտում, տուն-թանգարաններ և այլն: **Թեմա 5.** Գրականության ուսուցման հիմունքները: Գրականության ուսուցման գիտական հիմքը, նրա ամբողջականությունը, փաստերի համակարգումը. պարզից բարդը, մասնավորից դեպի ընդհանուրը: **Թեմա 6.** Գաղափար մակդիրի, համեմատության, փոխաբերության և պատկերավորման ու արտահայտչական այլ միջոցների մասին: Գրական սեռեր և ժանրեր: Գաղափար արձակի, չափածոյի և դրամատուրգիայի մասին: Գաղափար հանելուկի, առածի, ասացվածքի, հեքիաթի, առակի մասին: Գրական ստեղծագործության ձև և բովանդակություն: Ստեղծագործության թեման: Գեղագիտական իդեալ: **Թեմա 7**. Գրականության ուսուցման հիմնական ձևերը: Դասը որպես գրականության ուսուցման

հիմնական ձև: Դասի տեսակները՝ նախորդ նյութի հարցման ու ամփոփման, նոր նյութի անցման, ամրա-պնդման և համակցված դաս: Դասի տեսակը՝ կապված գեղարվեստական երկի թեմայի ոճական յուրա¬հատկությունների, արծածված գաղափարների բազմազանության, նյութի մատչելիության հետ: Կրկնության դասը և նրա տեսակները: Նախնական, անցած նյութի, թեմատիկ, ամփոփիչ կամ եզրափակիչ կրկնության դասեր: Դասապլան, դրա առավելությունն ու անհրաժեշտությունը: Գրավոր աշխատանքը իբրև դասի հատուկ տեսակ: **Թեմա 8**. Ուսուցանվող գրական նյութի և սովորողների խոսքային գործունեության փոխադարձ կապը: Արտահայտիչ պատմելու կարևորությունը բանավոր խոսքում: Գրավոր աշխատանքների նշանակությունը գիտելիքների ամրապնդման, խոսքի ձևավորման և հարստացման գործում: **Թեմա 9.** Ուսուցողական և ստուգողական աշխատանքներ, դրանց տարբերություններն ու նպատակը: Փոխադրություններ, հիմնական ու բարդ բառերի բացատրություն, պլանի կազմում: **Թեմա 10**. Շարադրությունն իբրև գրավոր աշխատանքի հիմնական տեսակ: Վերարտադրական, մեկնական, ստեղծագործական, պատմողական, բնութագրական շարադրություններ: Գործնական բնույթի շարադրություններ և գրագրություններ: Հաղորդումը, թղթակցությունը, հոդվածը, ինքնակենսագրությունը, բնութագիրն իբրև գործնական շարադրության տեսակներ: Նամակը, լիազորագիրը, դիմումը, ստացականը, տեղեկանքը, երաշխավորագիրը, քաղվածքը, արձանագրությունը: **Թեմա 11.** Տարբեր տեսակի գրավոր աշխատանքների գնահատման չափանիշները: **Թեմա 12.** Աշխատանք սխալների հիման վրա՝ դասակարգում, վերլուծություն, սխալներն ուղղելու նպատակով կատարվող վարժություններ: **Թեմա 13.** Մենագրական ու ակնարկային թեմաների տեղն ու դերը գրականության դասավանդման մեջ և ուսումնական ծրագրերում: **Թեմա 14**. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ:

22/Բ32- Հայ թատերագրությունը 20-21-րդ դարերում (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին ներկայացնել դրամատուրգիական ժանրում կատարված փոփոխությունները 1955-2000 թվականների ընթացքում և այն ձեռքբերումները, որ ունեցել է հայ գրականությունը այս ոլորտում:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Կիմանա հայ թատերագրության առանձնահատկությունները /1900-1910 ականներին: Ալեքսանդր Շիրվանզադե: Վրթանես Փափազյան: Լևոն Շանթ/:
2. Թատերագրությունը 1920-30-ականներին: Դերենիկ Դեմիրճյան:
3. Թատերագրությունը 1940-55 թվականներին: Նաիրի Զարյան: Ալեքսանդր Արաքսմանյան:
4. Թատերագրությունը 1956-1985 թվականներին: Գրիգոր Տեր Գրիգորյան, Գուրգեն Բորյան, Արամաշոտ Պապայան, Գևորգ Հարությունյան, Ազատ Շահինյան, Պերճ

Զեյթունցյան, Հրանտ Մաթևոսյան, Սաղաթել Հարությունյան, Զորայր Խալափյան, Ժիրայր Անանյան, Աղասի Այվազյան:

5. Թատերագրությունը 1985-2000 թվականներին: Նորայր Ադալյան: Հայկ Հակոբյան: Գուրգեն Խանջյան: Կարինե Խոդիկյան:

Կկարողանա՝

1. Կատարել 20-րդ դարի դրամատուրգիական երկերի վերլուծություն:
2. Ներկայացնել դրամատուրգիայի զարգացման շրջանները:
3. Կատարել Դ. Դեմիրճյանի դրամատուրգիական գործերի վերլուծություն:
4. Ներկայացնել 1956-1985 թ.թ. դրամատուրգների երկերի վերլուծություն:
5. Կատարել 1970-1980-ականների կատակերգությունների վերլուծություն:
6. Ներկայացնել 1985-2000 թվականների դրամատուրգիական երկերի վերլուծություն:

Կտիրապետի՝

1. Գրական երկի վերլուծության նրբություններին, եզրահանգումներ անել ուսումնասիրված նյութի կապակցությամբ:
2. Տարբերակել գրականության բովանդակությունը ձևից և որոշակի ստեղծագործությունների օրինակով ցույց տալ այս կամ այն գրական երկի յուրահատկությունները:

Բովանդակություն

Թեմա1. Ժանրի զարգացման շրջանները: **Թեմա2**. Գրիգոր Տեր-Գրիգորյան: **Թեմա3**.Գուրգեն Բորյան: **Թեմա4**. Արամաշոտ Պապայան: **Թեմա5.** Գևորգ Հարությունյան: **Թեմա6**. Ազատ Շահինյան: **Թեմա7**. Պերճ Զեյթունցյան: **Թեմա8.** Հրանտ Մաթևոսյան: **Թեմա9**. Սաղաթել Հարությունյան: **Թեմա10.** Զորայր Խալափյան: **Թեմա11**. Ժիրայր Անանյան: **Թեմա12.** Աղասի Այվազյան: **Թեմա13**. Հայ թատերագրությունը 1985-2000 թվականներին: Նորայր Ադալյան: Հայկ Հակոբյան: Գուրգեն Խանջյան: Կարինե Խոդիկյան:

22/Բ20- Լեզվական վերլուծության սկզբունքները (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (10 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել լեզվական տարբեր վերլուծությունների սկզբունքներին և առանձնահատկություններին՝ ըստ լեզվի տարբեր /հնչյունական, ձևույթաբանական, բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական/ մակարդակների:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Լեզվական վերլուծության նպատակը և խնդիրները, լեզվի կառուցվածքային մակարդակները,
2. Հնչյուն և հնչույթ տարբերակումը, հնչյունների տեսակները, հնչյունական վերլուծության սկզբունքները,
3. Ձևույթների սահմանումը, նրանց տեսակները, ձևույթների դերը բառերի կազմության հարցում:

4. Բառերի տեսակներն ըստ կազմության, բարդությունների տեսակներն ու կազմության առանձնահատկությունները, բառակազմական վերլուծության սկզբունքները,
5. Բառապաշարի դասակարգումները,
6. Բառերի խոսքիմասային առանձնահատկությունները, նյութական, քերականական, վերաբերմունքային իմաստ արտահայտող, թեքվող և չթեքվող խոսքի մասերի տարբերակումը, ձևաբանական վերլուծության սկզբունքները,
7. Բառակապակցության, նախադասության տեսակներն ու կառուցվածքային և փոխակերկման առանձնահատկությունները, շարահյուսական վերլուծության սկզբունքները,
8. Լեզվի մակարդակների փոխհարաբերությունները:

Կկարողանա՝

1. Ներկայացնել լեզվական վերլուծության նպատակը և խնդիրները, լեզվի կառուցվածքային մակարդակները,
2. Նշել հնչյուն և հնչույթ տարբերակումը, թվարկել հնչյունների տեսակները,
3. Գործադրել հնչյունական վերլուծության սկզբունքները,
4. Սահմանել, թվարկել և առանձնացնել ձևույթների տեսակները, ընդգծել նրանց դերը բառերի կազմության հարցում,
5. Տարբերակել բառերի տեսակներն ըստ կազմության, բարդությունների տեսակները, ցույց տալ բառակազմական վերլուծության սկզբունքները,
6. Ներկայացնել բառապաշարն ըստ դասակարգումների,
7. Ընդգծել բառերի խոսքիմասային առանձնահատկությունները, բացատրել ձևաբանական վերլուծության սկզբունքները,
8. Ցույց տալ բառակապակցության, նախադասության տեսակները, կառուցվածքային ու փոխակերկման առանձնահատկությունները,
9. Բացատրել շարահյուսական վերլուծության սկզբունքները,
10. Ցույց տալ լեզվի մակարդակների փոխհարաբերությունները:

Կտիրապետի՝

Լեզվի կառուցվածքային մակարդակները տարբերելու, հնչյունների տեսակները որոշելու, հնչյունական վերլուծության սկզբունքները բացատրելու, հնչյունական վերլուծություն կատարելու, բառապաշարը դասակարգելու, ձևույթների տեսակները առանձնացնելու, ըստ կազմության բառերը դասակարգելու, բարդությունների տեսակները որոշելու, բառակազմական վերլուծության սկզբունքները բացատրելու և բառակազմական վերլուծություն կատարելու, բառերի խոսքիմասային առանձնահատկությունները նշելու, ձևաբանական վերլուծություն կատարելու, բառակապակցության, նախադասության տեսակները տարբերելու, նրանց կառուցվածքային առանձնահատկություններն ընդգծելու, շարահյուսական վերլուծության կատարելու, լեզվի մակարդակների փոխհարաբերությունները ցույց տալու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Լեզվական վերլուծության նպատակը և խնդիրները: Լեզվի կառուցվածքային մակարդակները: **Թեմա 2.** Հնչյունական մակարդակ: Հնչյուն և հնչույթ: Հնչյունները իբրև լեզվի նյութական նվազագույն միավորներ, նրանց տեսակները: Հնչյունական

վերլուծության սկզբունքները: **Թեմա 3.** Ձևույթային մակարդակ: Ձևույթներն իբրև լեզվի իմաստակիր նվազագույն միավորներ, նրանց տեսակները: Ձևույթների դերը բառերի կազմության հարցում: Բառակազմական վերլուծության սկզբունքները: Բառերի տեսակներն ըստ կազմության: Բարդությունների տեսակներն ու կազմության առանձնահատկությունները: Բառային մակարդակ: Բառապաշարի դասակարգումները: **Թեմա 4**. Ձևաբանական մակարդակ: Բառերի խոսքիմասային Առանձնահատկությունները: Նյութական, քերականական, վերաբերմունքային իմաստ արտահայտող, թեքվող և չթեքվող խոսքի մասերի ենթարկվող բառեր: Ձևաբանական վերլուծության սկզբունքները: **Թեմա 5.** Շարահյուսական մակարդակ: Բառակապակցություն և նախադասություն: Կառուցվածքային առանձնահատկությունները: Բառակապակցությունների տեսակներն ու կառուցվածքային առանձնահատկությունները վերլուծություն կատարելիս: Փոխակերպումներ: Դերբայական դարձվածի վերլուծության սկզբունքները: Շարահյուսական վերլուծության սկզբունքները: Աշխատանք բնագրերով: Բնագրերի լեզվական վերլուծություն:

22/Բ 7 - Գեղարվեստական երկի վերլուծության սկզբունքները (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (10 ժամ դասախոսություն, 30 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ուսանողներին ընդհանուր պատկերացում տալ գեղարվեստական գրականության առանձնահատկությունների մասին, ներկայացնել գրական երկի վերլուծության հիմնական սկզբունքները, արժևորել դրանց դերը բնագրի ճիշտ ընկալման և գնահատման գործում, սովորողներին ուղղորդել՝ կատարելու ինքնուրույն վերլուծական աշխատանք:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Գեղարվեստական գրականության դերը կյանքի ճանաչողության ասպարեզում,
2. Գրականագիտության դերը հասարակական գիտությունների շարքում,
3. Գրականագիտության հիմնական հասկացություններն ու եզրույթները,
4. Գեղարվեստական երկի մանրազնին, մասնագիտական վերլուծության ձևերն ու հիմնական սկզբունքները,
5. Գեղարվեստական երկի վերլուծության արդի մոտեցումներն ու հիմնախնդիրները:

Կկարողանա՝

1. Գեղարվեստական երկը բնութագրել ըստ ժանրի, գրական սեռի և գեղարվեստական մեթոդի, ըստ ձևի և բովանդակության,
2. Ներկայացնել գրական-գեղարվեստական պատկերները, նրանց տեսակներն ու առանձնահատկությունները, գրական կերպարների տեսակներն ու առանձնահատկությունները,
3. Ներկայացնել գեղարվեստական երկի թեման, գաղափարն ու դրանց արտացոլման գեղարվեստական հնարանքները,
4. Բացահայտել գրականագիտական ընդհանուր հիմնախնդիրները,

5. Գործնականում կիրառել ստացած տեսական գիտելիքներն ինչպես ուսումնական, այնպես էլ հետազոտական աշխատանքում:

Կտիրապետի՝

1. Գեղարվեստական գրականության ուսումնասիրման հիմնական գործիքներին (հասկացություններին) և եղանակներին,
2. Գեղարվեստական ստեղծագործությունների վերլուծության հիմնական սկզբունքներին:

Բովանդակություն

Թեմա 1. Գեղարվեստական ստեղծագործության առանձնահատկությունները: Գրական երկի գիտական ուսումնասիրությունը և նրա խնդիրները: Բնագիր (տեքստ): Համատեքստ: Բանալի բառեր: **Թեմա 2.** Գրական ստեղծագործության կառուցվածքը և նրա վերլուծությունը: Գրական ստեղծագործության հյուսվածքը (նկարագրություն, պատմություն, տրամախոսություն): Բովանդակություն և ձև: **Թեմա 3**. Կոմպոզիցիայի հենակետերը: Գեղարվեստական տեքստի ուժեղ դիրքերը՝ վերնագիր, բնաբան, տեքստի և առանձին մասերի սկիզբը և վերջը (առաջին և վերջին նախադասությունները): **Թեմա 4**. Գրական ուղղություն: Հոսանք: Գեղարվեստական համակարգեր: **Թեմա 5.** Գեղարվեստական ստեղծագործության նախնական վերլուծություն. թեման, տեսակը, ոճը: **Թեմա 6**. Գրական ստեղծագործության իրազեկային (ինֆորմատիվ) և համալիր վերլուծություն: **Թեմա 7**. Գրական ստեղծագործության լեզվաբանական և ոճաբանական վերլուծություն: **Թեմա 8.**Գրական ստեղծագործության գրականագիտական վերլուծություն: **Թեմա 9**. Գրական ստեղծագործության բանասիրական վերլուծություն: **Թեմա 10**. Գրական ստեղծագործության մոտիվային վերլուծություն:

22/Բ 54 - Տեքստագիտություն (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է սովորողներին տրամադրել համակողմանի տեսական և գործնական գիտելիքներ տեքստերի կառուցվածքի և գործառական առանձնահատկությունների մասին, ծանոթացնել տեքստերի կազմման, վերլուծության, խմբագրման սկզբունքներին, նպաստել սովորողների լեզվամտածողության տարբեր ոճերի, այդ թվում մասնագիտական տեքստերի հետ աշխատելու կարողությունների զարգացմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Տեքստերի տեսակները, կառուցվածքը, կապակցման միջոցները ու եղանակները
2. Պարբերույթի և պարբերության կառուցվածքային-կիրառական առանձնահատկությունները

3. Տեքստերի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները, շարադրման և խմբագրման հետ կապված աշխատանքները /համանիշային կառույցների ստեղծում, փոխակերպումներ, վերաշարադում, սեղմում/
4. Տեղեկատվության աղբյուրների դերը (համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, տպագիր աղբյուրներ, բանավոր խոսքի տվյալներ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) գիտական շարադրանքներ կազմելու գործում
5. Տարբեր ոճերի, այդ թվում մասնագիտական տեքստերի հետ աշխատելու սկզբունքները:

Կկարողանա՝

1. ներկայացնել տեքստերի տեսակները, կառուցվածքը, կապակցման միջոցները ու եղանակները
2. գործնականում ցույց տալ պարբերույթի և պարբերության կառուցվածքային-կիրառական առանձնահատկությունները, տեքստերի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները
3. կատարել տեքստերի շարադրման և խմբագրման հետ կապված աշխատանքները /համանիշային կառույցների ստեղծում, փոխակերպումներ, վերաշարադում, սեղմում/:
4. օգտագործել տեղեկատվության աղբյուրները գիտական շարադրանքներ կազմելիս:
5. աշխատել տարբեր ոճերի, այդ թվում մասնագիտական տեքստերի հետ

Կտիրապետի՝

1. տեքստերի տեսակները, կառուցվածքը, կապակցման միջոցները ու եղանակները ներկայացնելու,
2. պարբերույթն ու պարբերությունը գործնականում տարբերակելու,
3. տեքստերի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները ցույց տալու,
4. տեքստերի շարադրման և խմբագրման հետ կապված աշխատանքները /համանիշային կառույցների ստեղծում, փոխակերպումներ, վերաշարադում, սեղմում/ կատարելու,
5. տեղեկատվության աղբյուրները գիտական շարադրանքներ կազմելու գործում օգտագործելու, մասնագիտական տեքստերի հետ:
6. լեզվական կառույցներն անհրաժեշտ ձևով վերաձևակերպելու
7. տեքստի մշակմանն առնչվող տարբեր երևույթներ մեկնաբանելու հմտությունների:
8. տարբեր ոճերի, այդ թվում մասնագիտական տեքստերի հետ աշխատելու հմտությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Տեքստը որպես ավարտուն գրավոր փաստաթուղթ: Տեքստի տեսակները, կառուցվածքը, միավորները, կապակցման միջոցները Ասույթը (ռեմա) որպես տեքստի

նվազագույն միավոր և հաղորդման տեսակետից հիմնական նորությունն ընդգրկող մաս: Ենթահիմքի և ասույթի տարբերակումը: **Թեմա 2**. Տեքստի և նրա ուղեկցող մասերի բաղադրիչները: Տեքստի կապակցման եղանակները: **Թեմա 3**. Տեքստի բովանդակային ամբողջականությունը: Պարբերույթը որպես տեքստի նվազագույն շարահյուսական իմաստակիր միավոր: Պարբերույթ և պարբերություն. կառուցվածքային-կիրառական առանձնահատկությունները: **Թեմա 4**. Տեքստերի տեսակները /ուսումնական-մանկավարժական, տեղեկատվական, աշխատանքային կամ պաշտոնական գործավարության տեքստեր/ և կիրառման ոլորտները: **Թեմա 5**. Տեքստերի կառուցվածքային և լեզվաոճական առանձնահատկությունները: Գործառական տարբեր ոլորտներին վերաբերող տեքստեր /ուսումնամանկավարժական, տեղեկատվական, աշխատանքային, քաղաքացիական գործառույթ իրականացնող, գրական-գեղարվեստական, հրապարակախոսական, գիտական տեքստեր առանձնահատկությունները/, նրանց կազմության և կիրառական առանձնահատկությունները/: **Թեմա 6**. Տեքստերի շարադրման և խմբագրման հետ կապված աշխատանքները /համանիշային կառույցների ստեղծում, փոխակերպումներ, վերաշարադրում, սեղմում/: **Թեմա 7**. Տեղեկատվության աղբյուրների դերը (համացանցային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, տպագիր աղբյուրներ, բանավոր խոսքի տվյալներ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ) գիտական շարադրանքներ կազմելու գործում: Աշխատանք տարաբնույթ, այդ թվում և մասնագիտական տեքստերի հետ:

3. 2 Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ

22/Բ 31 - Հայ էպոսագիտություն (3 կրեդիտ)
Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)
7-րդ կիսամյակ, ստուգարք
Դասընթացի նպատակն է սուսանողներին ներկայացնել հայ էպոսագիտության ձևավորման պատմությունը, <Սասնա ծռեր> էպոսի պատումների գրի առման շրջափուլերը, էպոսի աշխարհագրությունը, կառուցվածքը, ժանրային առանձնահատկությունները, պատմական և առասպելական հիմքերը, հին ու նոր վեպերի հետ ընդհանրություններն ու տարբերությունները, պատումներում գոյություն ունեցող հիմնական ճյուղերի, թեմաների, հերոսների համեմատական քննությունները ըստ Սասուն, Մոկս, Մուշ տիպաբանական խմբերի, ինչի արդյունքում ուանողը կարող է անհրաժեշտ հետևությունների հանգել:
Կրթական արդյունքները
Դասընթացի հաջող ավարտին ուսանողը
Կիմանա՝

1. «Սասնա ծռեր» էպոսի ձևավորման և գրի առնման ժամանակաշրջանի մասին,
2. էպոսի տարածման աշխարհագրությունը և կառուցվածքը,

3. էպոսի ժանրային առանձնահատկությունները,
4. ճյուղերում առկա հիմնական թեմաները, Մշո, Մոկսի, Սասունի պատումների հիմնական առանձնահատկությունները, հերոսների պատմական և առասպելական հիմքերը,
5. Ծանոթ կլինի հայ էպոսագիտության ձեռքբերումներին:

Կկարողանա՝

1. Մոկս, Մուշ, Սասուն տիպաբանական խմբերի պատումների շրջանակներում համեմատել էպոսի ճյուղերը, հերոսների շուրջ հյուսված միջադեպերը,
2. տանել զուգահեռներ «Վիպասանքի» և մյուս ավանդազրույցներում առկա նմանատիպ պատմությունների հետ,
3. փաստել այն հիմնական օրինաչափությունները, տարբերություններն ու բացառությունները, որոնք ի հայտ կգան այդ համեմատությունների արդյունքում:

Կտիրապետի՝

1. Պատումների համեմատական քննություն անելու կարողությունների,
2. կբացահայտի վիպական շարադրանքի գեղեցկությունն ու էպիկական ուժը,
3. կկարողանա վեր հանել նոր առասպելական շերտեր կամ պատմական փաստեր,
4. կարձանագրի կայուն և ոչ կայուն մոտիվների շարքերը, որոնք բնորոշ են Մոկս, Մուշ, Սասուն տիպաբանական խմբերին,
5. կկարողանա անել համապատասխան եզրակացություններ:

Բովանդակություն

Թեմա 1. <Սասնա ծռեր> էպոսի որոնումների պատմությունը: Գարեգին Սրվանձտյանի կողմից 1873թ. էպոսի 1-ին պատումի հայտնաբերումն ու գրի առնելը: Մանուկ Աբեղյանի կողմից 1876թ. էպոսի երկրորդ պատումի գրի առնելը: Հետագա տասնամյակներում պատումների գրի առման ընթացքը և շրջափուլերը, որոնցով հիմք դրվեց հայ էպոսագիտության զարգացմանը: 1930-ական թվականներին էպոսի 1000-ամյակին նվիրված հրատարակությունները և հետագա ուսումնասիրությունները: 1970-80-ական թվականներին գրի առնված պատումները և դրանց հիման վրա կատարված ուսումնասիրությունները: **Թեմա 2.** Ասացողների սեռը, տարիքը, բնակության վայրը, զբաղմունքը: **Թեմա 3.** Պատումների քննությունից ելնելով՝ վեպի աշխարհագրության որոշումը և այս հարցի շուրջ եղած կարծիքների քննությունը: Արևմտյան Հայաստանի Վան, Մուշ, Մոկս, Շատախ, Սասուն և շրջակա այլ տարածքներում էպոսի աշխարհագրությունը և տարածման հանգամանքները Արևելյան Հայաստանում: **Թեմա 4.** Ասացողների կողմից վկայված 40 կամ 7 ճյուղերի մասին: Ողորմիս-նախերգանքները որպես էպոսի ճյուղերի և <Սասնա տան> ծննդաբանության, տոհմածառի, ավագության կարգի որոշողները էպոսում: <Սասուցի Դավիթ> էպոսի 4 ճյուղերի գոյությունը: **Թեմա 5.** էպոսի տարբերությունները բանահյուսական այլ ժանրերից /առասպել, վիպերգ, հեքիաթ և այլն/: Էպոսներին, մասնավորապես, <Սասնա ծռեր> էպոսին բնորոշ ժանրային առանձնահատկությունները /հերոսական ոգին, առասպելական հիմքը, պատմական հիմքը, ժողովրդայնությունը/: **Թեմա 6.** Հայկական հնագույն էպոսի՝ <Վիպասանքի>, առասպելների՝ <Հայկ և Բել>, <Արամ>, <Արա Գեղեցիկ և Շամիրամ> և այլն, ավանդազրույցների, վիպերգերի ու հավատալիքների արձագանքները էպոսում:

Խմբամուսնություն-մենամուսնություն, մայրիշխանություն-հայրիշխանություն, հեթանոսություն-քրիստոնեություն անցումների դրսևորումները վեպում, հին վեպի մնացորդները նորի մեջ: **Թեմա 7.** Պատումներում գոյություն ունեցող հիմնական թեմաների, Ճյուղերի նմանությունների և տարբերությունների դրսևորումները Մոկս Մուշ, Սասուն տիպաբանական խմբերում: **Թեմա 8.** Առաջին՝ <Սանասար և Բաղդասար> ճյուղի քննությունը պատումների Մոկս Մուշ, Սասուն տիպաբանական խմբերում:. Ծովինարի ամուսնությունը կռապաշտ թագավորի հետ: Երկվորյակ եղբայրների առասպելի արձագանքները վեպում, նրանց ջրային ծնունդը, մանկությունը, բերդ հիմնելը, խալիֆի հետ կռիվը, ամուսնությունը, որդիների ծնունդը, մահը: **Թեմա 9.** Երկրորդ՝ <Մեծ Միհրի> ճյուղի քննությունը պատումների Մոկս Մուշ, Սասուն տիպաբանական խմբերում: Մեծ Միհրի ճյուղը պատումներում: Մեծ Միհրի դիցաբանական ակունքները, Միհր և արևի աստված Միհր: Միհրի ծնունդը, մանկությունը, կռիվը առյուծի հետ, ամուսնությունը, Մըսր գնալ-գալը, Մելիքի ծնունդը, կնոջ երդմնազանցությունը, Դավթի ծնունդը, Միհրի և կնոջ մահը: **Թեմա 10.** Երրորդ՝ Դավթի ճյուղի քննությունը պատումների Մոկս Մուշ, Սասուն տիպաբանական խմբերում: Դավթի կերպարի պատմական հիմքը և դիցաբանական ակունքները: Միջնադարյան մտածողության ազդեցությունը կերպարի վիպական հորինվածքի վրա: Դավթի մանկությունը Մսրում, Դավիթը Սասունում, շինարարությունը, հոր զենքերի ձեռքբերումը, հզորանալը, կռիվը Մսրա Մելիքի հետ, ամուսնությունը Խանդութի հետ, հոր և որդու կռիվը, որդուն անիծելը, մահը: **Թեմա 11.** Չորրորդ՝ <Փոքր Միհրի> ճյուղի քննությունը պատումների Մոկս Մուշ, Սասուն տիպաբանական խմբերում: Փոքր Միհրի դիցաբանական ակունքները. Միհր և Միհր: Փոքր Միհրի երկվությունը: Ժայռում փակվող կամ ժայռին գամված հերոսի առասպելի արձագանքները էպոսում: Փոքր Միհր և Արտավազդ: Փոքր Միհրի ծնունդը, մանկությունը, թափառումները, կռիվները թափառումների ընթացքում, մենամարտը Գոհար խաթունի հետ, անժառանգ և անմահ մնալը, Ագռավաքարում կամ ժայռում փակվելը: **Թեմա 12.** Քեռի Թորոսի, Ձենով Հովանի, Վերգոյի, Մսրա Մելիքի պատմական և դիցաբանական ակունքները: Նրանց շուրջ հյուսված մոտիվների քննությունը Սասնա, Մշո, Մոկսի պատումների տիպաբանական խմբերում: **Թեմա 13.** Կանանց կերպարները էպոսում. Ծովինար, Դեղձուն ծամ, Արմաղան, Խանդութ, Գոհար, Իսմիլ խաթուն, Չմշկիկ Սուլթան, Սառյե: Նշված կերպարների համեմատական քննությունը պատումների Մոկս Մուշ, Սասուն տիպաբանական խմբերում: **Թեմա 14.** Պառավի կերպարի զարգացումները էպոսի 4 ճյուղերում և համեմատական քննությունը 3 տիպաբանական խմբերում: **Թեմա 15.** Ջրի, ձիու, թրի, հերոսների հագուստի մասերի՝ գոտի, շապիկ, գդակ, ոտնաման, աստվածային նշանների՝ Խաչ պատրազին և այլն, դերն ու նշանակությունը էպոսում: **Թեմա 16.** էպոսի սոցիալական միջավայրը, ժողովրդի կենցաղը, հերոսների զբաղվածությունը: էպոսի ազգային և համամարդկային գծերը:

22/Բ 55 - Օտարալեզու հայ գրողներ (3 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ (30 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական)

7-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է ներկայացնել աշխարհի տարբեր գաղթոջախներում սկիզբ առած սփյուռքի գրական շարժումը, որն ունեցել է զարգացման մի քանի փուլ, սփյուռքահայ գրականության գլխավոր թեմաներն ու խնդիրները և հայկական ծագում

ունեցող արտասահմանյան գրողների չափածո, արձակ և դրամատիկական ստեղծագործությունները:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Սփյուռքահայ գրականության ձևավորման պատմական հիմքերը, զարգացման շրջանները և հիմանական կենտրոնները,
2. Հայկական գաղթօջախների պատմությունը,
3. Գրականության հատկանիշները և ընդգրկման սահմանները,
4. Հայազգի օտարագիր գրողներին, նրանց ստեղծած գրական ժառանգությանը, արծարծած թեմաներին:

Կկարողանա՝

1. Գրական երկերը գնահատել ըստ արժանվույն՝ դրանց ստեղծման պայմաններով ու նշանակությամբ,
2. Համեմատել և հակադրել հայ ժողովրդի երկու հատվածների գրական իրականությունները՝ դրանք անաչառ ու օբյեկտիվ մեկնաբանելով:

Կտիրապետի՝

1. Մեկնաբանել օտարագիր հայ գրականությունը՝ նրան վերաբերվելով պատշաճ ըմբռնումով՝ չօտարելով գրական ընդհանուր գործընթացից:

Բովանդակություն

Թեմա 1. Սփյուռքահայ գրականության սկզբնավորման ժամանակաշրջանը: Սփյուռքահայ գրականության հատկանիշները: **Թեմա** 2. Գրականության հիմնական թեմաներն ու խնդիրները: Գրական ուժերը գաղթօջախներում: **Թեմա** 3. Գործնական պարապմունք: **Թեմա** 4. Հայազգի օտարազգի գրողներ. Հրանտ Նազարյան,Արմեն Տորյան, Արմեն Լյուբեն, Ռուբեն Մելիք, Շառլ Ազնավուր, Վահե Գոդել: **Թեմա** 5. Լեվոն-Զավեն Սյուրմելյան, Մայքլ Առլեն, Վահե Քաչա, Սեվդա Սեվան, Արթուր Ադամով: **Թեմա** 6.Վարուժան Ոսկանյան: 'Շշուկների մատյան' վեպը: **Թեմա** 7.Պիտեր Բալաքյան. 'Ճակատագրի սև շունը' վեպը: **Թեմա** 8. Անտոնիա Արսլանի 'Արտույտների ագարակը' և Մշո Ճառընտիր վեպերը: **Թեմա** 9. Քրիս Բոհջալյանի 'Ավազե ամրոցի աղջիկները' վեպը:

23/Բ7-Ընտանեկան կյանքի և սոցիլական հոգեբանություն- (2 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացը նպատակ ունի ընդլայնել ուսանողների մասնագիտական հոգեբանական գիտելիքների շրջանակը, նպաստել ուսանողների մոտ մասնագիտական և միջանձնային արդյունավետ փոխհարաբերությունների կառուցման համար անհրաժեշտ հոգեբանական հմտությունների ձևավորմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. Անձի և սոցիալական միջավայրի փոխհարաբերության առանձնահատկությունները,
2. խմբային և անհատական գործընթացների, ընտանիքի՝ որպես սոցիալական խմբի սեռական դաստիարակության հոգեբանական առանձնահատակությունները,
3. ծնող-երեխա փոխհարաբերությունների օրինաչափությունները:

Կկարողանա՝

1. Քննարկել և բացահայտել ընտանեկան փոխհարաբերությունները, միջանձնային հարաբերությունները, ընտանեկան կոնֆլիկտները, դրանց սոցիալական պատճառները:

Կտիրապետի՝

1. Ծնողավարման հմտություններին,
2. միջանձնային կոնֆլիկտների կանխարգելման և կարգավորման մեթոդներին:

Բովանդակություն

Թեմա 1. Սոցիալական հոգեբանության առարկան, խնդիրները, սոցիալական հոգեբանության մեթոդաբանությունը և մեթոդներ: **Թեմա 2.** Հասարակական և միջանձնային հարաբերություններ, սոցիալական խմբերի հոգեբանական բնութագիրը (մեծ և փոքր խմբեր): **Թեմա 3**. Փոքր խմբերի հոգեբանություն, մեծ խմբեր (դասակարգերի և ազգի հոգեբանություն): **Թեմա 4**. Զանգվածների հոգեբանություն: **Թեմա 5**. Ընտանիքի զարգացման պատմությունը: Ընտանիք եվ ամուսնություն: Ընտանիքը մարդկային խմբի տեսակ: **Թեմա 6.** Ընտանիքի կառքուցվածքը և տեսակները, Ժամանակակից ընտանիքի ֆունկցիաները: Ամուսնական հարաբերություններ: **Թեմա 7**. Նախաամուսնական հարաբերություններ: Ամուսնաընտանեկան կյանքի փուլերը: Հուզական հարաբերություններ: **Թեմա 8.** Կնոջ և տղամարդու փոխհարաներությունները: Ամուսնական հարաբերությունները և նրանց փոփոխությունները: Ծնող-երեխա փոխհարաբերություններ:

23/Բ9 - Կիրառական մանկավարժություն (2 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (20 ժամ դասախոսություն, 10 ժամ սեմինար)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Դասընթացի նպատակն է նպաստել մանկավարժական գործընթացում ապագա դասվարների՝ մանկավարժական իրավիճակները բազմակողմանի վերլուծելու, մանկավարժական խինդիրներ նախագծելու և լուծելու, կրտսեր դպրոցականի տարիքային առանձնահատկություններին համապատասխան նրա անձի զարգացման գործընթացը պլանավորելու, հետազոտական աշխատանքները կազմակերպելու գործնական հմտությունների զարգացմանը:

Կրթական արդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. «Կիրառական մանկավարժություն» դասընթացի առարկան, նպատակը, խնդիրները, առարկայի տեղը և դերը մանկավարժական գիտությունների համակարգում, կապը այլ գիտությունների հետ, մանկավարժության կիրառական ոլորտները,
2. մանկավարժական հաղորդակցման առանձնահատկություններն ու արդյունա-վետության պայմանները,
3. ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները, նպատակահարմարության որոշման սկզբունքները,
4. մանկավարժական գործընթացի կազմակերպման ոճերը, ուսումնառողներին ճանաչելու հոգեբանական միջոցներն ու հնարները:

Կկարողանա՝

1. պլանավորել և իրականացնել գործնական հմտությունների զարգացմանն ուղղված մանկավարժական գործունեություն,
2. ապահովել տեսության և պրակտիկայի կապը գործնականում,
3. լուծել պրոբլեմային իրավիճակներում առաջացող մանկավարժական խնդիրները,
4. արդյունավետ հաղորդակցվել մանկավարժական գործընթացում,
5. ընտրել դասավանդվող Թեմային համապատասխան մանկավարժական տեխնոլոգիաներ,
6. ձևավորել և զարգացնել աշակերտների գործնական կարողություններն ու հմտությունները,
7. իրականացնել ուսումնառողների խմբի մանկավարժական դիագնոստիկա, կանխատեսում, նախագծում, մոդելավորում, կազմել պլաններ թեմատիկ, օրվա դասի, ուսումնադաստիարակչական, աշխատանքային պլաններ և այլն:

Կտիրապետի՝

1. մանկավարժական գործընթացի կազմակերպման հաղորդակցական, մանկավարժական, հոգեբանական հնարների ու միջոցների,
2. մանկավարժական իրավիճակների վերլուծության, խնդիրների առաջադրման, ըստ նպատակահարմարության լուծման ուղիների ընտրության և կիրառման, արդյունքների գնահատման, ռեֆլեքսիվության կարողությունների:

Բովանդակություն

Թեմա 1. Ընդհանուր հասկացություն կիրառական մանկավարժության մասին: **Թեմա 2.**__Մանկավարժի գործնական գիտելիքների, կարողությունների, հմտությունների նկարագիրը: **Թեմա 3**. Մանկավարժական գործունեության մեթոդաբանությունը: **Թեմա 4.**_Մանկավարժական իրավիճակ և խնդիր: **Թեմա 5.** Մանկավարժական խնդիրների լուծման մեջ մանկավարժի հաղորդակցական ոճի առանձնահատկություններն ու նշանակությունը:**Թեմա 6.** Կոնֆիլիկտները մանկավարժական իրավիճակներում: **Թեմա 7.** Նախագծային մեթոդը, որպես գործնական հմտությունների զարգացման և կիրառման արդյունավետ գործիք: **Թեմա**

8. Խաղային տեխնոլոգիաները գործնական հմտությունների զարգացման գործընթացում: **Թեմա 9.** Թրենինգները, թրենինգ-սեմինարները՝ որպես ոլորտային հմտությունների զարգացման արդյունավետ միջոցներ: **Թեմա 10.** Մանկավարժի վալեոլոգիա:

4. Կրթական այլ մոդուլներ

Ուսումնական պրակտիկա - 1 (5 կրեդիտ)
Տևողությունը՝ 5 շաբաթ
4-րդ կիսամյակ, ստուգարք
Նպատակը.
Պրակտիկայի հիմնական նպատակն է ապահովել ուսանողների տեսական գիտելիքների գործնական կիրառումը և նրանց մասնագիտական կողմնորոշումը դպրոցական միջավայրում:

1. Ճանաչողական նպատակ: Ծանոթանալ կրթական հաստատության կառուցվածքին, ներքին փաստաթղթերին և դրանց բովանդակությանը, ինչպես նաև ուսումնադաստիարակչական գործընթացների կազմակերպման առանձնահատկություններին:
2. Գործնական նպատակ: Զարգացնել մանկավարժական դիտարկման, տվյալների հավաքագրման (մանկավարժական թղթապանակի ձևավորում) և վերլուծության հմտությունները:
3. Կազմակերպչական նպատակ: Ձևավորել ապագա ուսուցչի մոտ դաստիարակչական միջոցառումների պլանավորման և դպրոցի ավագ ընկերների (ուսուցիչների) փորձի ընդօրինակման կարողություններ:
4. Անձնային/Պատասխանատվության նպատակ: Դաստիարակել երեխաների կյանքի, առողջության և անվտանգության նկատմամբ պատասխանատվության բարձր զգացում, ձևավորել անհրաժեշտ հոգեբանամանկավարժական որակներ և շփման էթիկա:

Կրթական արդյունքները
Պրակտիկայի ավարտին ուսանողը
Կիմանա՝

- Դպրոցը որպես հոգեբանամանկավարժական ամբողջական միջավայր և դրա բաղադրիչները:
- Մանկավարժական հետազոտության հիմնական մեթոդները (դիտում, զրույց, թեստավորում և այլն) և դրանց կիրառությունը դասղեկի աշխատանքում:
- Դասղեկի ուսումնադաստիարակչական աշխատանքի առանցքային մեթոդները՝ աշակերտների բազմակողմանի զարգացման ապահովման ուղղությամբ:
- Ուսուցչի մանկավարժական գործունեության կառուցվածքը (նպատակ, խնդիրներ, բովանդակություն, մեթոդներ, արդյունք):
- Դպրոցի հիմնական փաստաթղթերի (օրինակ՝ դպրոցի կանոնադրություն, դասղեկի պլանավորում, ներքին կարգ ու կանոն) բովանդակությունը և կառուցվածքը:

- Աշակերտների հետ շփման արդյունավետ ոճերը և հոգեբանամանկավարժական մոտեցումները:

Կկարողանա՝

- Պլանավորել և կազմակերպել դաստիարակչական միջոցառումներ (դասղեկի ժամ, քննարկում, էքսկուրսիա և այլն):
- Վարել մանկավարժական օրագիր և պրակտիկայի ընթացքում կատարած աշխատանքը ենթարկել վերլուծության և ինքնագնահատման:
- Կիրառել ուսուցչի գործունեության և աշակերտների վարքի դիտարկման հմտությունները՝ ֆիքսելով դիտարկման արդյունքները:
- Հավաքագրել, դասակարգել, ներկայացնել, քննարկել և մեկնաբանել մանկավարժական թղթապանակում առկա հոգեբանամանկավարժական տվյալները:
- Արդյունավետ կերպով համագործակցել դպրոցի ուսուցչական կազմի և դասղեկի հետ:

Կտիրապետի

- Հանրակրթության եզրույթների գիտակցված վերարտադրմանը և կիրառմանը (օրինակ՝ ուսումնական ծրագիր, դասղեկ, կոմպետենցիա, ինտեգրացիա):
- Մանկավարժական նշանակալի փաստերը և ուսումնադաստիարակչական գործընթացները հասկացություններով, սկզբունքներով և օրենքներով (օրինակ՝ ՀՀ Կրթության մասին օրենք) ներկայացնելուն և հիմնավորելուն:
- Սեփական աշխատանքները և դիտարկումները մասնագիտական լեզվով գրավոր և բանավոր ներկայացնելու հաղորդակցական հմտություններին:

Մանկավարժական պրակտիկա (6 կրեդիտ)

6-րդ կիսամյակ, ստուգարք

Պրակտիկայի նպատակը

1. ձևավորել մասնագիտական կարողություններ, հմտություններ, որոնք անհրաժեշտ են դպրոցում հաջողությամբ աշխատելու համար,
2. ընդլայնել ապագա ուսուցչի ընդհանուր մասնագիտական գիտելիքները և կարողությունները, դրանք դարձնելով կիրառական հմտություններ,
3. նպաստել ուսուցչի, մասնագիտական գործունեությունը պատշաճ մակարդակով իրականացնելու որակների ձևավորմանը,
4. զարգացնել ուսանողների՝ ակտիվ մանկավարժական գործունեություն պլանավորելու, իրականացնելու, արդյունքներն ամփոփելու և գնահատելու կարողություններ,
5. ուսանողներին մասնակից դարձնել մանկավարժական համակողմանի գործունեությանը:

Կրթական արդյունքները

Պրակտիկայի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. ուսումնական հաստատությունների և կրթության բնագավառի աշխատողների մանկավարժական գործունեությունը, բովանդակությունը և կառուցվածքը,
2. ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, մանկավարժական հետազոտական գործունեություն իրականացնելու ձևերը:

Կկարողանա՝

1. ընդգրկվել ուսումնական հաստատությունների և կրթության բնագավառի աշխատողների մանկավարժական գործունեության ոլորտում,
2. նորագույն մոթոդներով դասեր վարել,
3. կիրառել գնահատման տեսակները և գործիքները,
4. աշխատել մանկավարժական գործունեության առաջնային կարողունակությունները զարգացնելու ուղղությամբ,
5. իրականացնել ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, մանկավարժական հետազոտական գործունեություն:

Կտիրապետի

1. կտիրապետի ուսումնական հաստատություններում և կրթության բնագավառում մանկավարժական գործունեություն իրականացնելու տարբեր ուղիներին,
2. կունենա ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, մանկավարժական հետազոտական գործունեություն իրականացնելու հմտություններ:

Մանկավարժական պրակտիկա (6 կրեդիտ)

8-րդ կիսամյակ, քննություն

Պրակտիկայի նպատակը

- ուսանողներին նախապատրաստել կրթական հաստատություններում կրթադաստիարակչական գործունեություն ծավալելուն,
- հարստացնել ապագա ուսուցիչների մասնագիտական կարողությունները՝ ընդգրկելով նրանց մանկավարժական ակտիվ գործընթացի մեջ,
- նպաստել մանկավարժ մասնագետի իմացական և բարոյակամային որակների ձևավորմանը,
- ընդլայնել ապագա ուսուցչի ընդհանուր մասնագիտական գիտելիքները և կարողությունները, դրանք դարձնելով կիրառական հմտություններ,
- պարզաբանել դաստիարակչական գործունեության յուրահատկությունները, համակազմի առանձնահատկությունները /աշակերտ, ուսուցիչ, դասղեկ, ուսումնական գծով տնօրենի տեղակալ, տնօրեն/,
- նպաստել ընտանիք-դպրոց փոխադարձ կապի զարգացմանը /կազմակերպել հանդիպումներ ծնողների հետ, հանդես գալ զեկուցումներով/,
- ապագա ուսուցչի տեսական գիտելիքների փոխանցումը գործնական կարողությունների կիրառման դաշտ,
- նպաստել աշակերտների սովորելու հետաքրքրությունների զարգացմանը,
- կարողանալ կազմել աշակերտների բնութագիր,

- ուսումնասիրել և գնահատել մանկավարժական գործընթացը, կատարել ինքնագնահատում, փոխադարձ գնահատում
- ուսումնասիրել աշակերտական կոլեկտիվում ձևավորվող միջանձնային հարաբերությունները,
- մասնակցել առարկայական մեթոդական միավորումների նիստերին և ծնողական ժողովներին,
- ապագա ուսուցչին ուղղորդել կատարելու մանկավարժական դիտարկումներ, հետազոտություններ և ուսումնասիրել ուսուցիչների մանկավարժական փորձը,
- ծանոթանալ դպրոցում աշակերտների հետ տարվող արտադասարանային /ֆակուլտատիվ պարապմունքներ, խմբակներ/ և արտադպրոցական /օլիմպիադա և այլն/ աշխատանքներին,
- ուսումնասիրել փաստաթղթերը /թեմատիկ և դասի պլան, առարկայական չափորոշիչ և ծրագիր, աշակերտների անհատական ուսուցման պլաններ, բնութագրեր և այլն/

Կրթական արդյունքները

Պրակտիկայի ավարտին ուսանողը

Կիմանա՝

1. ուսուցչի կողմից օգտագործվող աշակերտի անձի ուսումնասիրման մեթոդները,
2. ուսուցչի կողմից իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների բազմազան ձևերը, մեթոդները, հնարները, եղանակները աշակերտների բազմակողմանի զարգացման ուղղությամբ,
3. ուսումնական պլանը, առարկայական ծրագիրը, դասագիրքը վերլուծելու մեթոդներն ու եղանակները,
4. ուսուցչի կողմից ուսուցման կրթական, դաստիարակող, զարգացնող գործառնությունների իրականացման եղանակները,
5. ուսուցչի կողմից աշակերտների ուսումնաճանաչողական գործունեության տարբեր փուլերում ուսուցման մեթոդների և հնարների կիրառման պայմանները և ձևերը,
6. էքսկուրսիաների տեսակները, դրանց կազմակերպման և անցկացման մեթոդիկան,
7. աշակերտների ճանաչողական հետաքրքրությունները և ուսումնառության դրդապատճառները,
8. տնային ուսումնական աշխատանքների տեսակները և դրանց կատարման ինքնուրույնության աստիճանի որոշելը,
9. ուսուցչի կողմից դաստիարակչական աշխատանքի պլանավորումը,
10. դաստիարակչական աշխատանքի բովանդակությունը և կառուցվածքը,
11. դաստիարակության գործընթացի իրականացման մեթոդները, միջոցները և ձևերը,
12. աշակերտական կոլեկտիվի զարգացման մակարդակները և դրա ձևավորման ուղղությամբ ուսուցչի գործունեության առանձնահատկություններն ու մեթոդները,
13. ծնողների հետ տարվող աշխատանքների բովանդակությունը և ձևերը:

Կտիրապետի՝

1. Մանկավարժական պրակտիկայի անցման ժամանակահատվածում սեփական գործունեությունը պլանավորելու հմտությունների,
2. ուսուցչի ուսունադաստիարակչական գործունեությունը դիտելու և վերլուծելու կարողությունների,
3. աշակերտների գործունեությունը դիտելու և վերլուծելու, դիտումների արձանագրություններ կազմելու հմտությունների,
4. աշակերտի անձի ուսումնասիրման հետազոտական մեթոդների կիրառության,
5. դասի ընթացքը արձանագրելու, դրանք ըստ առանձին բաղադրամասերի վերլուծելու կարողությունների,
6. աշակերտների հետ ուսումնադաստիարակչական աշխատանքի կազմակերպման մեթոդների, միջոցների և ձևերի կիրառման,
7. աշակերտական կոլեկտիվի զարգացման մակարդակի որոշման և կոլեկտիվի ձևավորման հարցում ուսուցչի գործառույթների իրականացման հմտությունների,
8. աշակերտների մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական և աշխատանքային դաստիարակության ուղղությամբ տարվող միջոցառումների կազմակերպման և անցկացման ձևերը ներկայացնելու կարողությունների,
9. աշակերտական կոլեկտիվների հետ ստեղծագործական աշխատանքների կազմակերպման և անցկացման հմտությունների:

Բակալավրի կրթական ծրագրի բովանդակությունը՝ ըստ կոմպետենցիոն կազմի

	կրեդիտ	Կոմպետենցիաներ																							
		Մասնագիտական									Գործնական									Ընդհանրական					
		Ա1	Ա2	Ա3	Ա4	Ա5	Ա6	Ա7	Ա8	Ա9	Բ1	Բ 2	Բ 3	Բ 4	Բ 5	Բ 6	Բ 7			Գ1	Գ2	Գ 3	Գ4	Գ5	Գ6
Ռուսաց լեզու	3+3+3																			+					
Օտար լեզու (անգլերեն)	3+3+3																			+					
Հայոց պատմության հիմնահարցեր	3+3																				+				
Տրամաբանության հիմունքներ	3																			+		+			
Իրավագիտության հիմունքներ	3																					+			
Փիլիսոփայության հիմունքներ	3																				+	+			
Հետազոտության մեթոդաբանություն	3					+																		+	
Կրոնագիտության հիմունքներ	3																				+				
Ֆիզիկական դաստիարակություն	0																						+		
Քաղաքագիտության հիմունքներ	3																				+				
Մշակութաբանության հիմունքներ																					+	+			
Տնտեսագիտության հիմունքներ																					+				
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հիմունքներ	3																							+	+
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	3																						+		
Բնագիտության ժամանակակից հայեցակարգեր	3																						+		

		Ա.1	Ա.2	Ա.3	Ա.4	Ա.5	Ա.6	Ա.7	Ա.8	Ա.9	Բ1	Բ 2	Բ 3	Բ 4	Բ 5	Բ 6	Բ 7			Գ1	Գ2	Գ 3	Գ4	Գ5	Գ6
Սոցիոլոգիա																							+	+	+
Ընդհանուր մանկավարժություն	3+3									+						+									+
Մանկավարժություն/Հոգեբանություն՝ կուրսային աշխատանք	1									+						+				+					+
Ներառական կրթության հիմունքներ	3									+						+									+
Ընդհանուր հոգեբանություն	3+3	+	+		+					+	+	+				+						+			
Ժամանակակից հայոց լեզու՝ հնչյունաբանություն	4	+				+					+	+	+			+				+					
Ժամանակակից հայոց լեզու՝ բառագիտություն	4	+									+	+	+			+				+					
Ժամանակակից հայոց լեզու՝ ձևաբանություն	4+4	+									+	+	+			+				+					
Ժամանակակից հայոց լեզու՝ շարահյուսություն	4+5	+									+	+	+			+				+					
Ոճագիտություն	5	+				+					+		+			+				+					
Լեզվաբանության հիմունքներ	5	+			+						+	+													
Գրաբար	3+3	+									+	+	+												
Միջին հայերեն	3	+									+	+	+												
Արևմտահայերեն	4	+									+	+	+												
Բարբառագիտություն	4	+		+							+	+	+												
Հայոց լեզվի պատմություն	4+4	+	+		+						+	+													
Հայ ժողովրդական բանահյուսություն	3					+	+						+	+											
Հայ գրականության պատմություն՝ հին և միջնադարյան շրջաններ 1	4					+	+						+	+							+				
Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դար	4+4					+	+						+	+							+				
Հայ գրականության պատմություն՝ 19-րդ դարավերջ-20-րդ դարասկիզբ	4+4					+	+						+	+							+				

		Ա.1	Ա.2	Ա.3	Ա.4	Ա.5	Ա.6	Ա.7	Ա.8	Ա.9	Բ1	Բ 2	Բ 3	Բ 4	Բ 5	Բ 6	Բ 7			Գ1	Գ2	Գ 3	Գ4	Գ5	Գ6
Հայ գրականության պատմություն՝ նորագույն շրջան 6	5+5					+	+						+	+							+				
Հայ գրաքննադատության պատմություն	4					+	+		+					+	+						+				
Արտասահմանյան գրականության պատմություն՝ անտիկ դարաշրջան	3					+		+					+	+	+										
Արտասահմանյան գրականության պատմություն՝վերածննդի դարաշրջան	3					+		+					+	+	+										
Արտասահմանյան գրականության պատմություն՝ 17-19-րդ դարեր	3					+		+					+	+	+										
Արտասահմանյան գրականության պատմություն՝ 20-րդ դար	3					+		+					+	+	+										
Ռուս գրականության պատմություն	4					+		+					+	+	+										
Գրականության տեսություն	4					+	+	+	+				+	+	+		+								
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա	5										+	+				+									
Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա՝ կուրսային աշխատանք	1					+					+	+				+								+	
Հայ գրականության դասավանդման մեթոդիկա	5																								
Հայ գրականության դասավանդման մեթոդիկա՝ կուրսային աշխատանք	1					+							+	+		+								+	
Հայ թատերագրությունը 20-21-րդ դարերում	4					+	+						+	+											
Լեզվական վերլուծության սկզբունքները	4					+							+				+								
Գեղարվեստական երկի վերլուծության սկզբունքները	4					+		+					+	+	+		+								
Տեքստագիտություն	4					+						+	+				+								
Հայ էպոսագիտություն	3					+	+						+	+											
Օտարալեզու հայ գրողներ						+	+						+	+											
Կիրառական մանկավարժություն	2									+						+									+

Ընտանեկան կյանքի և սոցիալական հոգեբանություն										+						+									+
Ուսումնական պրակտիկա	5									+	+	+	+	+	+	+									+
Մանկավարժական պրակտիկա	6+6							+		+	+	+	+	+	+	+									+
Ամփոփիչ ատեստավորում՝ Ավարտական աշխատանքի պաշտպանություն	8							+		+	+	+	+	+	+	+									+